



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.


պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

6232



1886

2012

9(58)
4-65

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ԽՍՄԱՆԵԱՆ

Ի ՊԵՏԱ ԱԶԳԱՅԻՆ ՎԱՐԺԱՐԱԿԱՑ


ՅԱՆՉՆԱՐԱՐԵԱԼ
ՅՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ԱԶԳ. ԿԵԴՐ. ՎԱՐՉՈՒԹԵԱՆ

— 303 —

Յօրինեաց
ՄԻՔԱՅԼ ԱՇՃԵԱՆ

Մարտ Նշան Հայոց Տէղական Տէղական Տէղական
Մարտ Նշան Հայոց Տէղական Տէղական
Մարտ Նշան Հայոց Տէղական Տէղական



Կ. ՊՈՂԻՄ
ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԶԱՐԴԱՐԵԱՆ
1886

ՊԱՏՐԻԱՐԿԱՐԱՆ ՀԱՅՈՅ

Ի ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

Ազգային կելլրանական վարչութեան Ռևոլմ-
նական Խորհուրդս իւր Օժանդակ Քննիչ յանձնա-
խըմքի միջոցաւ քննելով Հասարակաց կրութեան
պաշտօնատան բարգման Աշխատան Մէծ. Միքայէ-
լինտիքի Երկասիրած «Օսմանեան Պատմութիւն»
անուն դասագիրքն, գոհացուցիչ եւ օգտակար գլ-
ուտաւ : Հետեւապէս կը յանձնարարէ Ազգային վար-
ժարանաց Պատուարժան Հզգարձութեանց, Ցես-
չաց եւ Ռևոլմցաց որ սերունին նոյն դասագիրքն
իրենց բարձրադոյն Նախակրարաւանաց եւ Ռևոլմ-
նարանաց մէջ ի գործածութիւն, համաձայն բա-
րեկարգութեան Հրամանի Ազգային վարժարանաց :

՚ի Դիմաց Ուսումնական Խորհրդոյ
Ազգային Կեղրութեական Վարչութեան

Առենադպիր Առենադպիտ
Ա. ՓԱԳԱԶԵԱՆ Կ. Ս. ԷԿԹԻՒՃԵԱՆ


8 Օգոստ. 1886

՚ի Պատրիքի Հայոց

Կ. Պոլիս

Կնիք

ՅԱՌԱՋԱԲԱՆ



Եթէ ուսումնական ապարհօք մոնղ տնօսնց անհրաժեշտ նարի և իրենց ուսմանց կարգին մէջ դասել Առ եւ ամենահիմն ազգայ պատմութիւնն եւ քաջ սովորի զայն, որքափ եւս առանձ նարկ և անոնց մօտառը, մանաւանդ իրենց բնակած երկրին կամ հայրեննաց վըրաց տիրող ազգին պատմութեան տեղեակ լինել: Զայն հարկ ամեն ժամանակ անշատ էն կրթեալ ժողովուրդը, եւ այս պատմառա իրենց Ազգային պատմութիւնն ուսուցանելի յետոյ, իրենց երկրին վրայ տիրող ազգին պատմութիւնը կ'առանցնել:

Նոյնպէս մեր ազգն՝ որ գրեթէ վեց դարէ հնատէ մեծան մասամբ Օսմաննան մեծազօր տէրութեան հայտակ կը գտնուի, անշատ էր, մանաւանդ այս վերջին ժամանակներս, երբ ամենայն փոխով կը ջանայ իր որդիրն ուսմանց եւ գիտութեանց մէջ կրթելով երրուստական կրթեալ ազգայ աստիճանը բարձրացնել, թէ իր ուսմանց ընթացքին մէջ պակաս մաս մը կայ, այսինքն՝ ուսումն Օսմաննան պատմութեան. սակայն չունենալով ի ձեռին այնպիսի դասագիրը մը որ այս նպատակին ժա-

ոսյէր, շուարսծ էր: Կայիմ, այս՝ ազգին մէջ Օսմանեան
Պէտողթեան պատմութիւնը, քայց կամ իրենց լեզուին
եռ շնդարձակութեան պատճառաւ, եռ կամ սիստ մաս-
նաւոր թագաւորի կամ դէպրի մը պատմութիւնը լինե-
լով կարող չէին իբրեւ դառագիրը ծառայել:

Այս պակասը տեսնելով եռ բանի մը նշանաւոր
անձնանց բաղնանքը գոհացնելով ուղեղով՝ ձեռնարկեցինք այս
մատեան իրոց ընծայելու, ո՞ր համառութեան հետ առ
եռ ամբողջութիւն ունի եռ կրնայ ամեն կերպով գոհ ը-
նել թէ՛ ուսանողն եռ թէ՛ ուսուցիչը: Կը յուսանք որ մար
այս աշխատողթեամբ ազգին փոքր ծառայութիւն մը
մատուցած ենք, որոյ վոյչարինք մէծապէս ընդունած
կը համարինք, եթէ մեր սիրելի ազգին մասնկունքն ամիկ
օգտին, զի մի միայն այս է գործին յօրինման նպատակն:



ԳԼՈՒԽ Ա.

ՍԿԻԶԲՆ ՕՍՄԱՆԵԱՆ ՊԵՏՈՒԹԵԱՆ

ՍՈՒԼԹԱՆ ՕՍՄԱՆ

(1231—1348)

Հ. Ինչպէս սկսան Օսմանեանց Պէտողթիւնն:

Պ. Երեքտասաններորդ դարուն սկիզբն, երբ
ձէնկիզ լսան մեծ աշխարհակալը Խարեզմի պե-
տութիւնը կործանեց, Սիւլէյման շահ, որ Թուր-
քաստանի Թաթարը իշխանաց մին էր, իւր յիսուն
հազար ցեղակիցներով դէպ արևմուտք գաղթեց
և եկաւ Երզնկայ գաւառը բնակեցաւ: Նորա մահ-
ուանէն յետոց, որդին՝ Էրթողրուլ՝ այս գաղթա-
կաններէն չորս հարիւր ընտանիք առնլով, Ոլիմ-
պոս լերան (Քէջիջ տաղը) արեւելեան կողմը տա-
րաւ և բնակութիւնն հոն հաստատեց: Այն ժա-
մանակ Գոնեայի մէջ կը տիրէր Սելջուկեան ցե-
ղին Ալայէտաին Սուլթանն: Էրթողրուլ այս Սուլ-
թանին պատերազմներուն շատ օդնութիւն ըրաւ
և մեծ քաջութիւններ գործեց անոր թշնամեաց
դէմ: Ալայէտաին ալ ընդարձակ երկիրներ պար-
գևեց նմա ի վարձատրութիւն:

Հ. Օսմանեանք իրենց տեղումն ո՞ւսկից տրիմ։

Պ. Կրթոլորովի մահուանէն յետոյ, որդին՝ Օսման՝ իւր քաջութեանց փոխարէն նոր երկիրներ պարզեւ ստացաւ Սուլթանէն, և միանգամայն Պէջ տիտղոսն ու իւր անուամբ դրամ կտրելու արտօնութիւն։ Նըջակայ Յոյն իշխանք՝ այս նոր գաղթականաց օր ըստ օրէ զօրանալն ու տարածուիլը տեսնելով՝ դաւակցութիւն մը կազմեցին զ'Օսմանն սպաննելու համար։ Անոնցմէ մէն իւր հարսանեաց հրաւիրեց զայն։ Դաւակիցք խորհուրդ ըրած էին՝ հարսանեկան ուրախութեանց միջոցին՝ դարանի մէջ ձգել զայն։ սակայն Օսման դաւն իմացաւ և ինք կանխեց սպաննեց իւր թշնամիներն և անոնց երկիրները դրաւեց։

Մոնկոլներու նոր արշաւանք մը՝ վերջ տուաւ Աեճուգեանց Պետութեան։ Ալայէտափին Յունաստան փախաւ և հոն սպաննուեցաւ։ Զանազան իշխանք՝ նորա երկիրներն իրենց մէջ բաժնելով՝ մանր պետութիւններ կազմեցին։ Այս նորակազմ իշխանութեանց մէջ ամենէն զօրաւորն եղաւ Օսմանայ Պետութիւնն, որ իւր անուամբ Օսմաննեան անուանեցաւ։ իսկ ինք Սուլթան և Փատիշահ (Թագառ) տիտղոսն առաւ և իրեն աթուանիստ ըրաւ Եէնիչէնիր քաղաքը, զոր ամրացուց և զարդարեց։ Ապա շատ պատերազմներ ըրաւ իւր թշնամի Յոյն իշխանաց հետ, և մինչեւ Մարմարայի ծովուն եղերքը տարածեց իւր իշխանութիւնն։ (1308)։ Յոյնք նորա դէմ օգնութեան կանչեցին Մոնկոլ-

ներն։ սակայն Օսման իւր Օրխան որդին անոնց դէմ զրկեց, որ չարաչար զարկաւ զանոնք, և յաղթանակաւ ետ դառնալով, Պրուսա քաղաքին վրայ դնաց և զայն առաւ Յունաց ձեռքէն (1326)։ Այսպէս սկսաւ Օսմաննեան Պետութիւնն, որ երկու դար յետոյ, Ագրիտական ծովուն եղերքէն մինչեւ Պարսից ծովածոցը պիտի տարածուէր։



ԳԼՈՒԽ Բ.

ՍՈՒԼԹԱՆ ՕԲԻԱՆ

(1348—1360)

Հ. Սուլթան Օսմանիմ ո՞վ յաջորդեց։

Պ. Սուլթան Օսմանին յաջորդեց որդին Օրխան, որ իւր աթուուր Պրուսա փոխադրեց և իւր Ալայէտափին հանձարեղ եղրայրն Եպարքոս (վհջիր) անուաննելով՝ նմո յանձնեց նորակազմ տէրութեաններքին բարեկարգութիւնն։ Ալայէտափին՝ իմաստաւուն կարգադրութեամբք՝ զօրացուց պետութիւնն և մասնաւոր զօրագունդ մալ սահմաննեցքաջ և ընտիր զօրականներէ, որք Եէնիչէրի (առ զօրք) անուաննեցան։

Հ. Օսմանեանք ինչպէս Եւրոպա անցան.

Պ. Այս ժամանակներն Յունական կայսրութիւնն յետին տկարութեան հասած էր : Սուլթան Օրխան գիտնակով որ Յոյնք չէին կրնար զօրեղ ընդդիմութիւն մ'ընել իրեն , անոնց երկիրն արշաւեց , շատ քաղաքներ առաւ , ընդ որս և Նիկոմիդիա և Նիկա , և իւր Սիւլէյման որդին Նիկույ կառավարիչ անուանեց՝ փաշայի տիտղոսով : Ասրա նուաձեց Պերկարայի գաւառը (Գարկար) : Իւր թագաւորութեան վերջին տարիները (1357) , Սիւլէյման փաշա՝ քաթուն քաջ զինուորներով Զանագ - Գալէայի նեղուցէն Եւրոպայոց կողմն անցաւ և նոյն եզերքէն բազմաթիւ նաւեր առնոլվ Ասիոյ եզերքը բերաւ : Այս նաւերով 30.000 Օսմանցի զօրք Ասիական եզերքէն Եւրոպա անցան , և Աչլիստու , Պուլայիր , Մալկարա , Սիլիվրի և ուրիշ քանի մը քաղաքներ Յունաց ձեռքէն առին . Սիւլէյման փաշա՝ յետ այս յաղթութեանց՝ քիչ ժամանակ ապրեցաւ : Իւր մահունէն տարի մ'ետքը (1359) մեռաւ նաեւ հայրը՝ Սուլթան Օրխան :

ԳԼՈՒԽ Գ.

ՍՈՒԼԹԱՆ ՄՈՒՐԱՏ Ա.

(1360—1389)

Հ. - Սուլթան Մուրատ Ա. ինչպէս առաւ Ամինդիան և Ադրիանոպոլիս բաղաքները :

Պ. Սուլթան Մուրատ Ա. Օրխանայ Երկրորդ որդին և յաջորդն՝ անուանի Եղաւ իւր պատերազմական հանճարովն և խասատուն կառավարութեամիւ : Գահակալութեան առաջին տարիները , Գաղափարիոյ (Եմիլիորիո) լուսկիչք իրեն դէմ Ելան . Մուրատ շուտով նուաձեց զանոնք և Անկիւրիա քաղաքին տիրեց : Անտի իւր զէնքն յԵւրոպա դարցուց : Իւր Լալա Շահին զօրապեան առաւ զԱդրիանուոլիս քաղաքն , ուր փոխադրեց Սուլթան Մուրատ . իւր աթուն : Հետպհետէ Կիւմիւլճինա , Վարդար և Փիլիսոպէ Օսմանեանց ձեռքն անցան , որոց զօրագունդերն յառաջացան մինչեւ Պալքան լեռներն :

Հ. - Սերպիացաց պատերազմն ի՞նչ հնտեռանք ունեցան :

Պ. Այս ամեն յաջողութիւնք մեծ երկիւղ ձըգեցին շրջակաց ազգաց մէջ : Եւրոպիոյ թագաւորը՝ զանակութեան մը գլուխ կանգնելով՝ Պոսնիոյ և Վալաքիոյ իշխանաց հետ միաբանեցաւ , և Հունգարական զօրագունդ մ'ալ օգնութեան կոչելով , հարական

սարակաց թշնամւոյն զօրութիւնը ջախջախել ու-
զեց : Սակայն դաշնակցաց գէմ եղաւ Համբէնի սէյ՝
Սուլթան Մուրատի զօրապեան և մութ գիշեր մը
յանկարծ անոնց բանակետովը կոխելով՝ մեծ ջարդ
տուաւ : Եվնիձէ, ինթիման և Սամաքով՝ Օսման-
եանց ձեռքն ինկան (1363) . իսկ Սուլթան Մուրատ՝
Գարնապատ, Այսաւ և Գըրդ-Քիլիսէ քաղաքներուն
տիրելէ յետոյ, հարկ վճարելու պարտաւորեց ըզ-
Սերվիս և Պուլկարիս : Նոյնպէս իւր քաջ Նոլար-
քոսը՝ Խոյրէտամին փաշա՝ Յունաց ձեռքէն առաւ
Թէսաղոնիկէ (Սէլյանիկ) քաղաքը :

Հ. - Օսմանեանք ի՞նչպէս յաղթեցին Գարամանք
իշխանիք եռ Պողպարը ի՞նչպէս հարդառու եղան .

Պ. Գարամանի իշխանն՝ Ալայէտտին՝ երկրորդ
դաշնակցութիւն մը կազմեց Օսմանեանց գէմ, մինչ
Սերվիոյ Լազար թագար թագաւորը Սուլթանին եւլուա-
կան գաւառները կ'սազատակէր : Սուլթան Մու-
րատ՝ դաշնակցաց վրայ զրկեց իւր Թիմուրթաշ զօ-
րապետն, որ Գոնեայի դաշտին մէջ բոլորովին ջախ-
ջախեց Ալայէտտինի զօրաբանակն (1386), և գերի
բռնեց զՄլյոյէտին : Այս իշխան՝ միջնորդութեամբ
իւր կող, որ Սուլթանին դուստրն էր, հաղիւ
կրցաւ վերստանալ զիւր իշխանութիւն, տարեկան
հարկ մը վճարելու խստանիւ : Իսկ Սուլթան Մու-
րատ անձամբ գնայ Սերվիոյ Լազար թագաւորին
վրայ, որ արգէն Օսմանեան 20,000 զօրաց բա-
նակ մը ցիրտցան ըրած և Պուլկարիոյ Սիսմանթա-
գաւորին հետ միանալու վրայ էր : Եղանքոս Սլի-

փաշա՝ անոնց դիտաւորութիւնն իմանալով՝ աճա-
պարեց Պուլկարիս մոտաւ և թունովայի ու Շումլայի
տիրելով, Նվկոսոլիս փախուց զՄիամա (1388) : Հոն
Պուլկարաց թագաւորն անգամ մ'ալ ուզեց զինուց
բազդը փորձել, սակայն դարձեալ յաղթուեցաւ և
գերի իշխանով, իւր երկրին կէսն Օսմանցւոց ձեռ-
քըն անցաւ : Սուլթանը թոշակ կապեց նմա . իսկ
որդին՝ վերստին հարկատու եղաւ Օսմանցւոց :

Հ. Գոսովյայի պատերազմն ի՞նչպէս եղան եռ ի՞նչպէս
մեռաւ Սուլթան Մուրատ .

Պ. Մինչ Օսմանեան զօրաբանակներն զբաղած
էին ի Գարամանն և ի Պուլկարիս, Լազար կը շա-
րունակէր իւր յաղթութիւնները, բայց երբ լեց
որ Սուլթան Մուրատ՝ հզօր բանակու մը՝ իւր վը-
րայ կրոգար, միաւ յետու նահանջել, և Ալպանիոյ
իշխանաց հետ միանալով՝ Գոսովյայի դաշտին մէջ
ճակատեցուց իւր զօրքը : Օսմանեանք սաստկա-
պէս յարձակեցան թշնամւոյն վրայ . որոյ սակայն
հզօր ընդդիմութեան պատճառաւ յաղթութիւնն
ընդ երկար անորոշ մնաց : Նոյն միջոցին Պրանգո-
վիչ իշխանն՝ որ Սերվիական բանակին մէկ մասին
կը հրամացէր, իւր զօրքաց հետ պատերազմի աս-
պարէզը թողլով ետ քաշուեցաւ, որով Սերվիացիք
մեծապէս տկարացան : Լազար վիրաւորեալ գերի
բռնուեցաւ . իսկ իւր զօրքաց մեծ մասը պատե-
րազմի դաշտին վրայ ինկան և մնացեալք ի փա-
խաւատ դարձան . Երբ Սուլթան Մուրատ կատա-
րելուպէս տարաւ յաղթութիւնն, անձամբ գնաց

պատերազմի դաշտն աչքէ անցունելու , ուր դի-
ակներու մէջէն Միւլը Գոպէլսփիչիշխանն յանկարծ
վեր ցատկելով՝ Սուլթանին սիրառ միեց իւր դա-
շոնը : Եէնիչքրիք խակոյն յօշ յօշ պատառեցին զՄի-
լու , և Սուլթան Մուրաս երկու ժամ ետքը մե-
ռաւ (1389) :

ԳԼՈՒԽ Դ

ՍՈՒԼԹԱՆ ՊԱՅՍԶԻՏ (ԵՐԼԱՐԻՔՄ)

(1389—1403)

Հ. Սուլթան Պայսզիտ ի՞նչպէս տիրեց Գարամանիոյ
և Փոքր Ասիոյ մամբ իշխանութեան .

Սուլթան Մուրասին՝ յաջորդեց իւր որդին
Պայսզիտ , որ իւր քաջագործութեանց համար
Երլուղըր (Կայսիկ) յորդորջեցու : Իւր առաջին
գործն եղաւ հարկատու ընել զՄերփիտ , ինչպէս
նաեւ նուաճել Փոքրուն Ասիոյ քանի մ'ինքնիշխան
պէյերն : Այսուհետեւ իւր վէնքը դարձուց Վա-
լուպիոյ դէմ , զոր հարկատու ըրաւ իրեն : Զօրա-
բանակ մ'ալ զրկեց դկ. Պօլիս պաշարելու : Մինչ
ինք այս պատերազմներով զրալած էր , Գարա-
մանի իշխանն՝ Ալայէտտին՝ Օսմանեանց երկիրներն
արշաւեց , Թիմուրթաշ կուսակալը գերի բանեց և
մինչեւ Սնկիւրիոյ առջեւ յառաջացաւ : Սուլթան
Պայսզիտ՝ այս արշաւանաց լուրն առնլուն պէս՝

փութաց յԱսիտ անցաւ և կայծակի արագութեամբ՝
թշնամւոյն վրայ համելով՝ Ագ-Զայի դաշտին մէջ
իւրառ ջախջախեց անոր զօրութիւնն , և զԱլա-
յէտտինն ալ գերի բռնելով , Գարամանի պետու-
թիւնը բոլորովին իւր իշխանութեան տակ նուա-
ճեց : Նոյն միջոցին Եւդոկիոյ և Սեբաստիոյ իշխա-
նին երկիրներն եւս միացան Օսմանեան երկիրնե-
րուն հետ , ինչպէս նաեւ Գամթամունիի իշխանին
երկիրներն , Սամսուն , Ամասիա , Ճանիկ եւլն , Օս-
մանեանց գերիշխանութեան ներքեւ ինկան :

Հ. Պողկարիա ի՞նչպէս նուաճեցաւ .

Պ. Սուլթան Պայսզիտ նմանօրինակ յաջորու-
թեամբ յաղթեց նաեւ պուլքարաց Սիսման թա-
գաւորին , զոր գերի բռնելով սպաննեց և երկիրն
ալ գրաւեց : Իսկ նորա որդին մահմետական կը-
րօնքն ընդունելով՝ Սամսուն քաղաքին կառավա-
րիչ անուանեցաւ (1394) :

Հ. Ի՞նչպէս եղաւ Նիկոպոլսյ պատերազմն .

Պ. Հունգարաց թագաւորը՝ Սիկիամոնտ , Պուլ-
կարաց երկիրը Սուլթանին ձեռքէն կորդել ուղե-
լով , սլատելազմ հրատարակեց նորա դէմ : Բա-
զում գաղղիացի և այլ քրիստոնեաց իշխանք օգ-
նութեան եկան իրեն , և այսպէս՝ իւր զօրաց թիւն
հասաւ 60,000 ի : Իսկ երկու հարիւր հազար հո-
գիէ կը բաղկանար Օսմանեան բանակն , յորում
կային բազում Սերվիացի , Պունիացի և Յոյն զօ-
րականք : Հունգարացիք (Մամար) Դանուբ գետն
անցնելով , եկան պաշարեցին զնիկուղուիս , որուն

իսկոյն օգնութեամն հասաւ Սուլթանն , և յայնժամ սոսկալի ճակատամարտ մ'սկաւ : Գաղղիացի ազ-նուականք , հակառակ Արդիշանուսի խորհրդոց՝ ա-ռանց ակուղջ բանակին սպասելու , յարձակումն սկան և թէպէտ ՚ի սկզբան թշնամոյն հեծելու-զօրն յետո մըլցին , սակայն ի վերջոյ տեսնելով որ Յամանեանք ամեն կողմէ կը պաշարեն զիրենք , պարտաւորեցան փախչիլ և բուն բանակետղի ա-պաստանիլ : Թրանախլամից իշխանն՝ որ քրիստո-նէից բանակին աջ թեւին կը հրամացէր , սակաւ ինչ կուռելէ յետոյ , յետո նահանջեց իւր զօրա-գունդին հետ . Նորո օրինակին հետեւեցաւ նա-եւ Վալաքիոյ իշխանը՝ Մանես : Միայն Հունդարք և Գերմանացիք , որ ճակատատեղոցոյն կեցրոնը բռնած էին , երկար ժամանակ արխարար դիմադ-րեցին և մեծ ջարդ տուին Յամանեան զօրաց : Սա-կայն ի վերջոյ նոցա թուական առաւելութէնէն ընկճուելով բոլորովին յաղթուեցան :

Յունաց կայսր՝ Սուլթանին ոյն յաղթու-թիւնը լեւով զարհուրեցաւ և փութաց խաղա-ղութեան դաշինք գնել , խոստանալով տարեկան 10,000 սովի դահեկանի : արկ մը վճարել նաև :

Հ. Լենկթիմուր ի՞նչպէս բռնեց զՍույթան Պայտղիտ .
Պ. Նոյն միջոցին Մանկոներու թագաւորը՝ Լէնկթիմուր՝ որ ձէնկիզ Խանի պետութիւնը վե-րահաստատած էր , Յամանեանց երկիրն արշո-ւելով մինչեւ ի Երաստիա յառաջացաւ և զայն Դրաւելէ զատ , Սուլթան Պայտղիտի ողովին երթու-

րուն ալ բռնելով գլխատեց : Նըր Յամանեան Սուլ-թանն սոյն շահատակութեան գոյժն առաւ , իս-կոյն գումարեց իւր բովանդակ զօրութիւնն , և Ասիա անցնելով , Անկիւրիոյ մերձակայ դաշտին մէջ հասաւ Թաթար աշխարհակալին վրայ : Յայն-ժամ երկու զօրաբանակներն ուժնապէս իրարու-ընդհարեցան , և ճակատամարտն առաւօտէն մին-չեւ գիշեր տեսեց : Սուլթան Պայտղիտ՝ այս կըռ-ւոյն մէջ՝ ցոյց տուաւ թէ իրօք արժանի էր Կայ-ծակին յորջորջման : Ամենէ վտանգաւոր և դժուա-րին տեղերն անձամբ կը հասնէր և անձին օրի-նակաւ նոր ոյժ կուտար իւր զօրաց , որոց մէկ մա-սին գասալքութիւնն սակայն ի գերեւ հանեց իւր անհնարին ճիգն : Իւր զօրաց մէկ մասը թշնամոյն կողմն անցաւ , և թէպէտ մնացեալք բուռն սաստ-կութեամբ և արիաբար շարունակեցին կոփւը , սա-կայն ի վերջոյ հարկադրեցան փախչիլ և ցրուիլ : Սուլթանը՝ փախչելու միջոցին՝ ճիէն վար ինկաւ , և Թաթարներէն բռնուելով՝ Լէնկթիմուրին առ-ջեւ տարուեցաւ :

Կըսուի թէ , Լէնկթիմուր՝ երկաթէ վանդա-կի մը մէջ գնել տուերէ զՊայտղիտ , սակայն շատ պատմագիրք կը հերքեն զայս պատմութիւն : Պա-յտղիտ մեծ տրտութիւն և ցաւ զգաց իւր այս պարտութենէն և շատ չանցած՝ իւր սորին ցա-ւէն հիւանդանալով՝ մեռաւ (9 մարտ 1403) :



ԳԼՈՒԽ Ե.

(ԶԷԼԷՊԻ) ՍՈՒԼԹԱՆ ՄԵՀԿՄՄԻՏ Ա.

(1402—1421)

Հ. Սուլթան Պայազիսի ո՞վ յաջորդեց եւ ի՞նչ
պատերազմներ ըստա.

Պ. Սուլթան Պայազիսի գերի բռնուելէն յետոյ,
մեծ վտանգի մէջ ինկաւ Օսմանեան Պետութիւնն :
Եւրոպիոյ մէջ նուաճեալ ազգերն՝ Սերվիացիք,
Պուլղարք և Վալաքները վերստին ձեռք ձգեցին
իրենց անկախութիւնն . իսկ Փոքր Ասիյ մանր իշ-
խանութիւնք, զորս Պայազիտ հալատակեցուցած
էր իրեն, Օսմանեան լուծը թօթափելով, իրենց
նախկին իշխանաց ձեռքն անցան, մինչ անդին Պա-
յազիսի որդիքն՝ Օսմանեան գահն իրարու ձեռքէ
կորցելու համար՝ կը կուռէին միմեանց հետ :

Սուլթան Պայազիսի որդին Սիւլէյման՝ Ադ-
րիանուազուլոյ մէջ թագաւոր հռչակուեցաւ զօ-
րաց կողմէ : Նորա եղբայրը՝ Զէլքալի Մէհմէտ,
Եւղոկիա և Ամասիա քաղաքները լէնկթիմուրի
զօրապետաց ձեռքէն առնէլ յետոյ, իւր Խսաեղ-
բօրը զրայ գնաց, որ Պրուսայի մէջ թագաւորած
էր, և որ յաղթուելով պարտաւորեցաւ յԱդրիա-
նուազիս իւր եղբօր Սիւլէյմանի քով ապաստա-
նիլ : Խսա՝ Սիւլէյմանէն օգնական զօրք առնլով

Ասիա վերադարձաւ, սակայն իւր Եղբօրմէն վե-
րըստին չարաչար յաղթուելով՝ սպաննուեցաւ :

Մինչդեռ Սիւլէյման Մէհմէտին հետ կը պա-
տերազմէր, իւր միւս եղբայրը՝ Մուսա՝ զօրք ժող-
ուելով միացաւ Սերվիոյ և Վալաքիոյ իշխանաց
հետ, և Օսմ. Տէրութեան եւրոպական գաւառ-
ներն ասպատակեց : Ի սկզբան թէեւ մեծ յաջո-
ղութիւն չունեցաւ, սակայն ի վերջոյ յաղթեց Սիւ-
լէյմանին, որ սպաննուեցաւ և որ իւր այս պար-
տութիւնը կը պարտի իւր անհոգութեան : Մուսա՝
այս յաջողութենէն քաջալերեալ Սերվիա արշա-
ւեց, Չունգարաց թագաւորին դէմ պատերազմ
մը մղեց և անոր յաղթեց : Յունաց կիմիանուէլ
կայսրը տարեկան հարկ տալը դադրեցուցած և
Մէհմէտ արքայազունն ալ յօգնութիւն կոչած
լինելով, Մուսա ստուար բանակաւ մ'եկաւ յաղ-
թեց իւր եղբօրն և զի. Պօլիս պաշարեց : Յայնժամ
Յունաց կայսրը, Սերվիոյ իշխանն և Մէհմէտ
գաշնակցութիւն մը կազմեցին Մուսայի դէմ, որ
իւր զօրապետներէն կը մատնուի, զօրքէն կը լը-
քանուի և այսպէս ձեռք լինալով՝ կսպաննուի :

Մէհմէտ, Օսմանեան տիրապետութեան միակ
ժառանգ մնացած լինելով, ի գահ ամբարձաւ, Մէ-
հմէտ Ա. անուամբ : Սակայն տէրութեան ամեն
կողմը խովութիւն կը տիրէր . ասպատամբութիւնք
օր ըստ օրէ կ'աւելնային և կը զօրանային : Դարա-
մանի իշխանն ո՛չ միայն ապատամբած, այլ և Օս-
մանեան երկիրն արշաւած և Պրուսա քաղաքը պա-

շարտած էր : Սուլթան Մէհմէմիտին առաջին գործն
եղաւ այս ապատամբ իշխանին վրայ երթալ, որ
յաղթուելով պարաւորեցաւ իւր երկիրը վերտ-
դառնաւ (1445) : Այնուհետև, Վենետիկցւոց և
Հոնդարաց դէմ երկու անշաղող պատերազմներ
մէլեց, որք որ եւէ հետեւանք չունեցան :

Նոյն ատենները Պէհրէտափն անուն Շէյխ մը
սկսած էր նոր աղանդ մը քարոզել, և շատ հե-
տեւողներ գտնելով՝ կը խռովէր Օսմաննեան երկիր-
ները : Սուլթանն անոնց դէմ զրկեց իւր Նալար-
քուր՝ Պայազիտ, որ Գարա-Պրունի մօտ ցիրուցան
ըրաւ զանոնք :

Հ. Մուսթաֆա արքայազումն ի՞նչպէս յալթռեցաւ,
են ի՞նչպէս մեռաւ Սուլթան Մէհմէմիտ :

Պ. Սուլթան Մէհմէմիտին չորրորդ եղբայրը՝
Մուսթաֆա, որ երկար ատենէ ի վեր աներեցիթ
Եղած էր, յանկարծ յերեան գալով և քանի մը։
Իշխանաց հետ զանակցելով՝ զօրք ժողովեց և իւր
եղբօքը վրայ գնաց՝ Օսմաննեան գահը նորա ձեռ-
քէն կորվելու համար : Սակայն յաղթուելով ստիպ-
ուեցաւ Թեսաղնիկէ վախչիլ, ուր արգիլուեցաւ
Յունաց էմինանուէլ կայսրէն, որ խռուցաւ Սուլ-
թան Մէհմէմիտի՝ չարձակել զՄուսթաֆա ցորչափ
ինք կենդանի է : Սուլթանն սոյն խռոտմամբ չա-
տացաւ և տարեկան թոշակ կապեց իւր եղբօք :

Տէրութիւնն ամեն կողմէ խալազացած և Սուլ-
թանն իւր երկիրները բարեկարգել սկսած էր, երբ
յանկարծ կաթուածէ բանուելով՝ յանկողին ին-

կաւ . իւր մահամերձ վիճակն զդալով, առինքն կո-
չեց իւր հաւատարիմ Եպարքոսն զՊայազիտ փաշա
և նմա յանձնելով զիւր որդին Մուրատ, պատուի-
րեց իւր գահը բազմեցնել զայն, և ինքն ալ յա-
ջորդ օրը մեռաւ : Պայազիտ 41 օր ծածկեց Սուլ-
թանին մահը. մինչեւ որ գահաժառանգ արքա-
յագունն Ամասիայէն գալով՝ իւր հօր գահը բազ-
մեցաւ :

ԳԼՈՒԽ Զ.

ՄՈՒԼԹԱՆ ՄՈՒՐԱՏ Բ.

(1421—1451)

Հ. Մուլթան Մուրատ ի՞նչպէս պաշարեց զկ. Պօլիս,
են ի՞նչպէս տիրեց Փոքր Ասիր իշխանապետութեաց.

Պ. Դեռ տասն և ութ տարեկան էր Սուլթան
Մուրատ, երբ իւր հօրը գահը բազմեցաւ : Իւր ա-
ռաջին գործն եղաւ Գարամանի իշխանին հետ
հաշտութիւն և Հունդարաց թագաւորին հետ եւս
հնգամեայ զինադադար մը կնքել : Սակայն Յու-
նաց կմմանուէլ կայսրը՝ Սուլթան Մուրատի հետ
գժուելով՝ Թեսաղնիկէն արձակեց նորա հօրեղ-
բայրը զՄուսթաֆա, որ իսկոյն տասն նաւով եկաւ
պաշտեց զկէլիպօլու և գրաւեց զայն : Ապա Ե-
պարքոսին բանակն, որ իրեն դէմ զրկուած էր,

իւր կողմը շահելով՝ Սուլթան Մուրատի վրայ քա-
լեց : Այս վերջինն իւր բանակաւն անոր դէմ ելաւ
և զօրքը ցրուել յետոյ , զինքն ալ սպաննեց : Սուլ-
թանն , այս յաղթութենէն յետոյ , Յունաց վրայ
դնաց և 20.000 զորօք պաշարեց զկ . Պօլիս : Բայց
քանի մ'անյաջող յարձակումներէ յետոյ , լսելով որ
Փոքր-Ասիոյ իշխանք վերստին ապատամբեր են և
իւր երկիրը կը խռովին , վերուց պաշարումն և զա-
նոնք զսպելու դնաց : Գարամանի իշխանին եր-
կիրներուն մեծ մասը , Մէնթէչէի , Գասթէմու-
նիի և Այտընի իշխանութիւնները մի առ մի Օս-
մանեան տիրապետութեան ներքեւ ինկան :

Հ. Սուլթան Մուրատ ինչո՞ն համար պատերազմի-
ցաւ Անրվացոց եւ Հունգարաց հետ .

Պ. Երբ Ասիական գաւառները խաղաղեց , յեւ-
րոպա վերադարձաւ , և Սերվիոյ քանի մը քաղա-
քաց տիրելով ; 50.000 արծաթ դահեկանի տարե-
կան հարկ մը դրաւ Թէորդ Պրանքովիչ իշխանին
վրայ : Թէսալոնիկէ քաղաքն ևս , զոր իւր նախորդք
քանիցս տուած և ետ տուած էին , այս անդամ
վերջնապէս նուաճելով , Օսմանեան տիրապետու-
թեան ներքեւ մտաւ (1430) :

Սուլթան Մուրատ՝ յաջորդ տարին Սլյանիոյ
վրայ արշաւելով , անոր հապաւային մասին տիրեց ,
ինչպէս նաեւ Վալաքիոյ Տրագուլ իշխանը նուա-
ճեց : Խակ իւր Մէգիտ Պէյ անուն գօրապետն՝ ըստ-
ուար բանակաւ մը՝ Հունգարիա արշաւեց : Անոր
դէմ ելաւ Թրանսիլվանիոյ Յովհան Հունեատի քաջ

իշխանն , որ Օսմանեանց յաղթեց : Սուլթանն օգ-
նութեան զրկեց Շահապէտափն փաշան՝ 80.000
զօրքով , սակայն Հունեատի ասոնց եւս յաղթելով ,
գերի բռնեց վեհապէտափն փաշա :

Մինչդեռ Հունգարիա թատերաբեմ եղած էր
այս արիւնուուշ պատերազմներու , Սուլթան Մու-
րատ ինքն ալ դնաց պաշարել Պելկրատի բերդը ,
զի Սերվիոյ իշխանը վերստին զէնք առած էր Օս-
մանեանց դէմ . բայց վեցամեայ պաշարումէ մը
յետոյ , չլրնալով բերդն առնուլ ետ քաջուեցաւ :
Երկրորդ անյաջող կոլու մ'ալ նիշի քով մղեց և
ապա հարկադրեցաւ Պալքանաց միւս կողմը քաշ-
ուիլ (1443) : Ամիս մը վերջը , Հունեատի իշխանը
Պալքաններն անցնելով , յանկարծ Օսմանեան բա-
նակին վրայ յարձակեցաւ և աւրեց զայն : Յայն-
ժամ Սուլթանն ուզեց հաշտութիւն կնքել , և Վա-
լյաքիան ետ տուաւ Տրագուլ իշխանին : Նոյնպէս
Պրանքովիչէն առած բերդերն ետ դարձուց և
Հունգարաց հետ ալ տասնամեայ զինադադար մը
կնքեց (12 յուլիս 1444) :

Հ. Ի՞նչ պատճառաւ հրաժարեցաւ իւր գահնե .

Պ. Հազիւ խաղաղութիւնն հաստատուած էր ,
երբ Սուլթանն լուր առաւ թէ իւր Սլյանիտին որ-
դին մեռած էր : Այս գոյժ մեծապէս արտմեցուց
զՍուլթանն որ սրոշեց հրաժարիլ իւր գահէն , և
զիւր որդին Մէհմէմէտ իրեն յաջորդ կարգելով ,
Մանիսա քաշուեցաւ : Հազիւ հոն հասած , լսեց որ
Հունգարացիք դրժելով իրենց դաշանց՝ Պուլկարիա

արշաւեր և Վառնա քաղաքը պաշարեր են, իսկոյն Եւրոպա վերադարձաւ՝ իւր որդւոյն գահը պաշտպանելու համար, և 40,000 զօրօք թշնամոյն դէմ գնաց : Հունգարացիք չարաշար յաղթուեցան, իրենց թագաւորը զարնուելով մեռաւ խառնուրդին մէջ՝ և Հունգարական զօրաբանակն ցիրուցան ի փախուստ դարձաւ : Ցաջորդ օրն Օսմանցիք տիրեցին թշնամոյն բուն բանակետովն (1444) :

Հ. Ինչո՞ւ համար Ալպանիա արշանեց եւ Գոստվայի պատերազմին հնտեսանքի ի՞նչ եղաւ .

Պ. Այնուհետեւ հարկ եղաւ Ալպանիոյ վրայ երթալ, զի այս երկրին վերջին իշխանին որդին՝ Իսկէնտէր պէյ՝ որ Սուլթանին քով սպառանդ կը գտնուէր, փախչելով իւր հայրենիքը գնացած և իւր հօր իշխանութիւնը վերատին ձեռք առած էր : Մինչ Սուլթան Մուրատ Հունգարաց հետ կը պատերազմէր, իսկէնտէր պէյ ալ Ալպանիոյ քաղաքներէն կը վանէր Օսմաննեան զօրքը : Նորա դէմ դրկուած Ֆէրուզ և Մուսիթաֆա փաշաները չկըրցին այս արշաւանքը կասեցնել և հարկադրեցան Ալպանիայէն ելնել : Յայնժամ Սուլթան Մուրատ 100,000 զօրք անձամբ գնաց իսկէնտէր պէյի դէմ և քանի մը քաղաքներ գրաւեց, թէ եւ իւր զօրքէն շատ մարդ կորսյու : Նոյն ատեններն Հունեատի՝ Սերպիա մոնելով՝ կ'ասպատակէր . Սուլթանն իսկոյն Ալպանիայէն մեկնելով՝ օդնութեան չառաւ Սերվիացւոց, որք հաւատարիմ մնացած էին իրեն, և Գոստվայի դաշտին մէջ ընդհարեցաւ թշնամոյն

հետ : Հունեատի՝ իւր քաջութեան և բաղդին վըստահացած և առանց սպասելու իսկէնտէր պէյի հասնելուն, որ օդնութեան կուդար, պատերազմն սկսաւ, Երեք օր անդադար տեւեց սոյն ճակատամարտն, յորում երկու կողմն ալ մեծ քաջութեամբ կոռւեցան . սակայն ի վերջոյ Վալաքներու գունդն՝ որ Հունեատիի զօրաբանակին մասը կը կազմէր, ի փախուստ գառնալով, յաղթութիւնը մնաց Օսմաննեանց կողմն, որք 40,000 հոգի կոռւսած էին (17 հոկտ. 1448) :

Հ. Սուլթան Մուրատ ի՞նչ պատճառաւ երկրուդ անզամ գամն եղաւ : Իսկէնտէր պէյի դիմ ըրած արշաւանքի ի՞նչ հնտեսանդիւն առնեցաւ եւ երբ մեռաւ .

Պ. Սուլթան Մուրատ երկրորդ անգամ Մանիսա վերադարձած էր, երբ լեց թէ Նէնիչը իր պատամբած են իւր որդւոյն դէմ և տէրութիւնը կը խոռվէն, Զարկ եղաւ իրեն փութով յԱդրիանուպոլիս վերադառնալ, և երկրորդ անգամ գահն ելնելով հանդարտեցուց ապստամբ զօրքն : Ապա 60,000 հոգւոյ զօրաբանակ մը կազմելով, Մորա արշաւեց, Կորնթոս և Բաթրաս քաղաքներն առաւ և շատ տեղեր գրաւեց :

Անտի վերստին իսկէնտէր պէյի դէմ գնաց և իւր զօրքն Ալպանիոյ ամեն կողմը տարածելով պաշարեց Գրոյա բերդաբառլաքը : Իսկէնտէր՝ թըլշնատին յոդնեցնել ուղելով՝ մեծ ճակատամարտներէ կ'զդուշանար, սոյլ միայն գիշերային յարձակումներով անդադար կը նեղէր Օսմաննեան զօր-

Քը. Սուլթանը տեսնելով որ այս պատերազմներն որ և է օգուտ չափակի ունենան. հաշուութիւն կը նքել ուզեց, բայց երբ իւր պայմանք չընդունուեցան, Գրոյցի պաշարումը բառնալով, յԱղրիանու պօլիս վերադարձաւ (1448-1450), և յաջորդ տարին մեռաւ. 30 տարի թագաւորելէ յետոյ (փետրուար 1451):



ԳԼՈՒԽ Ե.

ՊԱՐԻՀ ՍՈՒԼԹԱՆ ՄԻՀԱՄՄԱԴ Բ.
(ԱՇԽԱԲՃԱԿԱԼ)

(1451-1481)

Հ. Ի՞նչպէս առնուեցան Կ. Պօլսոյ.

Պ. Սուլթան Մէհմէտ՝ իւր գահակալութեան առաջին օրէն՝ ձեռնարկեց ընդարձակել իւր պետութիւնն, և նախ՝ ուզեց Կ. Պօլսոյ տիրել, ուր այն ժամանակ կը թագաւորէր Կոնստանդիին Բալչորդ կայսրն: Այս մայրաքաղաքին ըրջակայ երկիրներն արդէն Յամանցւոց ձեռքն անցած էին: Սուլթան Պայազիտ. Վոսփորի ասիական եղերաց վրայ բերդ մը շինել տուած էր կիւզէլ Հիսար անուամբ, որոյ հանդէպ Սուլթան Մէհմէտ ևս ուրիշ ամրոց մը շինել տուաւ եւրոպական եղերաց վրայ՝ Աեւ ծովու անցքին տէր լինելու համար:

Կոստանդիին կայսրն չատ աշխատեցաւ և մինչեւ իսկ յանձն առաւ հարկ վճարել, որպէս զի Սուլթանն ետ կենայ այս շինութենէն, սակայն իւր բոլոր ջանքերն ի գերեւ եւսն: Սուլթան Մէհմէտ աւարտեց իւր բերդին շինութիւնն, և պատրուակ մը գտնելով՝ պատերազմ հրատարակեց ընդդէմ Ցունաց կայսեր:

Կանխաւ պատրաստուած էին Կ. Պօլսոյ պաշարման համար հարկ եղած նիւթերը: Սուլթանը քանի մը վիթխարի թնդանօթներ ձուլել տուած էր Հունդարացւոյ մը, որոց մեծագոյն՝ տասներկու կենդինար ծանրութեամբ ռումբ կ'արձակէր մինչեւ մէկ մլոն հեռի: Այս ահագին հրանօթն՝ որոյ գործածութեանն համար 700 հոգի սահմանուած էին, առաջին անգամ արձակուելուն՝ պայթեցաւ և իւր ձուլիչն օդն հանեց:

Ցոյնք բոլորովին վհատած, իրենց վերջին ժամը մօտեցած կը համարէին, և այս պէս չար գուշակութիւնք առաւել ևս կը վհատեցնէին զիրենք: Կոնստանդիին կայսրն հազիւ 5 000 պատերազմող կրցաւ ժողվել: 1453 ապրիլ սկիզբն, 250,000 Օսմանցիք, ընդ հրամատարութեամբ իրենց արիասիրու Սուլթանին, եկան ամեն կողմէ պաշարեցին գ. Պօլսոյ, որոյ պարսպաց գէմասան և չորս մարտկոցներ կառուցուեցան և ծովը ծածկուեցաւ Օսմանեան 180 նաւերով: Կոնստանդիին կայսրն Եւրոպիոյ ազգերէն օգնութիւն խնդրեց, բայց ի զո՞ւր: Միայն ձեռնովայի հասարակագետութիւնն,

որոյ ձեռքն էր Կ. Պօլսոյ վաճառականութիւնն և
անոր կալաթա արուարձանն, Ճիւպթինիանի ծո-
վապետին հրամանատարութեամբ՝ փոքր նաւա-
տորմ մ'օգնութեան զրկեց Յունաց։ Օսմանեան
նաւերը՝ բունած էին նաւահանդսուի բերանը. Ճիւպ-
թինիանի հինգ նաւով ցրուեց անոնց նաւատորմը,
և յաղթանակաւ ներս մոնելով, ահագին չլիթա-
յով մը նաւահանդսուին մուտքը գոյեց կալաթա-
յէն մինչեւ դիմացի եղերքը (21 ապրիլ 1453)։
հինգ հազար օտարազգի զօրք եկան պաշարեալ-
ները զօրացնելու։ Սակայն Օսմանեանց արի Սուլ-
թանը չի հասկաւ ցամաքի վրայէն մինչեւ նա-
ւահանդսուին ներքին կողմը տախտակամած ուղի-
մը շինել տալով, անոր միջոցաւ 70 նաւեր նաւա-
հանդիսաւ մոցուց գիշերաց։ Պաշտման հինգե-
րորդ օրն, Օսմանեանց թնդանօթներն հինգ աշ-
տարակ կործանած և Ա. Ռումանոսի դրան քով լայն
խրամատ մը բացած էին։

Սուլթան Մէհմէտ առաջարկեց կայսեր՝ լի-
նել անձնատուր, բայց այս վերջինը պատասխա-
նեց թէ ցյետին շունչ պիտի պաշտպանէ այն պե-
տութիւնն, զոր Սատուած տուած է իրեն։ Եւ
արդարեւ կայսրն ամենէ վտանգաւոր տեղերը կը
դիմէր և իւր անձին օրինակաւ կ'արծարծէր զօ-
րաց քաջութիւնը։ Խրամատները նորոգուեցան և
կործանեալ պարսպաց ետե նոր պարիսպներ բարձ-
րացան։

Մայիս 24ին, Սուլթանն երկրորդ անգամ պատ-

գամաւոր զրկեց առ կայսրն, ծանուցանելով որ,
եթէ անձնատուր լինի, իւր կենաց պիտի խնայէ,
քաղաքին բնակչիներն ազատ պիտի թողլու և թոյլ
պիտի տայ իրեն։ իշխանութիւն վարել ի Մորա։
Կոնստանդին զայս առաջարկ ևս մերժեց, զի հաս-
տատապէս որոշած էր ցյետին շունչ պաշտպանել
իւր մայրաքաղաքն և անոր աւերակաց ներքեւ
թաղուիլ։ Մայիսի 29 րդ օրն ընդհանուր յարձակ-
ման օր որոշուեցաւ։ 150,000 Օսմանցիք, իրենց
Սուլթանին աշաց առջև, բուռն զօրութեամբ յար-
ձակեցան ամրոցներուն վրայ, սակայն յունական
զօրքն յուսահատական քաջութեամի դիմադրեցին,
պարսպաց վրայէն նետերու և քարերու տարափ
մը տեղացնելով յարձակողաց վրայ։ Յունական
հուրն ալ անոնց նաւերն ու մարտկոցները կ'այրէր
մոխիր կը դարձնէր։ Յարձակումն ամենայն սաստ-
կութեամբ շարունակեց երկու ժամ, երբ յանկարծ
Օսմանցիք նշանակեցին որ Գերգորոդա (Քանլորոր-
դա) կոչուած դուռն՝ բատ արժանւոյն չեր գոյուած,
զոր Յոյնք անհոգութեամբ բաց թողած էին։ Իս-
կոյն դունդ մ'Օսմանեան զօրք այդ դունչն ներս
մտաւ և սկսաւ քաղքին մէջ տարածուիլ։

Կոնստանդին կայսրն՝ որ դեռ պարսպաց վրայ
կը պատերազմէր, թշնամեոյն ի քաղաք մտնելը լը-
սելով հասկցաւ թէ յաղթութիւնն այլ ևս կորսուած
էր իրեն համար։ ուստի ուզեց քաջութեամբ մեռ-
նիլ։ Արիասիրտ զօրականաց փոքր խումբ մ'իւր
հետն առած, Օսմանեան զօրազնդին վրայ յար-

ձակեցաւ, և մեծ ջարդ մը տալէ յետոյ, ինքն ալ զարնուեցաւ մեռաւ: Ահա՝ սցսպէս Օսմաննեանց ձեռքն անցաւ կ. Պօլիս, արեւելեան կայսրութեան սցս հռչակաւոր մայրաքաղաքը:

Հ. Սուլթան Մէհմէտ յաղթանակաւ կ. Պօլիս ըրաւ յետ առնանն կ. Պօլոյ:

Պ. Սուլթան Մէհմէտ յաղթանակաւ կ. Պօլիս մտնելով՝ ուղղակի Այա-Սոփիայի եկեղեցին գնաց և հոռ իւր առաջին աղօթքն ընելէ յետոյ, մզկիթի վերած եց նոյն հոյակապ եկեղեցին: Ապա իւր բնակութիւններ ըրաւ: Հրաման ըրաւ որ քաղաքէն փախչող բնակիչք իրենց տեղերը վերադառնան, և կրօնական կատարեալ աղատութիւն տուաւ անոնց: Գէորգ Գեննադիոսին Պատրիարքական իշխանութիւնն հաստատեց և կենաց ու ընչից ապահովութիւն խոստացաւ ամենուն: Նաև Ասիական գաւառներէն հայ գաղթականութիւն մը բերել տալով, կ. Պօլոյ զանազան թալերը բնակեցուց և Պրուսայու Յովակիմ Եպիսկոպոսը Պատրիարք կարգեց բովանդակ Օսմաննեան Հայոց վրայ:

Հ. Սոլլթան Մէհմէնին ի՞նչպէս տիրեց Մորայի.

Պ. Սուլթան Մէհմէտ, իւր մայրաքաղաքը բարեկարգելէ յետոյ, մեծ գորաբանակ մը պատրաստեց՝ իւր աշխարհակալութիւնն յառաջ տանելու համար: Յունաց վերջին կայսեր երկու եղբարքն՝ Դեմետր և Թովմաս Բալէոլոկ՝ որ Մորայի վրայ կիշ-

իւրին, այս ահեղ պատրաստութենէն զարհուրելով՝ ինքնակամ հնազանդեցան Օսմաննեան տէրութեան և յանձն առին 2000 ոսկի դահեկան տարբեկան հարկ տալ: Սակայն այս հնազանդութիւնն իրենց օգուտ չըրաւ: ութ տարի յետոյ (1462) Սուլթան Մէհմէտ բովանդակ Մորան միացուց իւր տէրութեան հետ:

Հ. Սերվիացոց հետ պատերազմն ի՞նչ վախճակ ունեցան.

Պ. Երբ Յունական կայսրութիւնը բոլորովին նուածեցաւ, կարգն եկաւ մօտաւոր ազգաց, և նախ Սերվիա՝ որ քան զամենայն մօտաւորն և հզօրն էր, Օսմաննեանց յարձակումը կրեց: Քանի մ'անյալող պատերազմիներէ յետոյ, Սերվիացոց օգնութեան հասաւ Հունեատի քաջ իշխանն և յայնժամ պատերազմին կերպարանքը փոխուեցաւ: Օսմաննեան զօրաբանակ մը, ընդ հրամատարութեամբ Ֆէրուզ Պէյի, ընդհարեցաւ այս իշխանին զօրաց հետ, սակայն Սերվիացոց իշխանը՝ Պրանքովիչ հաշտութիւն կնքեց Սուլթանին հետ, տարեկան 30,000 ոսկի դահեկան հարկ խոստանալով: Բայց այս հաշտութիւն երկար չուեց, զի երկու տարի ետքը Սուլթան Մէհմէտ անձամբ Սերվիա արշաւեց և անարդեկ մինչև Պէլլրատ յառաջանալով պաշարեց զայն, մինչ Օսմաննեան նաւատորմն ալ Արշիակեղագոսի կզզիները կը նուածէր: Այս անգամ ևս Հունեատի եղաւ Սերվիացոց ազատարրը: իւր բոլոր զօրութիւնը Պէլլրատի մէջ գու-

մարելով, Օսմանեանց բոլոր ջանքերն ի գերեւ հա-
նեց : Սուլթանին զօրաբանակն 25 հազար հոգի
կորուսանելով, հարկադրեցաւ պաշտումը բառ-
նալ : Սակայն Հունեատի չկրցաւ վայելել սոյն յաղ-
թութեան պառելը, զի քսան օր յետոյ մեռաւ
այն ծանր վերքէն, զոր ստացած էր խառնուր-
դին մէջ :

Հ . Օսմանեամբ ի՞նչպէս տիրեցիմ Սերվիոյ եւ
Պոսტիոյ .

Պ . Սորա մահուամբ՝ Օսմանեանք ազատեցան ա-
հարկու թշնամիէ մը , և Եզարքոս Մահմուտ փա-
շա նորէն Սերվիա մոտաւ , բոլոր բերդերը մի
առ մի գրաւեց և երկու տարոյ մէջ բովանդակ
երկիրը նուաձնեց ընդ իշխանութեամբ Օսմանեանց :
Սերվիացւոց մէկ մասն , առաջնորդութեամբ ի-
րենց Պատրիարքին , Հունդարիա գաղթելով , անդ
հաստատեցին իրենց բնակութիւնը . մաս մ'ալ Սև
լեռան (Փարաստաղ) անմատոյց խորչերը ապաստա-
նեցան և այսովէս զերծ մնացին Օսմանեան թու-
էն (1460) :

Այսպիսի վախճան մ'ունեցաւ նաեւ Պոստիոյ
արշաւանքը : Սուլթանը տարեկան հարկ մը պա-
հանջեց այս երկրի թագաւորէն , բայց նա ամ-
բարտաւանութեամբ մերժելով , Եպարքոս Մահ-
մուտ փաշա իւր վրայ զրկուեցաւ : Օսմանցիք քիչ
ժամանակի մէջ նորա երկրը գրաւեցին , և զինքն
ալ ընտանեօք գերի բռնելով գլխատեցին :

Հ . Սուլթան Մհեմիտ ի՞նչպէս տիրեց Տրավր-
դոնի կայսրութեան եւ անոր ցրակաց քաղաքներուն :

Պ . Մինչդեռ իւր փոխանորդը Պետութեան ա-
րևմտեան սահմանները կ'ընդարձակէր , Սուլթանն
ինք ևս՝ Սահոյ մէջ՝ Օմասիա և Վինոպ քաղաքնե-
րուն կը տիրէր : Տրավրդոնի Սոյն կայսրը՝ Դաւիթ
Կոմինոս՝ այս ահարկու թշնամւոյն մօտաւորու-
թենէն զարհուրած , առաջարկեց իւր քաղաքը
նմա յանձնել , այն պայմանաւ որ ինքն իւր գան-
ձերով ազատորէն երթայ ուր որ ուզէ : Իւր առա-
ջարկած պայմանն անընդունելի երկնալով , ընտան-
եօք գերի բռնուեցաւ Օսմաննեանց կողմէ (1461) :

Հ . Վարպիս ի՞նչպէս սովորեցաւ .

Պ . Սուլթան Մէհմէտ Տրավրդոնն առնէլ յե-
տոյ , յէւրապա վերադառնալով , Քալաքաց երկիրն
արշաւեց , ուր այն ժամանակ կը տիրէր Տրավրիլ
իշխանն՝ զոր Օսմանեամբ Գաղթքնը վայգուտա իան-
ուանէին , զի իւր բոլոր թշնամիներն ու բռնած
գերիներն ի ցից կը հանէր : Տրավրիլ Սուլթան Մէ-
հմէտի զօրութենէն զարհուրեալ՝ ձանչեց նորա
գերիշխանութիւնն և միանգ սահման յանձն առաւ
12,000 ոսկի դահեկան հարկ վճարել , բայց ապա
իւր գաշինքը գրժելով , Հունդարաց հետ միաբա-
նեցաւ և Սուլթաննին գեսօնաններն ի ցից հանել
տալով՝ Օսմանեան երկիրն արշաւեց : Յայնժամ
Սուլթան Մէհմէտ իւր բոլոր զօրութեամբը նո-
րէն գալաքիոյ վրայ յարձակեցաւ , Տրավրիլ բա-
նակը ջախչանից և երկիրն ալ իւր տէրութեան

Հետ միացուց (1462)։ Տրագիւլ՝ Հունդարիս փախ-
չելով՝ ապատեցաւ։

Հ. Գարամանիոյ ի՞նչպէս տիրեցին Օսմաննեանք,
են ի՞նչ վախնան ունեցան Վաճառտիկցոց ևն Ուզուն
Հասամի դեմ Մղոնստ պատերազմունք։

Պ. Օսմաննեանց գէնքն ամեն ուրեք յաջողութեամբ
կը պակուէին, և միայն Խակէնտէր պէյի դէմ ե-
ղած արշաւանքներն ապարդիւն կ'ելնէին։ Այս
պատճառաւ Սուլթանն հաշուութիւն կնքեց անոր
հետ։ Բայց տարի մը վերջն երբ Օսմանցւոց և Վե-
նետիկցւոց միջն պատերազմ ծագեցաւ, Խակէնտէր
պէյ դրժեց իւր դաշինքն և դարձեալ գէնք առաւ
Օսմանցւոց դէմ, մինչեւ որ մահը վրայ հասնելով
վերջ տուաւ իւր շահատակութեանց։ Վենետիկցիք
հետզհետէ կորուսած էին Սրգոս, կորնթոս և
Նեկրոբոնթէ, և երբ տեսան որ իրենց առանձին
գօրութեամբը չպիտի կրնային յաղթել Սուլթանին,
նորա դէմ դաշնակցութիւն մը կազմեցին, որուն
մասնակցեցաւ նաեւ Թիւրքմէններու իշխանն Ու-
զուն Հասան։ Օսմաննեանց մեծ թշնամին էին նաեւ
Գարամանի իշխանք, որք 150 տարիներէ ի վեր
չին դադրեր անոնց երկիրներն ասպատակելէ։
Սուլթան Մէհմէտ՝ նախ ուղեց այս թշնամին
ընացինջ ընել և ապա դաշնակցաց դէմ երթալ։
Քիչ ժամանակի մէջ, բովանդակ Գարամանիս նը-
ուաճեցաւ Օսմաննեան տիրապետութեան ներքեւ։
Այնուհետեւ Ուզուն Հասանի դէմ զրկեց զՄահմուտ
փաշա՝ Եպարքոսն՝ որ Օթլուգ պէյի կոչուած տեղը

նորա բանակին հանդիպելով, զարկաւ ցիրուցան ը-
րաւ զայն (1472)։

Հ. Ի՞նչպէս եղան Խրիմու են Աղպամիոյ արշաւանք-
ներն։

Պ. Մոլոավիոյ իշխանն՝ Ստեփան Դ. այն ժա-
մանակները դադրեցաւ էր Սուլթանին հարկ
վճարելն։ այս պատճառաւ բանակ մը զրկուեցաւ
նորա դէմ։ սակայն այս արշաւանք յաջորդութիւն
չունեցաւ։ Աւելի յաջող եղաւ Օսմաննեանց արշա-
ւանքն ի Գըրըմ, ուր ձենովացիք իրեւ բացար-
ձակ տէր Կիշխէին։ Սուլթանը՝ մեծ նաւառորդ
մը զրկեց, որ Քէֆէ, Ազով և ուրիշ շատ քաղաք-
ներ գրաւեց և Մէնկիլկէրայի խանը վերահաստա-
տեց իւր իշխանութեան գահուն վրայ։ ապա դար-
ձաւ եկաւ Ագգէրմանի և Դանուբ գետին բերան-
ներուն տիրեց։ Նոյնպէս յաջող եղաւ Օսմաննեանց
արշաւանքն յԱլպանիս, ուր Գրոիս բերդն և Շգոտ-
րա քաղաքն առին (1479)։

Նոյն տարին Սուլթան Մէհմէտ՝ բանակ մ'ալ
Հունդարաց երկիրը զրկեց տասն փաշաներու հրա-
մանաց տակ։ Սակայն այս փաշաներուն միջեւ ծա-
գած երկարակութիւնը պատճառ եղաւ որ թըշ-
նամին զիրենք զարկաւ։ Հունդարացիք բարբարո-
սաբար ջարդեցին բոլոր գերիները (13 հոկտեմբ.
1479)։ Ասոր վրէժը լրուծեցին Օսմաննեանք հետեւ-
եալ տարին՝ Սթիրիս, Գարինթիս և Գառնիոլ
գաւառներն ասպատակելով և բազում կոտորած
ընելով։

Հ. Ի՞նչ արդիսեք ունեցած Հոգոսի արշանանքն՝
և ե՞րբ մեռա Ֆաթիհ Սուլթան Մհեմմիտ.

Պ. Ծովու վրայ Սուլթանին գէնքն յաջողութիւն
կը գտնէր : Աշտիք Սհմէտ փաշան՝ Զանթա և Ս.
Մաւրոյ կղղիներուն տիրեց . Սուլթանն ինք եւս
Խոտալիոյ Օրանթոյ քաղաքն առաւ (14 օգոս. 1480) ,
և կը պատրաստուէր նուանել զրովանդակ Խոտալիո :
Սուկայն Հռոդոսի գէմ Օտաննեանց արշաւանքն յա-
ջուղ վախճան չունեցաւ : Սուլթան Մէհմէտ այս
կղղոյն վրայ զրկած էր Մէսի ; փաշան՝ հարիւր
կղղոյն վրայ զրկած էր Մէսի ; փաշան՝ հարիւր
վաթսուն նուուց տորմիզով մը : Մայիս 23ին
(1480) Օտաննեանք կղղոյն առջեւ հասան և ցա-
մաք ելան . Մէսին փաշա ամեն կողմէ սաստ-
կապէս պաշարեց բերդն և երկու ամիս անդադար
կապէս պաշարեց բերդն և երկու ամիս անդադար
ուժքակոծեց . յետոյ ընդհանուր յարձակում մը ըրաւ :
Երուսաղէմի Ս. Յովհաննու կարգին ասովետներն՝
որ Հռոդոսի մէջ կիշխէին , երգում ըրած էին քա-
ղաքին աւելակաց ներքեւ թաղուիլ քան թէ անձ-
գաղքին աւելակաց ներքեւ թաղուիլ քան թէ անձ-

Ս. յս մէծ աշխարհակալն՝ որ իրաւամբ իւր ազ-
գէն յաղթող (Ֆաթիհ) անուանեցաւ , ո՛չ միայն իւր

սլատերազմներովն , այլ և իւր օրէնսդրութեամբ
անուանի եղաւ . Վարչութեան շատ ձիւղերուն մէջ
նոր կարգեր մոցուց : Օամանեան գիտնոց (Խլէմա) ,
այժմեան կազմութիւնն ու գասակարգութիւնն իւր
գործն է :

ԳԼՈՒԽ Ը.

ՍՈՒԼԹԱՆ ՊԱՅԱՋԻՏ Փ.

(1481—1512)

Հ. Սուլթան Մհեմմիտին ո՞վ յաջորդեց .

Պ. Սուլթան Մէհմէտին օրինաւոր յաջորդն
էր իւր երեց որդին Պայազիտ , սակայն Եպարքու
Մէհմէտ փաշա ուզեց գահն հանել անոր երկ-
րորդ որդին ձեմ՝ առոյգ և քաջ պատանին . ուս-
տի այս նպատակաւ Սուլթանին մահը ծածկեց և
ձեմին լուր զրկեց որ փութայ կ . Պօլիս դայ : Պա-
յազիտ արքայորդին նոյն ժամանակին Ամասիա կը
գտնուէր . երբ իւր հօր մահուան գոյժն առաւ ,
4000 հեծեալով ճանբայ ելաւ մայրաքաղաքը գա-
լու : ձեմ կառարկէր թէ իւր Պայազիտ եղբայրն՝
հօրը գահակալութենէն առաջ ծնած լինելով , հա-
սարակ մարդու որդի և ո՛չ թէ թագաֆառանգ
իւրան կը համարուէր : Այսպէս շատերն համոզեց

լավութերն իրենց ձեռքը թողլով։ Խակինք իւր եպար-
քոսին ձեռքով դարձեալ նուածեց զԳարամանցիս
և իւր զէնքն Հունգարաց դէմ դարձուց։ Մաթի-
աս Գորիլին՝ Հունգարաց թագաւորոն և Օսմանեանց
ոխերիմ թշնամին՝ մեռած լինելով, Հունգարիա
խոռվութեան և անիշխանութեան մէջ ինկած էր։
Այս բան յարմար առիթ էր Սուլթան Պայազիտի՝
նայն երկրին մէկ մասը նուածելու, մանաւանդ
Պէլքատի բերդը ձեռք անցունելու։ Անմիջապէս
երկու բանակ պատրաստուեցաւ, որոց մին գնաց
պաշարեց զՊելքատ, խակ երկրարդն՝ ընդ հրամա-
նատրութեամբ Սիւլէյման փաշայի՝ Հունգարիա
մուաւ։ Հունգարացիք փաշային զօրքը զարկին և
ետ մղեցին, որով հարկ եղաւ բառնալ Պէլքատի
պաշարումն։ Օսմանեանք Գարինթիա և Սթիրիա
մտան և երկու տարի տիրեցին։ Վերջապէս (1495)
Հունգարիոյ հետ եռամեայ զինադադար մը կնքը-
ուելով, թշնամութիւնք դադրեցան։

Հ. Սուլթան Պայազիտ ուրիշ ի՞նչ արշականքներ ը-
րաւ և այս արշականքներն ի՞նչ հետեւանք ունեցան։

Պ. Արշաւանք մ'ալ ըրաւ Սուլթանը Վենե-
տիկցւոց երկիրն, և իւր զօրագունդերը մինչեւ
Վիչենցա յառաջացան։ Խակ իւր նաւատորմն առաւ
անոնց ձեռքէն Մոտոն, Նաւարին և Գորոն քա-
ղաքներն (1500)։ Վենետիկցիք տեսնելով որ կա-
րող չէին առանձին դէմ դնել այս ահաւոր թըշ-
նամւոյն, Քրիստոնեայ տէրութեանց օգնութեան
դիմեցին և Օսմանեանց դէմ գաշնակցութիւն մը

և բառական զօրաւոր բանակ մը կազմելով՝ Պառ-
ասի քով զարկաւ Այաղ փաշային զօրքն և քա-
ղաքին աիրեց։ Նոյն միջոցին Պայազիտ ալ՝ իւր
բանակին գլուխն անցած՝ իւր եղբօրը վրայ կու-
գար։ Երկու եղբարք եկան պատահեցան իրարու-
նէնիշհիրի դաշտին մէջ, և բուռն զօրութեամբ
իրարու ընդհարեցան։ Ճեմ մեծ քաջութիւն գոր-
ծեց, սակայն իվերջը յաղթուեցաւ իւրացնոց մատ-
նութեամբն և ստիպուեցաւ փախչիլ։ Երկորդու-
պատերազմ մ'ալ մղեց իւր եղբօր զօրաց դէմ,
բայց դարձեալ յաղթուելով, փախսաւ Հունդոսի
սասպետաց քով ապաստանեցաւ։ Սուլթանն Հու-
նդոսուց հետ հաշտութիւն ընելով, դաղտնի դա-
շինք դրաւ անոնց հետ որ զձեմ իրենց ձեռքին
տակ պահեն և ազատ չժողովւն, խակ ինքը տարին
45,000 սակի դահեկան վճարէ սոցա։ Պայմանն ըն-
դունուեցաւ, Հունդոսի սասպետները զարքացորդին
յնչուոպա զրկեցին, որ քանի մը տարի յետոյ մե-
ռաւ Հունդոմի մէջ։

Հ. Հունգարիոյ հետ եղած պատերազմն ի՞նչ վախ-
ան ունեցան։

Պ. Պայազիտ այսայիս իւր դահն ապահովիցնե-
լով՝ Եգիպտացւոց դէմ պատերազմի ելաւ, բայց
իւր բանակները զարնուեցան Կիլիկիոյ մէջ և Ա-
տանա ու Տարտաս քաղաքները թշնամւոյն ձեռքն
անցան։ Այս տաթիւ նաեւ Գարամանցիք տալը-
տամիրեցան։ Յայնժամ Սուլթանը խաղաղութիւն
կաստատեց Եգիպտացւոց հետ՝ անոնց առած քա-

կազմեցին : որում մասնակցեցաւ նաեւ Հունդարիս : Դաշնակցելը նաւատորմը՝ իրէ վէղյի առջև Օսմանեան նաւերուն պատահելով՝ անոնցմէ չառերն ընկըզմեց . անտի դնաց Ս. Մատրա կրկին առաւ . թշնամեաց նաւերը մինչեւ Փոքր - Աստիյ ծովի զերքը տարածուեցան և շատ քաղաքներ այրեցին : Այս դժբաղդութեանց զրայ առեցաւ նաեւ Գարանանի առաստամբութիւնն և Կիպրոսի արշաւանց անյաջող երքն : Սուլթանն պատշաճ համարեց հաջուռթիւն կնքել թշնամեաց հետ (1503), իւր ձեռքը պահելով Մոտոն, Գորոն և Լեմանթէ քաղաքները : Նաեւ Հունդարաց հետ եօթնամեաց նոր գինադադար մը կնքեց :

Հ. Սուլթան Պայազիսի թագանորութեան վերջին տարիները Կ. Պոլոց մէջ թէ պատահեցաւ .

Պ. Սուլթան Պայազիսի թագանորութեան վերջին տարիները (1500, սեպտ. 14) զարհութելի երկրաշարժ մը մեծ աւեր գործ եց Կ. Պոլոց մէջ : 1070 տուն, 109 մզկիթ կործանեցան և անհամար ուրիշ շէնքեր փառացան : Ծովը քաղաքին մէկ մասն ոդղեց : Նարծը քառասուն և հինգ օր անդադար չարունակեց : Ադրիանուպոլիս, Զօրլու, Տիմրիթոքա և Կէլիալու աւերակ դարձան :

Հ. Ի՞նչ պատճառա գահընկեց եղան են ե՞ր մեռաւ .

Պ. Սուլթան Պայազիս, իւր տէրութիւնն առաւել եւս ապահովցնելը համար, իւր որդւոց ութուանց յանձնած էր գաւառաց կաւալիարութիւնն : Սակայն այս կարգադրութիւն մեծամեծ խը-

ռովութեանց պատճառ եղաւ : Արքայորդիք ուզելով իրարու իշխանութիւնն յակիշտակել և միանգամայն արքայական գահը գրաւել, զէնք առին և իրարու դէմ ելան, և քաղաքային պատերազմն երկար ժամանակ չարունակեց : Վէրջապէս, Եէնիչէրիք՝ որք Սէլիմ արքայորդւոյն կողմը բռնածէին, պահանջեցին Սուլթան Պայազիսէն, որպէս զիւր գահէն հրաժարի և իրեն յաջորդ ճանչէ զԱկլիմ : Սուլթանն հարկադրեցաւ զիջանիլ այս պահանջման, և քսան և երեք օր յետոյ կնքեց իւր կեանքը (1512) :

ԳԼՈՒԽ Ձ.

ՍՈՒԼԹԱՆ ՍԷԼԻՄ Ա.

(1512—1520)

Հ. Ի՞՞նչ համար Սուլթան Սէլիմ իւր եղոր դիմ պատերազմեցաւ .

Պ. Սուլթան Սէլիմ՝ իւր հօրը գահն ելնելուն պէս՝ գահակալութեան իրիւներու պատճառ եղողները բոլորովին ջնջեց, և պատերազմի ելաւ իւր Ահմէտ եղոր դէմ, որ զՊրուսա գրաւած էր և Պոլոց զրայ կուգար զինքը գահընկեց ընելու համար : Եէնիչէրիք՝ Ահմէտին զօրաբանակը չախջա-

խեցին և զինքն ալ գերի բռնելով սպաննեցին (24
սպրիւ 1513) :

Հ. Պարսից դէմարշանամքն ի՞նչ արդինքը ունեցաւ .

Պ. Յաջորդ տարին, 150,000 զօրօք Ասիա անցնե-
լով, Պարսից Շահ Խամայիլ թագաւորին վրայ գնաց :

Պարսիկներն ետ քաշուելով՝ ամեն կողմ անսապատ
գարձուցին որպէս զի Օսմաննեան զօրքը պաշար
չգտնէ : Սակայն արիստիրոտ Սուլթանը բնաւ չվա-
տեցաւ և ոչ ալ Եէնիչէրիներու ամստամբութիւ-
նը կասեցուց զինքն իւր ճանապարհէն, այլ իւր
բանակն անընդհատ յառաջ վարելով, Զալտըրան
գաշտին մէջ թշնամոյն վրայ հասաւ (23 օդուտ ·
1514) : Պարսից զօրքը ըրջակայ բարձունքը բռնած-
կեցած էին : Սուլթան Սէլիմ, առանց միտ դնելու
իւր զօրաց յոդնութեան, անմիջապէս յարձակելու
հրաման տուաւ, և իւր թնդանօթաց չնորհիւ յաղ-
թական հանդիսացաւ . Պարսից բանակը բոլորովին
ցրուեց և Շահ Խամայիլի գանձերը ձեռք անցուց :

Ապա յառաջ խաղալով՝ Դավրէժ քաղաքը դրաւեց :

Հ. Քրդաստան ի՞նչպէս Օսմաննեանց ձեռքն անցաւ .

Պ. Եէնիչէրիք՝ նոր ապատամբութեամբ մը՝
պարտաւորեցին զՍուլթանն՝ ի Կ. Պօլիս վերադառ-
նալու, և երբ հոն հասաւ, մահուամբ պատժեց
խորվարաց պարագլուխներն : Այն ժամանակ
Քուրդերն, որ Պարսից իշխանութեան տակ էին,
տեսնելով որ անոնց զօրութիւնն Զալտըրանի դաշ-
տին մէջ խորտակեցաւ, ուզեցին Օսմաննեանց հը-
պատակիւլ : Սուլթանին զօրքն հետզհետէ գրաւեցին

Տիարագէքիր, Մարտին և Արղանա քաղաքներն, և
քիչ ժամանակի մէջ Քրդաստան և Մուսուլի գա-
ւառը միացան Օսմաննեան պետութեան հետ (1515) :

Հ. Ի՞նչպէս եղաւ Եղիպտոսի արշականքն : Սուրիա
եւ Լիբանան ի՞նչպէս առնուեցաւ :

Պ. Դեռ Պարսկական պատերազմն չչը աւար-
տոծ, երբ Սուլթան Սէլիմ՝ Եգիպտոսի Գանսու
Կահվիրի Սուլթանին դէմդարձուց իւր զինքն : Այս
ծերունի թագաւորը շատ ջանաց որ պատերազմին
առաջն առնու և միանդամայն առաջարկեց միջնոր-
դել Օսմաննեանց և Պարսից միջեւ՝ զանոնք հաշ-
տեցնելու համար : Սակայն Սէլիմ ականջ չդրաւ և
անոր դեռպանը նախատանօք ետ զրկեց : Յայնժամ
Գանսու Կահվիրի իւր բանակաւն Օսմաննեանց դէմ
քալեց՝ զինու զօրութեամբ այս նախատամնաց վը-
րէժը լուծելու համար : Երկու զօրաբանակներն ի-
րարու բախեցան Տօլպէքի դաշտին մէջ : Օսման-
նեանք իրենց թնդանօթներուն առաւելութեամբ
հոս եւս յաղթութիւն տարին : Եգիպտոսի Սուլ-
թանը խառնուրդին մէջ սպաննուեցաւ, Հալէպ և
Գանակոս քաղաքներն իրենց դռները բացին յաղ-
թողաց, Արաբաց Եէյլուերն ու Լիբանան Մերան բը-
նակիչներն համատակեցան Սուլթան Սէլիմի և այս-
պէս բովանդակ Սուրիա՝ Օսմաննեան պետութեան
հետ միացաւ : Նոյն ժամանակին Սուլթան Սէլիմ՝
հասարակաց աղօթքներու մէջ « Պաշտպան երկուց
քաղաքաց, Մէքքէի և Մէտինէի » տիտղոսն ստա-
ցաւ, որ մինչեւ այն ատեն Եգիպտոսի Սուլթան-

Ներուն կը տքուէր իրեւ յաջորդք Խաղիթայից
(1516) :

Հ. Եղիպսոս հ՞նչպէս Օսմանիանց ձեռքն անցաւ .
Պ. Եգիպտացիք իրենց նոր Սուլթան ընտրեցին զԹուման պէջ : Ասլլթան Սէլիմ հաշտութիւն առաջարկեց նոր, այն պայմանաւ որ իւր գերիշխանութիւնը ճանչէ : Սակայն Եգիպտացիք չընդունեցին և Օսմանիանց դեսպաններն սպաննելով, հարկ եղաւ սպատերազմն յառաջ վարել, Արևան փաշա Գազայի քով նոր յաղթութիւն մը տարաւ Եգիպտացւոց վրայ, և բովանդակ Պաղեստինի տիրեց : Անտի յառաջ խաղացին Օսմաննեանք և Յունավար 22ին (1517) Ռատումայի դաշտաց մէջ Եգիպտական բանակին դէմ հասան, որուն անձամբ կը հրամայէր Թուման պէջ : Հոս Եգիպտացիք մէծ քաջութիւն ցոյց տուին . Թուման պէջ և իւր երկու զօրապետք երդում ըրած էին՝ վՍէլիմ սպաննելու համար . ուստի երեք դիւցազունք՝ գունդ մը քաջաց հետ յարձակեցան Եէնիչէրիներուն վըրայ և իրենց առջեւ ենող ամեն զոք զարկին ըսպաննեցին և մինչեւ Օսմանեան Սուլթանին մօտ հստան : Սակայն զՍինան փաշան Սուլթանը կարծելով՝ զարկին ձիէն վար ձգեցին . Եէնիչէրիք հազիւ կրցին մէծ ճգտմբ վտանգէ ազատել իրենց Սուլթանը : Վերջապէջ, այս անդամ եւս Օսմանեան թնդանօթներն իրենց կողմը վճռեցին յաղթութիւնը : Գահիրէ իւր դոները բացաւ յաղթուաց . բայց Թուման պէջ գիշերայն յանկարծ քա-

զաք մտնելով՝ պահապան զօրքը ջարդեց : Հարկ եղաւ Օսմաննեանց նորէն պաշարիկ քաղաքն և երեք աւուր արիւնահեղ պատերազմէ մը յետոյ հազիւ կրցին միւսանգամ տիրել անոր :

Թուման պէջ՝ իւր զօրաց մնացեալ մասին հետ՝ Նեղոսի արեւելեան կողմն անցաւ, և փոքրիկ կը սիւներով կը տկարացնէր Սուլթանին բանակը : Սուլթան Սէլիմ դարձեալ հաշտութիւն առաջարկեց, և երբ չընդունուեցաւ, 40,000 զօրօք յարձակեցաւ թշնամույն վրայ : Թուման պէջ յաղթը ուեցաւ և իւրացնոց մատնութեամբ դերի բանը ուեցաւ : Սէլիմ Գահիրէի դրան վրաց կախել տուաւ զայն (13 ապրիլ 1519), և այսպէս տէր եղաւ Եգիպտուի : Մէքքէ քաղաքն եւս Եգիպտոսի հետ՝ Օսմաննեանց ձեռքն անցաւ :

Սուլթան Սէլիմ Եգիպտոսի կառավարութեան ձեւը չփոխեց . հոն իշխող Մէմլուք ողէ յերը վարչութեան գլուխը մնացին և միայն փաշա մը կուսակալ գրուեցաւ : Եգիպտոսի վրայ տարուած յաղթութեան երրորդ տարին մեռաւ Սուլթան Սէլիմ (22 սեպտ. 1520) :

ԳԼՈՒԽԸ Ժ.

ՍՈՒԼԹ-ԱՆ ՄԻՒԼԵՅՄԱՆ Ա.

(1520—1566)

Հ. Ի՞՞նչ պատճառաւ Սուլթան Սիրէջման զօրք ղըր-
իեց Ասորոց և Հոռեգարաց դեմ.

Պ. Սուլթան Սէլիմին յաջորդեց իւր որդին Սիր-
էյման Ա. որոյ թագաւորութեան առաջին տա-
րին Ասորոց կուսակալը՝ Ճամպէրլի Ղազալի՝ ա-
պրստամբեցաւ Օսմանեան տիրապետութեան դէմ:
Սորու վրայ դրկուեցաւ Ֆէրհատ փաշա, որ գնաց
ապստամբութիւնը զսպեց և ապստամբապետն ալ
բոնելով սպաննեց: Այնուհետեւ մեծ պատերազմ
մը ծագեցաւ ընդ մէջ Հունդարաց և Օսմանեանց,
զի Սուլթան Սիւլէյման՝ դեսպան զրկելով՝ հարկ
պահանջած էր Հունդարաց թագաւորէն, և Հուն-
դարացիք ալ իրենց դէմ նախատինք համարելով՝
սպաննած էին Օսմանեան դեսպանն, հակառակ
միջազգային օրինաց: Յայնժամ Սուլթանն յառաջ-
խազցութեան հրաման տուաւ իւր զօրաբանա-
կաց: Ահմէտ փաշա իւր զօրագնդերով պաշարեց
Շուսաց քաղաքն և տիրեց անոր: Նոյնպէս Փիրի
փաշա Պէլքրատի բերդը գրաւեց երկար պաշարու-
մէ մը և 20 յարձակումներէ յետոյ (29 օգոստ
1521): Ուրիշ Օսմանեան զօրաբանակ մ'ալ Թրան-
սիլվանիան ասպատակեց:

Հ. Օսմանեանը ի՞՞նչիս սիրեցին Հոռդոսի.

Պ. Հետեւեալ տարին Սուլթան Սիւլէյման մէծ
նաւատորմը մը զրկեց Հոռողացւոց դէմ, որովհետեւ
անոնց ասպետներն իրենց նաւերով գրաւած էին
Օսմանեան ծովեզրն և կ. Պօլաց ու Եգիպտոսի
միջեւ հաղորդակցութիւնն ընդհատած: Օգոստոսի
սկիզբը (1522) 100,000 զօրք ցամաք ելան. մինչեւ
սեպտ. 25 բերդերն ումբակոծեցին և նոյն օրն ընդ-
հանուըր յարձակում մ'ըրին. սակայն մեծ կորստեամբ
ետ մղուեցան: Այս յարձակումներն երկու ամիս
շարունակ կրկնուեցան, և թէպէտ ասպետք մեծ
քաջութեամբ դիմադրեցին, սակայն ի վերջոյ տկա-
րանալով՝ հարկադրեցան անձնատուր լինել: Օս-
մանեան նաւերը զանոնք տարին Մալթա կղզին
զոր իրենց պարզեւ տուած էր Կարոլոս Ե. Կայսրն:
Այնուհետեւ յիշեալ ասպետք Մալթայի ասպետք
կոչուեցան: Հոռողոսի հետ Օսմանեանց ձեռքն ին-
կան նաեւ անոր շրջակայ կղզիք:

Հ. Ի՞՞նչ պատճառաւ Սուլթանը պատերազմ հրա-
տարակեց Հոռեգարաց դեմ, եռ ի՞՞նչ նդաւ սոյն պատե-
րազմին փախնամել.

Պ. Ապա Սուլթանին զօրքը գնաց լսաղաղել
զեգիպտոս, որոյ կուսակալն՝ Ահմէտ փաշա ապրս-
տամբած և ինքինք Սուլթան հոչակած էր: Երբ
քիչ ժամանակի մէջ ապստամբութիւնը զսպուեցաւ,
Սուլթան Սիւլէյման փորձ փորձեց բովանդակ Վա-
լաքիան հպատակեցնել իրեն, բայց չյաջողեցաւ,
զի Վալաքները՝ Թրանսիլվանիոյ իշխանին օժան-

դակութեամբ՝ իրենց երկրէն վանեցին Օսմաննեան զօրքը։ Հարկ եղաւ իրենց իրենց նախկին վիճակին մէջ թողուլ։

Եւնիչէրիք նյոյն միջոցին անդադար ապստամբութիւններով և մակարգութիւններով՝ կը խոռոշին տէրութիւնը։ Սուլթան Միւլէ յման ուզեց զբաղեցնել զանոնք և այս նպատակաւ արշաւանք մը պատրաստեց ի Հունդարիա։ 100,000 հոգւոյ զօրաբանակ մը՝ 300 թնդանօթներով՝ Հունդարիա մտաւ, Բեղրովարատինի, Սերմիայի և Կատչքի տիրեց, և Մոհագի առջեւ թշնամւոյն բանակին դէմ հասաւ, որուն կը հրամանէր Լուդովիկոս Բ. Հունդարաց թագաւորն։ Երկու բանակները սաստկապէս ընդհարեցան։ Ի սկզբան յազմութեամբ Հունդարաց կողմը կը հակէր։ Հունդարական զօրքն՝ իրենց քաջ թագաւորին օրինական քաջալերեալ՝ ամեն կողմէ կը յառաջանար և Յումանեան զօրքն ետ կը մղէր։ Քանի մը հեծելազօրք մինչեւ Սուլթանին կիցած տեղն յառաջանալով՝ զայն բոնելու վրայ էին, երբ արիստորոն Միւլէ յման հրաման ըրաւ իւր հրետանիներն յերեւան հանել, որոց արձակած կրակին առջեւ չլիցին տոկալ Հունդարացիք և ուսան խառնիխուռան փափչիլ։ Իրենց Լուդովիկոս թագաւորն՝ իւր զօրաց մեծ մասին հետ Մոհագի մեծ ճահճած կրեցաւ և հոն ազմին մէջ ընկդելով՝ իւր մահը գտաւ (օգոստ. 1526)։ Հունդարաց 25,000 դիմակները ճաճկած էին պատերազմի դաշտն։ Ամիս մը յետոյ Պուտա մայրաքաղաքն իւր

դռները բացաւ յաղթողաց։ 100,000 գերի և թագաւորական գանձն այս յաղթութեան պառզն եղան։

Եւնիչէրիք՝ Ընդդէմ միջազգ ային օրինաց՝ իրենց գերիները ջարդելով, Հունդարք պարտաւորեցան յուսահատական քաջութեամբ անոնց դէմ դնել։ Միքայէլ Նէկի իշխանը՝ կրան բերդին մէջ ամրացած՝ անոնց բոլոր ճիգն ի դերեւ հանեց։ Նոյնպէս ուրիշ շատ իշխաններ՝ զանազան անուր սեղեր պաստանած՝ Սուլթանին զօրքը կը կոտրէին։ Սուլթան Միւլէ յման՝ Զարոլէա իշխանն Հունդարաց վրայ թագաւոր գնելով, Կ. Պոլիս վերադարձաւ։ Հունդարական պատերազմին ժամանակ, Ամիս մէջ, մանաւանդ ի Կիլիկիա և ի Գարամանիա, քանի մը մեծ ապստամբապետներ յերեւան ելած էին, յորոց ամենէն զօրաւորը՝ Գալէնտէր Օղլու՝ քանի մը յաղթութիւն տարած էր Օսմանեան զօրաց վրայ։ Սուլթան Միւլէ յման՝ նոցա դէմ զրկեց Խարակիմ փաշ Եպարքուն՝ որ գնաց նուածեց զանոնք։

Հ. Պուտա քաղաքն ի՞նչպէս առնենցաւ։

Պ. Հունդարացիք, Լուդովիկոս Բ. կ մահուանէն յետոյ, իրենց թագաւոր ընտրած էին Ֆէրտինանտ արշիդուքսն՝ որ կարողոս Ն. կայսեր եղբարին էր։ Զարոլէա Օսմանեան զօրաց աջակցութեամբ կը ջանար իւր գահը պաշտպանել, բայց իւր բանակը թոքայի քով բոլորովին յաղթը ունեցաւ, Սուլթան Միւլէ յմանէն նոր օգնութիւն խնդրեց։ Սուլթանն անմիջապէս 250,000 զօրօք

Հունդարիա մտաւ, Պուտաքաղաքն առաւ և գջարիքա դարձեալ իւր գահը բազմեցուց : Միեւնոյն ժամանակ, Մոլտավիոյ Պոկտան իշխանն ինքնակամ հպատակեցաւ Օսմանեան Սուլթանին :

Հ . Օսմանեանը ի՞նչպէս պաշարեցին զվիկննաւ .

Պ . Անտի Սուլթանն իւր բանակն յառաջ խաղացնելով, գնաց պաշարեց Վլիէննա (1529) : Ութ հարիւր նաւաց տորմիդ մ'ալ Դանուբ գետին վըրայէն իւր բանակին կ'ընկերանար : 16,000 պահապան զօրք և 70 թնդանօթ միայն կային Վլիէննայի մէջ : Սակայն այս սակաւաթիւ զօրք՝ իրենց հրամանատարաց օրինակաւն սրտապնդեալ՝ մեծ քաջութեամբ պատերազմեցան և Օսմանեանց բոլոր ձիգն ի դերեւ հանեցին : Փանդուած պարիսպներն անդադար կը նորոգէին, թշնամւոյն մարտկոցները կը քանդէին և վերջապէս անոր բանակետը կրակի տուին : Սուլթանը տեսնելով իւր զօրաց մեծ կոտորածն, յորոց 40,000 հոգի դիտապաստ ինկած էին Վլիէննայի պարսպաց առջեւ, պաշարումը վերուց և Պուտա վերադարձաւ . և որպէս զի իւր զօրաց մոռցնել տայ սոյն անյաջորդութիւնը, մեծ հանդիսիւ թագաւոր պատկեց գֆարուէս :

Հ . Ի՞նչպէս վերջացաւ այս պատերազմն, եւ Օսմանեանը Պարսկատանի ո՞ր քաղաքներն առին .

Պ . Երեք տարի յետոյ, Օսմանեան նոր զօրաբանակ մը յԱւստորիա մտաւ և շատ տեղեր ասպատակեց . սակայն կայսերական զօրքն Մարտուրկի

քով գարկաւ զՅամանեան բանակն և հարկադրեց զայն յետո նահանջնելու : Նոյնպէս ծովու վրայ յաջողութիւն չփառ Օսմանեանց զէնքն, և Գորոն ու Բամբրաս քաղաքները թշնամւոյն ծեռքն անցան : Սուլթանն հետեւեալ տաղին (1533) Փերդինանդին հետ զինադադար կնքեց, որովհետեւ միտքը դըրած էր արշաւանք մ'ընել ի Պարսկաստան : Իպրածիմ փաշ՝ Օսմանեան բանակին հրամանատար անուանեցաւ և գնաց նախ Վասպուրականի գաւառին տիրեց . անտի իւր զօրքն յառաջ խաղացուց Դավրէժի վրայ, զոր առանց ընդդիմութեան առաւ (13 յուլիս 1534) : Իսկ Սուլթանն անձամբ Պալտասի վրայ գնաց, որուն առանց կռուոյ տիրելով՝ վերադարձաւ ի Պոլիս :

Հ . Վենետիկուոց եւ Հոնդարաց պատերազմն ի՞նչպէս վերջացաւ .

Պ . Այն ժամանակ Ֆրանսուա Բ . Ֆրանսայի թագաւորն՝ Օսմանեանց հետ դաշնակցութիւն մը կնքեց ընդդէմ Կարոլոս Ն . կայսեր : Սուլթանն ուզեց նաեւ այս դաշնակցութեան մէջ առնուլ վլիէննետիկցիս, և երբ նոքա յանձն չառին և կայսեր կողմն անցան, իւր նաւատորմն անոնց դէմ դրկեց և բազում կղզիներ առաւ անոնց ձեռքէն : Վենետիկցիք ստիպուեցան հաշտութիւն ինդրել և Արշիպեղագոսի կղզիները, Նաւալիիան և Գալիմատիոյ քանի մը քաղաքները Սուլթանին թողուլ՝ հանդերձ 300,000 ոսկի գահեկան պատերազմական տուգանօք : Յամաքի վրայ եւս Օսմանեան զէնքն

յաջողութիւն կը գտնէր : Սուլթանն՝ իւր բանակին գլուխն անցած՝ Հունդարիա մտած էր . Կրան, Շթուհկվայզէնպուրկ և ուրիշ քանի մը քաղաքներ իւր ձեռքն անցան : Կարողոս և Փերտինանդ այս երկարատեւ պատերազմներէն շատ յոդնած էին և խաղաղութեան կը բաղձային : Երկու պատերազմող կողմանք սկսան հաշտութեան վրայ բանակցիւ և վերջապէս իրենց միջեւ հնդամեայ զինադադար մը կնքուեցաւ այն պայմանաւ որ, Փերտինանդ իւր ձեռքը մնացած Հունդարիոյ մասին համար 50,000 ոսկի դահկեան տուրք վճարէ Սուլթանին :

Հ. Օամսենամբ ի՞նչպէս տիրեցին բովանդակ Քոյրդատանամբ եռ Վրաց գառառներուն .

Պ. Երր Եւրոպական պատերազմը դադրեցաւ, Սուլթան Սիւլէյման նորէն Ասիա անցաւ, Պարսից վրայ քալեց, Քուրդաստանի մնացեալ մասն առաւ անոնց ձեռքէն, Վան քաղաքին տիրեց և Երկրորդ անդամ յաղթանակաւ Դաւրէժ մոտաւ : Անտի գնաց Վրաստանի մէկ մասն ալ նուածեց (1549) և դարձեալ իւր բանակաւն Եւրոպա անցաւ, ուր կը կոչէին զինքն՝ Հունդարաց երկրին մէջ պատահած դէպքերը :

Յետ մահուանն Զարոլեայի, Խղապէլ թագուհոյն խորհրդականը՝ Մարտինուցցի՝ հրաւիրեց զՓերտինանդ՝ գրաւելու Թրանսիլվանիան և բովանդակ Հունդարիան : Արդէն Գերմանական զօրագունդերն սկսած էին յառաջ խաղալ Հունդարիան ապատամբութիւն մը պատ-

րաստած էին, երբ Սուլթան Սիւլէյման զայս ամենայն լսելով՝ 80,000 զօրօք Դանուելն անցաւ և ապստամբաց վրայ քալեց : Բէշթայի կուսակալ Ահմէտ փաշա՝ քանի մը յաղթութեամբք՝ Դմչվարի բերդն առաւ և Պանադ գաւառն ի հնագանդութիւն բերաւ : Ապա Օսմաննեանք Երլաւ բերդը պաշարեցին, սակայն աստ բուռն ընդդիմութիւն գտնելով, հարկադրեցան պաշարումը բառնալ և յետո նահանջել (1552) :

Հ. Պարսկական եռ Հունգարական պատերազմներն ի՞նչպէս վերջացան եռ Օսմաննեանք ի՞նչպէս առին Սիկիթ բերդը .

Պ. Միեւնոյն ժամանակ Պարսկական պատերազմը կը շարունակէր . Շահ Թահմաս՝ Պարսից թագաւորն՝ իսկէնոտէր փաշայի յաղթած և Սրճէշ ու Խլաթ քաղաքներն առած էր : Սուլթան Սիւլէյման դարձեալ Ասիա անցաւ, անձամբ Պարսից վրայ երթալով՝ նուածեց զանոնք, և ապա հաշտութիւն կնքեց նոցա հետ (29 մայիս 1555) :

Երլաւի անյաջող պատերազմէն յետոյ, Օսմաննեանք՝ վեցամսեաց զինադադար մը կնքած էին Հունդարաց հետ, սակայն երկու կողմն եւս պայմանները չյարգեցին և պատերազմը վերսկսան : Թագմաս Նատաշտի մեծ յաղթութիւն մը տարաւ Ալի փաշայի բանակին վրայ . միւս կողմէ Օսմաննեան զօրքն ալ Հունդարաց քանի մը քաղաքները գրաւեցին, և վերջապէս պատերազմոլ երկու կողմանց միջեւ ութամեաց զինադադար մը կնքուե-

լով, պատերազմը վերջ գտաւ (1562): Օսմանեան նաւատորմը փորձ մ'ըրաւ Մալթա կղզւոյն տիրելու, (1565) բայց չյաջողեցաւ:

Երկրորդ անգամ մ'ալ հարկ եղաւ Սուլթան Միքյամանի ի Հունդարիա արշաւել՝ Սուեֆան Զարովեա թագաւորին օգնելու համար, զի Փերտինանդին մահուանէն յետոյ, Զարովեայի և Մարսիմիլէն կայսեր միջեւ թշնամութիւնները վերասոին սկսած էին, և Սուեֆան Զարովեայի բանակն չարաչար յաղթուած էր կայսերական զօրքէն: Օսմանեան զօրագունդերն եկան պաշարեցին Սիրէթի բերդն, որուն կը հրամայէր Թովմաս Զրինի: Այս քաջ իշխանն երկու շաբաթ գէմ դրաւ թշնամւոյն, բայց երբ տեսաւ որ ոչ եւս կարելի էր դիմադրել, քաղաքը կրակի տուաւ և ինքն իւր զօրքով ամրոցը քաշուեցաւ: Ավակայն չորս ամիս պաշարելէ յետոյ, Օսմանեանք չէին կրցած մեծ վնաս մը հասցընել ամրոցին: Այս միջոցիս մեռաւ Սուլթան Սիրէթյան (5 սեպտ. 1566) որ արդէն երկար ժամանակէ հետէ հիւանդ էր: Եսլարքոս Մէհէմմէտ փաշ՝ զօրքը չվհաստեցնելու համար՝ Սուլթանին մահը ծածկեց և ամեն օր թագտուորական կեղծ հրամաններ կը հրատարակէր: Սիրէթի պատերազմը կը շարունակէր: Զրինի տեսնելով որ ոչ եւս կարելի է ամրոցը պաշտպանել, ուզեց քաջութեամբ մեռնիլ: Վեց հարիւր քաջաց գլուխն անցած և սուր ի ձեռին մտաւ Օսմանեան զօրաց մէջ, որք ամեն կողմէ պաշարեցին զայն և բոնելով գլխատեցին:

Եէնիչէրիք ամրոցը գրաւեցին և բնակիչներն առ հասարակ սրէ անցուցին: Սակայն Հունդարացիք ամրոցին տակն ական դրած լինելով, պայթեցաւ և 3,000 Եէնիչէրիներ օդն հանեց մնացեալ բնակչաց հետ:

Սուլթանին մահն յետ այնորիկ երեք շաբաթ միայն պահուեցաւ, մինչեւ որ իւր յաջորդը՝ Սէլիմ Քէօթահէայէն Պօլիս գալով՝ իւր հօր գահը բաղմեցաւ:



ԳԼՈՒԽ ԺԱ.

ՍՈՒԼԹԱՆ ՍԷԼԻՄ Թ.

(1566—1574)

Հ. Սուլթան Սէլիմ թօնքէս զապէց ապատամբութիւններն առ թօնքէս տիրեց Կիպրոսի.

Պ. Սուլթան Սէլիմ աւելի զրօսասէր էր քան պատերազմասէր: Երբ իւր հօրը գահը բարձրացաւ, կառավարութիւնն իւր իսաստուն եսպարքոսին՝ Մէհէմմէտ Սօքքօլի փաշային ձեռքը թողուց և ինքն իւր զրօսանաց հետեւեցաւ: Հունդարիոյ հետ խաղաղութեան դաշինք կնքեց (17 փետրվ. 1568), պայման դնելով որ երկու տէրութիւնք իրենց առած երկիրները պահեն, և Աւստրիա՝ ըն-

ծայ անուամբ տարուէ տարի 30,000 ոսկի դահեկան վճարէ Սուլթանին :

Այս միջոցիս արաբացիք, որոց մէկ մասը նըռածած էր Սուլթան Սիւլէյման Բ., մեծ ապօստամբութիւն մը յարուցանելով՝ Օսմանեան զօրքը վանեցին իրենց երկրէն : Սակայն Սիւնան փաշա զօրապետն ապստամբաց վրայ երթալով, ի հնազանդութիւն ածեց զանոնք և Օսմանեան տիրապետութեան ներքեւ նուանեց զրովանդակ Արաբիա :

Արաբիոյ նուաճումէն յետոյ, Օսմանեանք արշաւանք մ'ըրին կիարոս կղզւոյն դէմ, որ Վենետիկցւոց ձեռքն էր, իրենց նաւատորմն օգոստոսի սկիզբն (1570) 100,000 զօրք ցամաք հանեց . Նիկոսիա քաղաքն՝ միամսեայ պաշարումէ յետոյ՝ Օսմանեանց ձեռքն անցաւ : Կղզւոյն միւս քաղաքներն առանց ընդդիմութեան անձնատուր եղան . Միայն ֆամակոսդա քաղաքը դէմ դրաւ . իւր պահապան զօրքն՝ Օսմանեանց շատ մը յարձակումներն ետ մղեց, բայց ի վերջոյ քաղաքին պաշարը սպառելով, հարկ եղաւ իւր դռները բանալ թշնամոյն (1 օգոստ. 1571) և այսպէս բովանդակ կղզւոյն տէր եղան Օսմանցիք :

Հ. Ի՞նչպէս եղաւ Լեփանդայի ծովային պատերազմն . Պ. Վենետիկցիք, այս մեծ կորստեան վրէժն առնլու համար, Քրիստոնեայ տէրութեանց դիմեցին և Օսմանեանց դէմ դաշնակցութիւն մը կազմեցին : Սպանիա, Հռոմայ քահանայապետն և Մալթայի ասպետք 90ի շափ նաւ զրկեցին, որոնց հետ

միացան Վենետիկցւոց 140 նաւերն: Այս նաւատորմին կը հրամայէր կարոլոս Ե. կայսեր որդին՝ Տոնեուան (Տոն Ժան Տօթրիչ): Քրիստոնէից նաւերը Լեփանդայի առջև պատահեցան Օսմանեան նաւատորմին, որ 300 նաւերէ կազմուած էր, և հոկտ. 7 ին (1571) սկսաւ սոյն նշանաւոր ծովային պատերազմն ։ Երկու կողմն եւս երեք ժամ մեծ քաջութեամբ կրուեցան առանց միմեանց տեղի տալու կույն ամենէն սաստիկն՝ Քրիստոնէից ճակատին կեդրոնն էր, ուր կը կենար Տոն Եուան: Օսմանեան ծովապետն իւր նաւով անձամբ նոյն տեղն եկած էր և թշնամուոյն ծովակալին նաւը կը զարնէր: Վենետիկցւոց ծովապետն եւս հոն հասնելով, Գափտան փաշան երկու նաւուց միջեւ պաշարուած մնաց: Անմիջապէս չորս Օսմանեան նաւ իրեն օգնութեան հասան, բայց չկրցին ազատել զինքն: Սպանիացիք փաշային նաւը ցատկելով՝ սպաննեցին զինքն: Նորամահուամբ յաղթութիւնը կորսուեցաւ Օսմանեանց համար . իրենց նաւերէն 130ը Քրիստոնէից ձեռքն անցան և 94ն այրեցան կամ ընկղմեցան :

Հ. Վենետիկցիք ի՞նչպէս հաշտունցան Օսմանեանց հնատ:

Պ. Դաշնակիցք մեծ օգուտ մը չքաղեցին այս մեծ յաղթութենէն: Մէհէմմէտ փաշա եպարքոսն իւր գործունէութեամբը քիչ ժամանակի մէջ դարմանեց եղած վեսաներն: Ուլում Ալի (Գլում Ալի) ձէզայիրի կառավարիչը ծովապետ անուանեց, 150 նոր նաւեր չինել տուաւ և 1572 յունիս ամսոյ մէջ

250 նաւաց տորմիղ մը վերստին ծովուն երեսը
ծածկեց : Թէպէտ Քրիստոնէից նաւերուն թիւն
քան զօսմանեանն շատ աւելի էր , սակայն դաշ-
նակցաց միջեւ ծագած երկառակութիւնն ապար-
դիւն թողուց այս զօրութիւնն : Վենետիկցիք ի-
մանալով որ այնուհետեւ իրենց դաշնակցներէն
օգնութեան յոյս չկայ , փութացին հաշտութիւն
կնքել Օսմանեանց հետ . յաջորդ տարւոյ մարտ
Դին խաղաղութիւնը վերջնապէս կնքուեցաւ : Օս-
մանեանք Կիպրոս կղզին ապահնեցին իրենց ձեռքն
և իրբեւ պատերազմական տուգանք 300,000 ոսկի
դահեկան առին Վենետիկցիներէն :

Հ . Թողառողի նո Մոլուալիոյ միջ ի՞նչ պատահնեցաւ .

Պ . Սպանիացւոց հետ պատերազմը դեռ կը շա-
րունակէր : Տոն Եռուան Օսմանեան զօրքն ստիպեց
Թունուզէն քաշուիլ , բայց Արևան փաշա՝ նոր զօ-
րաբանակաւ մ'օգնութեան համար կ'վերստին
նուաճեց նոյն գաւառը : Նոյն ժամանակները Մոլ-
տաւից Պոկտան իշխանն եւս ուզելով Օսմանեան
լուծը թօթափիլ , Գաղագներն իրեն օգնութեան
կոչեց և Սուլթանին զօրաց վրայ քանի մը յաղ-
թութիւններ տարաւ : Սակայն իրեն դէմ զրկուած
հզօր զօրաբանակ մը յաջողեցաւ բռնել զինքն և
մահուամբ պատժել : Իւր օգնական Գաղագներն
առհասարակ սրէ անցան : Վեց ամիս ետքը մեռաւ
Սուլթան Սէլիմ (1574 դեկտ . 12) և իրեն յաջոր-
դեց Սուլթան Մուրատ Պ :



ԳԼՈՒԽ ԺԲ.

ՍՈՒԼԹԱՆ ՄՈՒՐԱՏ Պ.

(1574—1596)

Հ . Օսմաննակը ի՞նչ շրին Աւատրիոյ դէմ : Ի՞նչ պատ-
ճառակ Պարսկաստան արշանեցին եւ ի՞նչպէս առին թիֆ-
յիս բաղաքը .

Պ . Սուլթան Մուրատ Պ. , Սէլիմին երէց որդին ,
իւր հօրն յաջորդեց : Իւր գահակալութեան տարին ,
Օսմանեան զօրքերն անդադար Աւատրիոյ հողը կը
մտնէին , թէպէտ երկու տէրութեանց միջեւ խա-
ղաղութիւնը կը շարունակէր . Մաքսիմիլիէն կայսրը
խաղաղութեան նոր դաշնաք մը դրաւ Սուլթանին
հետ (1577) , որպէս զի թշնամութիւնք դադրին :

Այն ժամանակները Պարսկաստան քաղաքային
պատերազմի մը թատերաբեմն եղած էր : Արևան
փաշա եպարքուն համոզեց զՍուլթան Մուրատ՝
առիթէն օգուտ քաղելու և նոյն երկիրը նուաճե-
լու համար : Մուսթաֆա փաշայի հրամանատարու-
թեամբ հզօր բանակ մը յանեկարծ Վրաստան մտաւ ,
Զըլյուրի քոյլ Յողմագ խանին բանակը ջնջեց և
Թիֆլիս քաղաքն առաւ : Երկրորդ մեծ յաղթու-
թեամբ մը՝ Օսմանեանք բովանդակ Վրաստանի
տիրեցին : Պարսկաք անմիջապէս չորս զօրաբանակ
կազմաւորեցին և եկան իրենց կորուսած քաղաք-

ներն ետ առնլու : Այս զօրաբանակներէն երկուքն զարնուեցան Շիրվանի կառավարիչ Օսման փաշայի կողմէ : Ուզտէմիր Օսման փաշան ալ միւս կողմէ Տաղատանի մէջ մեծ յաղթութիւն մը տարաւ Պարսից վրայ , որոցմէ 3,000 հոգի գերի բռնելով՝ յաղթանակաւ կ. Պօլիս վերադարձաւ :

Հ . Պարսկական պատերազմն ի՞նչ փախճան ռունեցաւ .

Պ . Սուլթան Մուրատ՝ իւր այս քաջութեան համար եպարքոս անուանեց զայն և 160,000 զօրոք վերասին Պարսից վրայ զրկեց : Պարսկական զօրաց հրամանատարն՝ Համզէ Միրզա՝ թէեւ ի սկզբան քանի մը մանր յաղթութիւններ տարաւ , սակայն ի վերջոյ հարկադրեցաւ ետ քաշովիլ և Դաւրէժ քաղաքն Օսմանեանց ձեռքը թողուլ : Նոյն միջոցին Օսման փաշան հիւանդացաւ և իւր այս հիւանդութիւն մեծապէս միասեց պատերազմին յաջող ելից : Համզէ Միրզա՝ դարձեալ յարձակողականի սկսելով , եպարքոսին զօրաբանակէն 20,000 հոգի ջարդեց : Ասոր վրայ եպարքոսն՝ առանց իւր հիւանդ վիճակին նայելու՝ թէեւ պարտաւորեցաւ անձամբ հրամայել իւր զօրաց , սակայն իւր բանակին ցրուիլը տեսնելով՝ սրտին ցաւէն մեռաւ : Պարսիկը ուրիշ քանի մը յաղթութիւններ ալ տարին և եկան պաշարել Դաւրէժ քաղաքը : Պահպան զօրքը տասն ամիս քաջութեամբ դիմադրեց և տասն և հինգ յարձակում վանեց մինչեւ որ Ֆուատ փաշան՝ որ Օսմանեան զօրաց հրամանատար կարգուած էր , օդնութեան հասնելով՝ պաշարու-

մէն ազատեց զանոնք : Ֆուատ փաշա ապա Դաւրէժէն ուղղակի Պարսից բուն բանակին վրայ քաշեց և երեք աւուր արիւնուուշտ ճակատամարտէ մը յետոյ , մեծ յաղթութիւն մը տարաւ անոր վրայ (1586) : Պարսից զօրութիւնն՝ այս պարտութեամբ՝ բոլորովին խորստակուած էր : Պարսիկը այնուհետեւ չկրցին դիմադրել Օսմանեանց , և իրենց զօրքն ամեն տեղ յաղթուելով , Պարապաղի մայրաքաղաքն Օսմանեան զօրաց ձեռքն անցաւ : Յայնժամ Շահ Աբաս հաշտութիւն խնդրեց , որ 1590 մարտ 21 ին կնքուեցաւ : Վրաստան , Շիրվան , Լորիստան , Դաւրէժ և Ալրապատական նահանգին մէկ մասն Օսմանեանց ձեռքը մնացին :

Հ . Օսմաննեանք ի՞նչ պատճառաւ Հունգարիա արշանեցին : Ի՞նչպէս ապատամենան Մողուավիա եւ Վարիա .

Պ . Սուլթան Մուրատ չկրցաւ երկար ժամանակ վայելել զայս խաղաղութիւն : Տէրութեան գաւառներուն մէջ ծագած խուզութիւնք և գլխաւորաբար զօրաց ապատամենութիւնք հարկադրեցին զինքըն՝ նոր արշաւանքի մը ձեռնարկելու , որպէս զի զբաղեցնէ զանոնք , և որոշեց Հունգարիոյ վրայ ընել սոյն արշաւանքն : Սինան փաշա դարձեալ եպարքոս անուանելով՝ բանակին ընդհանուր հրամանատար կարգուեցաւ : Ի սկզբան այս արշաւանք յաջող գնաց Օսմանեանց համար : Սինան փաշա տիրած էր Վիսիրիմին և Փալովային , սակայն կայսերականք Սիսոէքի առջեւ զարկին փաշային

բանակն և Պուտայի կառավարչին զօրագունդն աղ ցրուեցին (1593)։ Այսպիսի փոխադարձ յաջողութեամբք կը շարունակէր պատերազմն երբ Մոլտավիա, Վալաքիա և Թրանսիլվանիա ապստամբութեան դրօշը պարզեցին և Օսմանեանց դէմ զէնք առնլով՝ առհասարակ ջարդեցին իրենց երկիրներու Օսմանեան բնակիչները։ Սուլթանն շատ աշխատեցաւ իւր զօրաց քաջութեան ոգին դարձեալ արծարծելու, որպէս զի այսքան թշնամեաց դէմ դէնէ, սակայն ի զո՞ւր։ Քանի մը տարի յետոյ Սուլթան Մուրատ կնքեց իւր մահկանացուն ծանր հիւանդութեամբ մը (Յունվ. 1596)։

ԳԼՈՒԽ ՃԳ.

ՍՈՒԼԹԱՆ ՄԷՀԿՄՄԷՏ Գ. — ՍՈՒԼԹԱՆ ԱՀՄԷՏ Ա. — ՍՈՒԼԹԱՆ ՄՈՒՍԹԱՖԱ ԵՒ ՍՈՒԼԹԱՆ ՕՍՄԱՆ

(1596—1623)

Հ. Օսմաննեանը ի՞՞նչ ըրին Հունգարիոյ միջ ։ Վաղարիոյ միջ ի՞՞նչ պատահեցան։

Պ. Սուլթան Մէհմէտի գահակալութեան ժամանակ, Հունգարական պատերազմը դեռ կը շարունակէր մեծ սաստկութեամբ։ Աստ Օսմանեանք թէեւ քանի մը յաղթութիւններ տարին, սակայն Վալաքիոյ մէջ իրենց զէնքն յաջողութիւն չէր գտներ։ Թէեւ Սինան փաշա Պուքրէչի տիրած էր, սակայն Վալաքիոյ Միքայէլ իշխանը՝ Թիրկովիցա, Նեկոպոլիս և Վիտին քաղաքներն Օսմանեանց ձեռքէն առաւ և պահապան զօրքը սրէ անցուց։ Սուլթան Մէհմէտ՝ այս դժբաղդութեանց գոյժն առնելով՝ անձամբ բանակը դնաց և անոր վերին հըրատանատարութիւնն ստանձնեց։ Զօրաց մէջ իւր ներկայութիւնը բոլորովին այլափոխեց պատերազմին կերպարանքը։ Քիչ ժամանակէն էրլաւ քաղաքն առնուեցաւ։ Կայսերական բանակն, որ Հունգարաց հէտ օգնութեան կուգար այս քաղաքին,

Հարաչար հարուածեցաւ և 50,000 հոգի կորոյս
(26 հոկտ. 1596): Բայց Օսմանեանք չկրցին օգուտ
քաղել այս յաղթութենէն. կայսերականք՝ անոնց
անդործ կենալը տեսնելով՝ Բասարի վրայ յարձակե-
ցան և անոր տիրեցին, նոյնպէս Վիսփրիմ, Տոլա
և ուրիշ քանի մը քաղաքներ իրենց ձեռքն անցան:

Հ. Ասիից ապատամիք ո՞յց իմ. Սուլթան Մհեմմ-
մէտ ե՞րբ մնուա եռ ո՞վ յաջորդնց իրեն.

Պ. Մինչ այս պատերազմական գործողութիւնք
կը կատարուէին Եւրոպիոյ մէջ, Ասիական գաւառ-
ներն ալ մեծ խռովութեան մը մէջ էին: Գարա
Նազրէլ, Տէլի-Հասան և Գալինտէր Օղլու ապրո-
տամբաքետները մեծ վտանգի մէջ ձգած էին Օս-
մանեան տէրութիւնն: Այս խառնակութեանց ժա-
մանակ մեռաւ Սուլթան Մէհմէտ (1606) իրեն
յաջորդ թողով իւր չորեքտասանամեայ որդին՝
Ահմէտ Ա: Մինեւնոյն ժամանակ Պարսից Շահ Աբաս
թագաւորը պատերազմ հրատարակեց Օսմանեանց
դէմ, և Դաւրէժ, Վան ու Երեւան քաղաքներն
առաւ անոնց ձեռքէն: Մուրատ փաշա քաջ եպար-
քոսն՝ այսպիսի դժուարին ժամանակի մը մէջ ի
պաշտօն կոչուելով՝ տէրութեան փրկիչն հանդի-
սացաւ: Նախ՝ ապստամբաց դէմ երթալով, շղո-
մանս պատերազմով և զայլ կաշառով նուաճեց, և
ապա իւր բոլոր զօրութեամբ Պարսից վրայ քալեց.
սակայն պատերազմական գործողութիւնք տակա-
փին չակսած, ծերունի եպարքոսը մեռաւ: Յայն-
ժամ Սուլթանն հաշտութիւն կնքեց Պարսից հետ

և անոնց ետ տուաւ այն բոլոր երկիրներն զորս
Օսմանեանք Սուլթան Ալիւլէյմանի ժամանակէն ի
վեր գրաւած էին (1612): Արդէն քանի մը աարի
յառաջ Աւատրիացւոց հետ եւս խաղաղութիւն
կնքուած էր, այն պայմանաւ որ կայսրն՝ Հունդարի-
ոյ համար առ Օսմանեանս վճարած տարեկան հարկն
այլ եւս չպիտի վճարէր, այլ միանգամ ընդ միշտ
200.000 արծաթ դահեկան պիտի տար, և Ուասպ
ու Գորմոն բերդերն Աւատրիացւոց ձեռքը պիտի
մնային (1615):

Սուլթան Ահմէտի թագաւորութեան վերջին
տարիներն Եւրոպական տէրութիւնք ունանք՝ քանի
մ'ազատութիւններ ստացան Օսմանեան երկիրնե-
րու մէջ: Ծխախոտի գործածութիւնն այս ատեն-
ներն սկսաւ տարածուիլ ժողովրդեան մէջ:

Հ. Սուլթան Օսման ի՞նչ ըրաւ եռ ի՞նչպիս մնուա.

Պ. Ահմէտ Բ. մեռած միջոցին (1617), իւր որ-
դին՝ Օսման՝ տասն և երեք տարեկան տղայ մ'էր.
այս պատճառաւ իւր հայրը՝ ժառանգական յաջոր-
դութեան օրէնքը փոխելով՝ իրեն յաջորդ որոշեց
իւր եղբայրը՝ Մուսթաֆա Ա. որ քանի մ'ամիս
յետոյ նախարարաց դաւակցութեամբ դաշնկէց
եղաւ, և Ահմէտ Բ. ին որդին Օսման յաջորդեց նմա
(1618): Սակայն այս Սուլթանն եւս չկրցաւ իւր
իշխանութիւնն երկար ատեն վարել: Լեհաց դէմ
պատերազմի ձեռնարկելով, Եէնիչէրիներու ան-
հընազանդութեան պատճառաւ կորոյս յաղթու-
թիւնն, և հետեւապէս որոշեց բնաջինջ ընել

այս անհնազանդ զօրագունդն : Ուստի հրամայեց զօրաժողովը ընել Ասիոյ մէջ : Սակայն խոռվարար Եէնիչէրիք՝ իրողութիւնն իմանալով, պալատը կոնեցին և զՄուսթափա կանանոցէն հանելով վերըստին Սուլթան հոչակեցին : Իսկ Օսման՝ փախչելու ժամանակ բոնուելով՝ Եէտի-Գուլէ տարուեցաւ և անդ չարաշար սպաննուեցաւ (20 մայիս 1622):

Հ . Սուլթան Մուստափա ի՞նչ պատճառա գահընից եղաւ : Ապագա փաշան ո՞վ կր եռ ի՞նչ ըրան .

Պ . Մուսթափա երկրորդ անդամ գահն ելնելով, իւր տկարութեան պատճառաւ խաղալիկ եղած Եէնիչէրի զօրաց ձեռքն, որք ամեն պաշտօն բատ քմաց կը փարէին և ժողովրդը կը կեղեքէին : Տասն և հինգ ամսուան մէջ վեց եպարքոս փոխել տուին : Երբ մի կողմէ մայրաքաղաքին մէջ այս անկարգութիւնք կը պատահէին, միւս կողմէ գաւառաց կուսակալներն ալ մի առ մի կ'ապատամբէին : Կարնոյ կառավարիչն՝ Ապագա փաշա մինչեւ Պրուսա յառաջացած և նոյն քաղաքն առած էր : Անիշխանութիւնը կը տիրէր Կ . Պօլսոյ մէջ : Կրօնաւորք ջանացին զօրաց դէմ միաբանութիւն մը կազմել և անոնց անկարգութիւնները զսպել, սակայն Եէնիչէրիք մեծ ջարդ մը տուին անոնց : Վերջապէս որոշեցին զՄուլթան Մուսթափա նորէն գահընկց ընել և Սուլթան Օսմանին կրտսեր եղբայրը Մուրատ Դ . գահն հանել : Մուսթափա երկրորդ անդամ տասնեւհինգ ամիս միայն թագաւորած էր :

ԳԼՈՒԽ ԺԴ.

ՍՈՒԼԹԱՆ ՄՈՒՐԱՏ Գ.

(1623--1640)

Հ . Ի՞նչ պատահեցաւ Սուլթան Մուրատոյ առաջին տարիները .

Պ . Տասներկու տարեկան տղայ մ'էր Մուրատ Երբ թագաւորական գահն ամբարձաւ : Զօրքը մեծուրախութեամբ ընդունեց զայն, յուսալով որ այս մանուկ Սուլթանին իշխանութեան ժամանակ պիտի կրնային իրենց անկարգութիւնները շարունակել անպատճիժ : Իրօք ալ Մուրատոյ թագաւորութեան առաջին տասն տարիներու մէջ Եէնիչէրիք ամեն տեսակ ստահակութիւն և հարստահարութիւն ըրին : Նոյն առթիւ Պարսիկներն Օսմանեան երկիրներուն մէկ մասը գրաւեցին : Պաղտատի մէջ Պէքիր անուամբ իշխան մը բոնացած և իրեն օգնութեան կոչած էր զնահ Աբաս, որ եկաւ նոյն քաղաքին տիրեց յետ եռամսեայ պաշարման :

Հ . Պարսից դէմ ո՞վ դրկուեցաւ եռ ի՞նչ ըրան .

Պ . Սուլթան Մուրատ, այս դժբարդ լուրն առածին պէս, Զէրքէզ Մէհմէտ փաշան եպարքոս անուանեց, և բանակին վերին հրամանատարութիւնը նմա տալով՝ Պարսից փրայ զրկեց : Այս արշաւանց ժամանակ Օսմանեանք՝ Կարնոյ Ապագա

ապստամբ փաշային զօրքը զարկին և դարձեալ
Սուլթանին հպատակութեան ներքեւ մտցուցին
զայն : Անտի գնացին պաշարեցին զՊաղոտատ , սա-
կայն երկար պատերազմներէ և շատ յարձակում-
ներէ յետոյ ստիպուեցան պաշարումը վերցնել և
ետ քաշուիլ (1624) : Վեց ամիս յետոյ Օսմանեանք
նոր փորձ մ'ալ ըրին Պաղտատն առնլու համար ,
սակայն այս փորձն եւս չյաջողեցաւ :

Հ . Զօրաց ապատամբութիւնն ի՞նչպէս զայռուցաւ .

Պ . Մինչդեռ պատերազմը Պարսկաստանի մէջ
սաստկաբար կը շարունակէր , Կ . Պօլսոյ մէջ զօրքն
անդադար կ'ապստամբէր և կ'ստիպէր զՍուլթանն
իրենց անախորժ պաշտօնեայներն սպաննել տալու :
Եէնիչէրիք իրենց յանդղնութիւնն այնչափ յառաջ
մլեցին որ մինչեւ իսկ խորհուրդը ըրին գահընկէց
ընել զՍուլթան Մուրատ : Այս վերջինը տեսաւ որ
այլ եւս դանդաղելու ժամանակ չկայ , այլ հարկ է
փութալ այս անկարգութեան առաջն առնուլ : Խըր
առաջին դործն եղաւ ասրտամբութեան առաջին
գրգռիչը՝ Իէճէպ փաշան սպաննել տալ և անոր
դիակն ապստամբաց առջեւ նետել : Ապա ապաբ-
տամբաց բոլը պարագլուիները մի առ մի բռնուե-
լով՝ ի մահ դատապարտեցան : Զօրքն՝ աստի զար-
հուրած՝ հպատակեցաւ Սուլթանին և հաւատար-
մութեան երդում ըրաւ :

Հ . Լիբանանու միջ ի՞նչ պատահեցաւ .

Պ . Լիբանանու լերանց վրայ Տիւրքիներն երե-
սուն տարիէ հետէ Օսմանեանց հպատակութենէն

ելած և իրենց լմիրներուն ձեռամբ կը կառավար-
ուէին ինքնագլուխ : Սուլթան Մուրատ հրաման
դրկեց Դամասկոսի փաշային՝ որ երթայ ի հնազան-
գութիւն սերէ զանոնք : Ֆախր-էտափն էմիրը
փոքր ինչ դէմ դնելէ յետոյ , բանուելով՝ Կ . Պօլս
զրկուեցաւ , և այսպէս Լիբանան դարձեալ հպա-
տակեցաւ Օսմանեանց :

Հ . Սուլթանն ի՞նչպէս վնրջացույ Պարսկական պա-
տերազմը .

Պ . Այսպէս տէրութիւնն ի ներքուստ խաղա-
ղցնելով՝ Սուլթանն ելաւ անձամբ Պարսկաստանի
մէջ գործող բանակը գնաց և զօրաց վերին հրա-
մանատարութիւնն իւր վրայ առաւ , և թշնամին
զարնելով՝ Երեւան և Դավրէժ քաղաքները գը-
րաւեց : Ապա Կ . Պօլս վերագարձաւ՝ քիչ մը ժա-
մանակ պատերազմի յոդնութիւններէն հանգչելու
համար : Նոյն միջոցին Պարսիկը դարձեալ Երեւանն
առին և Ռիւսթէմ խան Միհրէպան դաշտին մէջ
մեծ յաղթութիւն մը տարաւ Օսմանեան բանակին
վրայ : Սուլթան Մուրատ անմիջապէս աճապարեց
ետ դարձաւ և իւր բանակին դլուխն անցնելով՝
Պաղտատն առաւ Պարսից ձեռքէն (1638 դեկտ .
24) : Հետեւեալ տարին երկու տէրութեանց մի-
ջեւ հաշտութիւն կնքուեցաւ : Պարսիկը Երեւանը
պահեցին , իսկ Պաղտատն Օսմանեանց ձեռքը մնաց
(19 սեպտ . 1639) : Հինգ ամիս յետոյ վախճանե-
ցաւ Սուլթան Մուրատ 29 տարեկան հասակին մէջ
(9 վետր . 1640) :

ԳԼՈՒԽ ԺԵ.

ՍԱԻՆԹԱՆ ԻՊՐԱՀԻՄ · — ՍՈՒԼՓԱՆ
ՄԿՀԿՄՄԻՑ Դ ·

(1640—1687)

Հ . Սույնթան Իպրահիմ ի՞նչ ըրահ Գաղագմերու
դիմ են Կրետէն ի՞նչպէս առահ ·

Պ . Սուլթան Մուրատ որդի չունէր · իւր եղ-
բայրն Իպրահիմ՝ որ թագաւորական ցեղին մէջ
միակ մնացած էր, Օսմանեան գահն ելաւ, և ան-
միջապէս բանակ մը զրկեց Ալզովի վրայ, զոր Գա-
ղագներն գրաւած էին և զոր վերստին ետ առաւ
անոնց ձեռքէն · Նոյնպէս մեծ նաւատորմ մը զրկեց
ի Կրէտէ և 50,000 զօրք ցամաք հանելով՝ կղզոյն
գլխաւոր քաղաքներն առաւ (1645-1646) · միայն
Գանտիա՝ կղզոյն մայրաքաղաքը՝ քաջութեամբ
դէմ դրաւ ·

Հ . Ի՞նչ պատճառահ գահընիկց եղան ·

Պ . Սակայն Սուլթան Խալիլահիմ ինչ ինչ պատ-
ճառներով անհաճաց եղած էր ո՛չ միայն զօրաց, այլև
ժողովրդեան · Արքունեաց ծախքէրը կ'սպառէին
տէրութեան գանձը, և փոքր պատճառներով մե-
ծամեծ պաշտօնէից գլուխները կ'իյնային · Եէնի-
չէրիներուն գլխաւորները մէջտեղէն վերցնել ու-
զելով, իրողութիւնն իմացուեցաւ · զօրքն առհա-

սարակ ապստամբեցան · նոցա հետ միացան նաեւ
կրօնաւորք և զիպրահիմ գահընկէց ընելով, զիւր
եօթնամեայ որդին Մէհմէմէտ Դ · թագաւոր հռո-
չակեցին · Հաղիւ քանի մ'օր անցաւ, հեծէլազօրն
սկսաւ տրտնջալ թէ մանուկ թագաւորէ մը կը
կառավարուի · Այս բան պատճառ եղաւ իպրահիմի
կորստեան · Դաւակցութեան գլխաւորներն որո-
շեցին սպաննել զայն, որպէս զի իրենց կեանքն
ապատեան, և այս անօրէն խորհուրդն ի գործ դբ-
րին (18 օգոստ. 1648) :

Այնուհետեւ անիշխանութիւնը տիրեց տէրու-
թեան ամեն կողմն · Ամիական գաւառաց կուսա-
կալները կառավարութեան դէմ գէնք առին և սկը-
սան կ . Պօլսոյ վրայ դալ · Զօրքն ամեններին չէր
հնազանդէր տէրութեան հրամաններուն · Վենե-
տիկցիք պաշարումէ ազատեցին զԳանտիա, Օս-
մանեան նաւատորմին վրայ մեծ յաղթութիւն մը
տարին և եկան Զանագ - Գալէի նեղուցին բերանը
բռնեցին, որով կ . Պօլսոյ մէջ սովլ ինկաւ ·

Հ . Ի՞նչ ըրահ Քէօքիլիկ Մէկնմէտ նպարուն ·

Պ . Օսմանեան տէրութիւնն այսպիսի ճգնաժա-
մու մը մէջ էր, երբ Քէօքիլիկ Մէհմէմէտ փաշա
եպարքոս անուանեցաւ · Այս իմաստուն պաշտօն-
եայն իւր գեղեցիկ կարգադրութեամբք և արիու-
թեամբ քիչ ժամանակն ամեն բան կարգի դրաւ և
զօրաց ապստամբութիւնը մեծ խստութեամբ զըս-
պեց · Վենետիկցւոց դէմ պատերազմն առաւելա-
գոյն զօրութեամբ յառաջ տարաւ և անոնցմէ ա-

ուաւ Տենետոս և Լեմոս կղզիները : Ապա Թրանսիլվանիոյ Ռազդոցի իշխանին վրայ գնաց , որ Մոլտավիացւոց հետ միացած՝ Օսմանեանց դէմ դէնք առած էր , և յաղթեց անոր : Նոյն ժամանակն Աւստրիոյ հետ եւս պատերազմ ծագեցաւ և Պուտայի կառավարիչ փաշան Կրօս-վարտայն բերդին տիրեց : Ծերունի եպարքոսը զսպեց նաեւ Ապազա փաշային և Եղիսպացւոց ապատամբութիւնն : Իւր մահուան ժամանակ խորհուրդ տուաւ Սուլթան Մէհմէմէտի որ իւր որդին Ահմէտն իրեն տեղն եպարքու դնէ :

Հ . Ի՞՞նչին եղաւ Ս . Կողմարտի պատերազմը .

Պ . Քէօրդիւլիւ Ահմէտ փաշա՝ եպարքոսական պաշտօնին կոչուելուն պէս՝ Վենետիկցւոց և Ալբուտրիացւոց խաղաղութեան առաջարկը մերժեց և գորաց հրամանատարութիւնն ստանձնելով՝ Գանուրն անցաւ , Նայհազլ բերդը գրաւեց և կայսերական երկիրներն ասպատակեց , 80,000 հոգի գերի առաւ և մինչեւ Ռասապի առջեւ յառաջացաւ : Կայսերական բանակն , որուն կը հրամայէր Մոնթէգուգուլի քաջ իշխանն , Ս . Կողհարտի վանքին մօտ Օսմանեանց պատահելով՝ ճակատեցաւ անոնց դէմ : Սուլթանին զօրքը մեծ քաջութեամբ զարնուեցաւ թշնամոյն հետ , և թէեւ ի սկզբան քանի մը յաջողութիւններ ունեցաւ , սակայն ի վերջո Եէնիչէրիներուն ի փախուստ դառնալուն պատճառաւ կայսերականք տարին յաղթութիւնը (31 յուլիս 1664) : Տասն օր յետոյ երկու տէրութեանց

միջեւ հաշտութիւն կնքուեցաւ , որոյ զօրութեամբ Թրանսիլվանիա ազատ իշխանութիւն մը պիտի կինէր Օսմանեան գերիշխանութեան տակ և Հունգարիոյ չորս գաւառները Սուլթանին ձեռքը պիտի մնային :

Հ . Օսմանեանք ի՞՞նչին առին Գանտիան .

Պ . Վենետիկցւոց հետ կը շարունակէր պատերազմն : Օսմանեանք Կրէտէ կղզւոյն մեծագոյն մասին տիրած և զիանտիա պաշարած էին : Ֆըրանսացւոց և Սուլթանին միջեւ ծագած դժութեան մը պատճառաւ , Լուդովիկոս ԺԴ · թագաւորն զօրաբանակ մ'և նաւատորմ մը զրկեց Վենետիկցւոց օգնութեան . բայց այս զօրաբանակ քիչ մը վերջը ֆըրանսա գարձաւ առանց մեծ գործ մը տեսնելու : Վերջապէս Գանտիա հարկադրեցաւ անձնատուր լինիլ :

Պատմութեան մէջ չյիշուիր ուրիշ բերդ մը , որոյ առումն այնչափ երկար ժամանակ տևած և այնչափ ծախուց և կոտորածից պատճառ եղած լինի որչափ Գանտիոյ բերդն : Երկու պատերազմող կողմերն ԶՅ տարի բերդին առջեւ իրարու հետ զարնուեցան : Օսմանեանք յիսուն և վեց անգամ յայտնի և քառասուն և հինգ անգամ գետնի տակէ յարձակում ըրին : Պաշարեալք հաղար հարիւր վաթսուն ական պայթեցուցին , իսկ Օսմանեանք սորս երեք պատիկը , Քաղաքացւոց կորուստն 50,000 հոգւոյ հասաւ , իսկ Օսմանեանք 100,000 է աւելի զօրք կորուսին :

Երկու տէրութիւնք նոյն տարին (1669 սեպտ. 6) խաղաղութիւն կնքեցին, որով Կրէտէ կղզին Օսմանեանց ձեռքը մնաց բաց ի միքանի նաւահանգիստներէ : Ֆրանսայի հետ եւս հաշոռութիւն կը քեց Սուլթանն և վերստին չորհեց այն ազատութիւններն, զորս ետ առած էր :

Հ . Սուլթան Մհեմմիլիս ի՞նչ պատճառա Լեհաստան պան պաշտեց .

Պ . Երեք տարի յետոյ, Օսմանեան զօրքը նոր արշաւանք մ'ըրաւ : Գաղագները՝ Լեհացւոց թագաւորէն կեղեքուելով՝ Սուլթան Մէհմէտի օդութիւնը խնդրեցին : Սուլթանն իսկոյն իւր բանակին գլուխն անցնելով՝ Լեհաց երկիրը մտաւ, և Կամէնից բերդն ու Լէմպէրկ քաղաքն առաւ : Սակայն Սուլիէսքի զօրավարն այս քաղաքներն ետ առաւ, Թաթարաց բանակը զարկաւ և անոնցմէ 30.000 հոգի գերի բռնեց : Լէմպէրկի առջեւ Օսմանեանց վրայ եւս մեծ յաղթութիւն մը տարաւ : Երկու տէրութեանց բանակներն երկու անգամ եւս իրարու հետ զարնուեցան և ապա հաշոռութիւն կնքեցին (1676), որով Ուքրանիա և Փոտոլիա Օսմանեանց ձեռքը մնացին : Նոյն տարին մեռաւ Քէօբրիլիւ Ահմէտ փաշա եւլարքուն և նորա յաջորդեց Գրարա Մուսթաֆա, որ ո՛չ քաջութեամբ և ո՛չ հանձարով կը նմանէր իւր նախորդին :

Այս եղանակուն իւր իշխանութեան առաջին տարին, Ուքրանիոյ մէջ ծագած խոռոշութեան մը պատճառաւ, մեծ բանակով մը նոյն երկիրն արպատճառաւ,

չաւեց, Գաղագներու և Ռուսաց զօրագնդերուն հետ քանի մը տարի պատերազմեցաւ առանց մեծ յաջողութեան . վերջապէս անոնց հետ հաշոռութիւն կնքեց, զի Հունդարիոյ Դէպէրը կը հարկադրէին զինքն նոյն կողմը դարձնելու իւր զօրութիւնը :

Հ . Աստորիացոց դէմ ի՞նչ պատճառա պատերազմին եղաւ Օսմանեամբ . Գարա Մուսթաֆա ի՞նչպէս պաշտեց զվիկնեան են այս պաշտառում ի՞նչ վախճան ունեցաւ .

Պ . Աւստրիոյ և Օսմանեանց միջեւ կնքեալ վերջին խաղաղութեամբ Հունգարիոյ մեծագոյն մասը կայսեր անցած էր : Հունգարացիք ուզելով անկէ բոլորովին ազատ լինել, ընդհանրապէս զէնք առին և ապատամբեցան՝ իրենց առաջնորդ դնելով էմէրիք Թէքէլի իշխանն : Ի սկզբան ապատամբաց գործն յաջող գնաց, սակայն ի վերջոյ Թէքէլի տեսնելով որ մինչեւ վերջը կարող չպիտի լինի կայսեր զօրութեան դէմ դնել, Օսմանեանց օդնութիւնն հայցեց : Գարա Մուսթաֆա փաշա անմիջապէս 150,000 զօրքով մտաւ ի Հունգարիա : Իւր զօրաց քանի մը յաղթութիւններէն քաղաքերեալ, եւլարքուը միտքը գրաւ ուղղակի Վիէննայի վրայ քալել և զայն գրաւել : Թէքէլի իշխանն և Պուտայի կառավարիչ փաշան շատ ջանացին ետ կեցնել զայն՝ այս վոտանգաւոր ձեռնարկէն, սակայն ի զուր :

Վիէննայի հրամանատար Շթարլմակէրկ կոմսը միայն 10,000 զօրք ունէր . քանի մը գունդեր աւ քաղաքացիներէն և ուսանողներէն կազմուեցան :

Օսմանեան զօրքն ահագին բազմութեամբ եկաւ ամեն կողմէ պաշարեց քաղաքն, և վաթսուն աւուր մէջ քտուասուն ական պայթեցուցին՝ պարփակները քանդելու համար, և տասնեռութ յարձակում ըրբին. քսանեւչորս անգամ ալ քաղաքացիք դուրս յարձակեցան և Օսմանեանց պատնէները քանդեցին: Պարփակներն ամեն կողմէ խարխած էին, քաղաքին զօրաց կէաը մեռած կամ վիրաւորուած, և մնացեալներուն շատերը հիւանդ կամ արտաքոյ կարգի յոգնուծ էին, այսպէս որ Օսմանեանք ընդհանուր յարձակմամբ մը շատ դիւրաւ կրնային առնուլ քաղաքը. սակայն Դարա Մուստաֆա իւր անփորձութեամբը պատեհ ժամանակը կրունցուց, զիերբ ինքն անգործ կեցած էր, և հաց Սոպիկսքի թագաւորն իւր բանակը միացուց կայսերական զօրաց հետ և Վիէննայի օգնութեան հասաւ: 1683 սեպտ. 12ին Եեհաց և կայսերական զօրագունդերը Գալէմպէրկ լերան վրայէն Օսմանեան զօրաց վրայ յարձակեցան: Եպարքոսն՝ այս անակնկալ յարձակումէն բոլըրովին շփոթած՝ սկսաւ փախչիլ. զօրքն իւր օրինակին հետեւեցան՝ թշնամոյն ձեռքը թողլով իրենց թնդանօթները, վրաններն և պատերազմական ծախուց գանձն, և հազիւ կրցին Ռաապի քով վերստին ի մի վայր գալ: Երկու բանակներն երկրորդ անգամ ընդհարեցան Դանուրի միւս կողմն և կրան քաղաքը կայսերականաց ձեռքըն անցաւ: Սուլթանն այս բոլոր դժբաղդութեանց լուրն առնլով՝ իւր սենեկապետը բանակը

զրկեց և սպաննել տուաւ զեսպարքոսն:

Հ. Օսմաննամք ի՞նչպէս կորուսին Բէջա և Պոռտա քաղաքները.

Պ. Վիէննայի ձախող արշաւանքը շատ մեծ հետեւանք ունեցաւ. կայսերական բանակն Հունդարիոյ մէջ տարածուեցաւ, շատ տեղերու տիրեց, յաղթանակաւ Բէջթա մտաւ և զՊուտա պաշարեց: Այս բերդին կառավարիչ Խպրահիմ փաշայի բուռն ընդդիմութեամբ, թշնամիք չկրցին տիրել նմա, և պաշարումը վերուցին: Միւս կողմէ Սոպիկսքի Մոլտավիոյ վրայ յարձակիլ կապառնար: Վենետիկիք Սլյանիա զօրք հանեցին և քանի մը ծովեղերեայ քաղաքներ առին. նոյնպէս Մորայի մէջ շատ քաղաքներ ինչպէս նաեւ Սթէնք իրենց ձեռքըն անցան:

Հ. Ի՞նչպէս եղաւ Մոհագի պատերազմն.

Պ. Յաջորդ տարւոյ պատերազմն եւս Օսմանեանց համար յաջող չեղաւ: Կայսերական զօրքն ստորին Հունդարիան գրաւեց և յարձակմամբ առաւ Պուտա քաղաքն, ուր բերդին կառավարիչ Ապտի փաշա՝ խրամատներու վրայ դիւցազնական քաջութեամբ կուռելով, զարնուեցաւ մեռաւ: Միւլէյման փաշա եպարքուը՝ նոր զօրաբանակաւ մը Պուտայի օգնութեան կուգար, երբ ճանրան անոր գրաւումը լսելով՝ միտքը դրաւ մեծ յաղթութեամբ մը վիշտ լուծել. ուսափ 60,000 զօրքով և թնդանօթով կայսերականաց վրայ քաղեց և անոնց հասաւ Մոհագ դաշտին մէջ, ուր 160 տարի ա-

ուազ Օսմանեանք մեծ յաղթութիւն մը տարած էին
Հունգարաց վրայ : Սակայն այս անդամ պատե-
րազմին երբ բոլորովին տարրեր եղաւ . Լոթա-
րինգիայի դուքսն՝ որ նոյն ժամանակին ամենէն
երևելի ուազմագէտն էր, բոլորովին զարկաւ եպար-
գոսին բանակն . Օսմանեանք 20,000 հոգի կորու-
սին , ինչու նաեւ բանակին բոլոր գոյքերն ու
ժնդանօթնեղը (Ա օգոստ . 1687) : Այս յաղթու-
թեամբ Աւստրիացիք Թրանսիլվանիոյ տէր եղան .
Նոյնպէս Հունգարիոյ հարաւային կողմը մեծ մա-
սամբ իրենց ձեռքն անցաւ :

Հ . Ի՞շու համար գահնթէկց եղաւ ՍուլթանՄէհմենտ :

Պ . Զօրքն՝ այս ամեն գժբաղդութեանց պատ-
ճառն իրենց հարաւանատարին անկարութիւնն հա-
մարելով՝ սկսան առհասարակ տրտնջալ և գանգատ
գրեցին առ Սուլթանն , որ զանոնք գոհ ընելու
համար գլխատել տուաւ զեսպարքոսն և գլուխը
զօրաց զրկեց . սակայն ասով չկրցաւ չարեաց ա-
ռաջն առնուլ . զօրաց մեծ մասը պատերազմին
ասպարէզը թողլով՝ Կ . Պօլսոյ վրայ քալեց : Ցայն-
ժամ Քէօբրիւլի Մուսթաֆա փաշա տեղակալն
(գայմագամ) խորհեցաւ տէրութեան ազատու-
թեանն համար զոհել զՍուլթանն . ուստի իւլիմա-
յից ձեռամբ ծանոյց նմա թէ՝ այլ եւս դադրած էր
թագւորելէ : « Եղիցի կամք տեառն » ըսաւ Սուլ-
թան Մէհմէմէտ և իւր արքայական գահն վար
իջաւ : Նմա յաջորդեց իւր եղբայրը Ախլէյման Բ .
(Տ նոյեմ . 1687) :

ԳԼՈՒԽ ԺԶ.

ՍՈՒԼԹԱՆ ՄԻՒԼԵՅՄԱՆ Բ .

(1687—1691)

Հ . Ասսարիացիք եւ Վեճետիկցիք ի՞նչ ըրին Սուլ-
թան Սիրկյանն առաջին տարիները . Պէղկրատն ի՞նչ-
պէս կորուսին Օսմաննանք : Ֆրանսա ի՞նչ ըրաւ .

Պ . Սուլթան Ախլէյման , որ քառասուն և վեց
տարի պալատան մէջ փակուած անցուցած էր , ա-
կամայ և մեծ դժուարութեամբ ընդունեց արքա-
յական գահն . իւր գահակալութեան առաջին տա-
րին , զօրքը դարձեալ խոռովութիւն յարոց և զե-
պարքոսն սպաննեց : Իւլիմայք և ժողովուրդը մեծ
աշխատութեամբ հաղիւ կարողացան խաղաղել
խոռովութիւնը : Այս ներքին դէպքերէն Աւստրիա-
ցիք մեծապէս օգուտ քաղեցին . իրենց առջեւ որ-
եւէ արգելք չգտնելով՝ Հունգարիոյ ամեն կողմը
գրաւեցին , Դանուբ գետն անցան և Պէլկրատի-
անառիկ բերդն առին (1688) : Միեւնոյն ժամանակ
Վեճետիկցիք Մորայի մէջ տարածուեցան և Օս-
մանեան զօրքը Դալմատիայէն վանեցին : Բ . Դուռն՝
այս ամեն գժբաղդութեանց վերջ տալու համար
ուզեց հաշտութիւն կնքել , սակայն թշնամիք այն-
պիսի ծանր պայմաններ կ'առաջարկէին , որ Բ .
Դուռը չէր կրնար ընդունիլ :

Ֆրանսական կառավարութիւնն ուզելով զՍուլթանն փրկել այս դժմղակ վիճակէն , պատերազմ հրատարակեց Աւստրիոյ դէմ , և այս պատճառաւ կայսերական բանակին մեծ մասը Ռենոսի կողմը դրկուեցաւ : Այսու հանդերձ Յօմանեանք չկրցին այս առիթէն օգուտ քաղել , զի իրենց պաշտօնէից գլուխը կը գտնուէր անկարող մարդ մը : Նիշ , Վիտին հետզհետէ թշնամեաց ձեռքն անցան , որք մինչեւ իւսկիւալ յառաջացան և սկսան կ . Պօլսոյ սպառնալ :

Հ . Քհօրիիլի Մուսթաֆա փաշա ի՞նչպէս փրկեց տերութիւնն եւ ի՞նչպէս մնուա .

Պ . Այսպիսի ճգնաժամի մը մէջ էր որ Սուլթանը՝ տէրութեան աւագանւոյն խորհրդով՝ Եպարքոս անուանեց զՓէօրիիլի զատէ Մուսթաֆա փաշա , որ իւր գործունէութեամբն ու իմաստութեամբ քիչ ժամանակին ամեն ինչ կարդի դրաւ : Գիտնալով որ պատերազմին ջիզը՝ միայն դրամն է , քանի մը կարդադրութեամբք նախ տէրութեան գանձը լցուց . ապա ձեռնարկեց զօրաց մէջ բարեկարգութիւն մուծանելու : Հրաման կանեց որ՝ « Ով որ չուզեր իւր պարտքը կատարել և իւր կեանքը սկսութեան փրկութեան համար զոհել , թող իւր երկիրը վերադառնայ : Տէրութիւնը — կըսէր — միայն քաջ զինուորաց պէտք ունի և ո՞չ թէ վատ և ծոյլ զօրականաց » : Ասով զօրաց քառութեան ոգին վերատին արծարծեցաւ : Շատ մը ազատութիւններ շնորհելով Քրիստոնեայ հպատա-

կայ , անոնց սիրութ չահեցաւ : Մորայի Յոյներն , որք վենետիկցւոց կառավարութիւնէն տժդոհ էին , ինքնայօժար հպատակեցան Յօմանեանց :

Երբ այսպէս տէրութիւնն ի ներքուստ խաղաղեց և զօրացուց , բանակը շարժեց և կայսերականաց վրայ արշաւեց . Սեքենտով զօրավարին բանակը զարկաւ և նիշ , Վիտին , Սեմենտրիա և Պէլկրատ ետ առաւ Աւստրիացւոց ձեռքէն (1690) : Միւս կողմէ Թաթարաց խանը՝ Սէլիմ-Կիրայ՝ վերըստին նուանեց վՍերվիսա , և Թէքէլի ալ Թրանսիլվանիայէն վանեց Աւստրիական զօրքը : Միեւնոյն ժամանակ՝ Կիպրոսի և Եղիպտոսի մէջ ծագած ապատամբութիւնք զավուեցան :

Հետեւեալ տարին մեռաւ Սուլթան Սիւլէյման Բ . իւր գահը թողլով եղբօրն՝ Ահմէտ Բ . ի . (23 յունիս 1691) : Երկու ամիս յետոյ , Քէօրիիլիւ Մուսթաֆա փաշա եւս՝ Յօմանեանց ամենէն երեւելի եպարքոսը՝ պատերազմի դաշտին վրայ փառոք կնքեց իւր կեանքը : Սալանքեմենի քով կայսերական բանակին պատահելով՝ որուն կը հրամայէր Պատի սեպուհն՝ Լուգովիկոս , արխամիրտ եւ պարքոսը՝ զունդ մը քաջամարտիկ զօրաց գլուխն անցած և սուր ի ձեռին՝ յարձակեցաւ թշնամւոյն վրայ և յանկարծ զնտակէ մը զարնուելով ինկաւ մեռաւ : Յօմանեանք 30 000ի չափ զօրք կորուսին այս պատերազմին մէջ , որոյ վախճանը չկրցաւ տեսնել Սուլթան Ահմէտ և չորս մարդ թագաւորելէ յետոյ մեռնելով , իւր աթոռն և միանդա-

մայն պատերազմին շարունակութիւնն թողուց իւր
եղբօրորդւոյն Մոլոստափա Բ. Դ. (1695) :

ԳԼՈՒԽ ԺԵ.

ՍՊԻԼՓԱՆ ՄՈՒՄՓԱՅԱ Բ.

(1695—1703)

Հ. Օսմանեանք ի՞՞նչէս առիմ գՔիոս և Ռուսաց
դիմ ի՞՞նչ ըրին.

Պ. Սուլթան Մուսթաֆա՝ գահն ելածին պէս՝
անձամբ բանակին գլուխն անցաւ և նոր զօրու-
թեամբ սկսաւ պատերազմն յառաջ տանիլ, ի սկզ-
բան Օսմանեանց գէնքը թէ՛ ծովու և թէ՛ ցամաքի
վրայ յաջողութիւն գտաւ: Իրենց ծովակալը Քիոս
կղզին առաւ Վենետիկցւոց ձեռքէն. Թաթարք
Լեհաստան մտան և մինչեւ Լեհակիրկ ասպատակե-
ցին: Ռուսական բանակ մը՝ որ պաշարած էր զլողվ,
չարաչար հարուածեցաւ և 30,000 հոգի կորուսա-
նելով՝ հարկադրեցաւ պաշարումը բառնալ:

Հ. Սոլյթան Մուսթաֆա ի՞՞նչ ըրաւ կայսերական
բանակին դիմ. Զենքայի պատերազմն ի՞՞նչ ելք ունեցան.

Պ. Իսկ Սուլթանն՝ անձամբ կայսերական բա-
նակին վրայ երթալով՝ Լուկոսի առջեւ մեծ յալ-
թութիւն մը տարաւ անոր վրայ. Երկրորդ յալ-

թութիւն մ'ալ Սաքսոնիոյ կայսրընտիր իշխանին
վրայ տարաւ և կայսերական զօրաց հրամանառարը
բռնելով՝ գլխատեց: Այս բոլոր յաջողութեամց
լուրերը մեծապէս քաջալերեցին բովանդակ Օս-
մանեան ազդն: Ամեն կողմէ ինքնակամ նուէրներ
սկսան գալ բանակին, և շատ մեծ ամեծք զօրա-
գունդեր կազմաւորեցին իրենց ծախիւք:

Սակայն այս ամեն յաջողութիւնք յանկարծ ճա-
խողութեան փոխուեցան: Ռուսաք երկրորդ անդամ
պաշարեցին և առին զլողվ: Եւգինէա Սաւոյացի
իշխանն՝ Սւատրիական բանակին վերին հրամանա-
տար կարգուելով՝ քառասուն հազար զօրօք եկաւ
Օսմանեանց պատահեցաւ Զենդա քաղաքին քով,
մինչ սոքա՝ կամուրջ ձգած՝ Թայիս գետը կ'անցնէ-
ին: Հազիւ Օսմանեանց բանակին կէսը գետին
միւս կողմն անցած էր, Եւգինէա յարձակման հը-
րաման տուեաւ իւր զօրաց: Օսմանեանք գետ կար-
գի մտած չլինելով, շփոթեցան և սկսան կամուր-
ջին վրայէն ետ փախչէլ, որով բանակին միւս մասն
ալ շփոթեցին: Այս խառնաչփոթութեան մէջ Օս-
մանեանք 20,000 հոգի կորուսին, և 10,000 հոգի
ալ գետին մէջ թափելով՝ խեղդուեցան: Աստ
զարնուեցաւ ինկաւ նաեւ եսլարքոսն (1697):

Հ. Ի՞՞նչ ըրաւ Քէօրքիսի Հյուսիյին փաշա: Գար-
լովիձի խաղաղութիւնն ի՞՞նչ հնտեռանք ունեցան.

Պ. Գետութիւնը դարձեալ վասնգի մէջ էր,
սակայն Քէօրքիսի ցեղէն եսլարքոս մը նորէն
ազատարար հանդիսացաւ: Քէօրքիւլիւ Զատէ

Հիւսէ յին փաշա՝ արքունական կնիքն ընդունելով՝
անմիջապէս նոր բանակ մը կազմեց և անոր միջո-
ցաւ արդիւց թշնամոյն յառաջացումն։ Իւր ջա-
ղաւ դարձեալ լցուեցաւ տէրութեան գանձն, որ
նիւք դարձեալ լցուեցաւ տէրութեան գանձն, որ
բոլորովին դատարկացած էր. ապա հաշութիւն
առաջարկեց թշնամոյն։ Խուդովիկոս Ժ. Աւստրիա-
ցւոց ոխերիմ թշնամին՝ շատ աշխատեցաւ որ
Օսմանեանք պատերազմը շարունակեն, այլի գուրք։
Յունուար 26ին (1699) Գարլովիձի խաղաղութիւ-
նը կնքուեցաւ 25 տարւոյ համար, և այսպէս ամ-
բողջ Հունգարիա և Թրանսիլվանիա Աւստրիացւոց
ձեռքն անցաւ։ Օսմանեանք սահմանագլխոց վրայ
քանի մը տեղ միայն պահեցին։ Եհաստան վերստա-
քանի մը տեղ միայն պահեցին։ Եհաստանիցիք,
ցաւ իւր կորուսած երկիրներն, և Վենետիկցիք,
Մորայի կէսին և գրեթէ ամբողջ Դալմատիոյ տէր
Եղան։ Այս դաշնագրութեամբ վերցան նաեւ այն
տուրքերն, զորս Օսմանեանց կը վճարէին քանի մը
Քրիստոնեայ տէրութիւնք։

Օսմանեանք մեծապէս կարօտ էին այս խաղա-
ղութեան, զի տէրութեան ամեն կողմերն, Եգիպ-
տուս, Խըրըմ, Սրաբիա և բավանդակ Պարսից սահ-
մանն ասպատամբութեան մէջ էին։ Հիւսէ յին փաշա
եպարքուը՝ պատերազմի հոգերէն ազատեալ՝ բոլոր
ապստամբութիւնները խստիւ զագեց և վերսկսաւ
տէրութիւնն ի ներքուստ բարեկարգել։ Բայց իւր
ջանքն ապարդիւն ելաւ, զի իմանալով որ իւր ան-
ձին դէմ մեծ դաւագրութիւն մը կը նիւթուի,
պէս ժամանակ հրաժարեցաւ և քիչ ժամանակէն մե-
պաշտօնէն հրաժարեցաւ և քիչ ժամանակէն մե-

ուաւ։ Իւր մահուամբ դարձեալ սկսան խռովու-
թիւնք։ Ապստամբաց դէմ զրկուած զօրքն՝ անոնց
հետ դաշնակցելով՝ դահէն վար առաւ զլուլթան
Մուսթաֆա և նորա տեղը Սուլթան հռչակեց եղ-
բայրն Ս.Հ.մէտ Գ։

ԳԼՈՒԽ ԺՈ.

ՍՈՒԼԹԱՆ ԱՀՄԵՏ Գ.

(1703—1727)

Հ. Սուլյան Ա.հմէտ ի՞նչպէս զապեց ապստամբներն։
ի՞նչ պատճառու պատերազմ հրատարակեց Ռուսաց դէմ
եւ այս պատերազմ ի՞նչպէս վերջացաւ։

Պ. Սուլթան Ա.Հ.մէտ, իւր թագաւորութեան
առաջին տարիները, զի ջողովութեամբ և առատա-
ձեռնութեամբ ջանաց զօրաց սիրտը շահել։ Սա-
կայն տեսնելով որ այս միջոցներն եւս առաւելյան-
դուքն և խստապահանջ կը լնեն զանոնք, սկսաւ
խստութիւն ի գործ դնել։ Խուզարարաց պարտ-
գրլուխները մահուամբ պատժեց։ իսկ ապստամբ
գաւառները պատերազմաւ զապեց։

Ա.յս ժամանակս Ռուսաք՝ Շուէտաց Կարոլոս Ժ.։
թագաւորին վրայ մեծ յաղթութիւն մը տարած և
զայն պարտաւորած էին Օսմանեան հողն ապաւի-
նելու։ Ֆրանսայի դեսպանն և Թաթարաց խանը

համովեցին վԱռկթան Ահմէտ՝ Ոռուսից դէմ պատերազմ հրատարակելու և զԱրողս պաշտպանելու։ Պալթամի Մուլթաֆա փաշտ եպարքոսն՝ 200,000 զօրոք՝ զրկուեցաւ Ոռուսաց վրայ, և Բըրութ դետին մօտ անոնց պատահելով՝ զՄԵծն Պետրոս իւր ամբողջ բանակաւը պաշարեց։ Ոռուսք՝ առանց պաշարի և ռազմամթերի ամեն կողմէ պաշտուած՝ անշուշտ պիտի կորնչեին եթէ կաշառն իրենց օդնութեան չհասնէր։ Կատարինէ կայսրուհին լելով իւր ամուսնոյն վիճակը, դրամական մեծ գումար մը զրկեց եպարքոսին, որ ի չնորս այս կաշառին յանձն առաւ հաշտութիւն կնքել Բոռուսաց հետ և ազատ թողուլ զՄԵծն Պետրոս։ Օսմանեանք ձեռքէ հանեցին յաղթութիւնն, սակայն եպարքոսն այս դործին պատիժը կրեց, զի Մուլթանը պատօնանկ ըրաւ զայն և վեմնոս կղզին աքսորեց։ Իւր յաջորդն Եռուստք փաշտ փութաց քսանհինդամեայ զինադադար մը կնքել Բոռուսաց հետ։

Հ. Օսմանեանք ի՞նչպէս տիրնցին ամբողջ Մորայի.

Պ. Օսմանեանք երկար ժամանակէ հետէ կը բարձային բովանդակ Մորայի տէր լինել։ Տամատ Աալի փաշտ՝ եպարքոսական պաշտօնն ստանձնելով՝ ի գլուխ համեց այս երկարամեայ բաղձանքն։ Օսմանցիք կարձատեւ պատերազմով մը Վենետիկցւոց զօրքն արտաքսեցին Մորայէն, ինչպէս նաեւ կը րէտէի մէջ դեռ անոնց ձեռքը գտնուած քանի մը բերդերն եւս առին։

Հ. Սոհթանն ի՞նչ պատճառու պատերազմի եղան

Առատրիացոց դէմ։ Փաստարպիի խաղաղութեան պայմաններն ո՞յք են.

Պ. Վենետիկցիք կարողոս կայսեր օգնութեան գիմեցին, որ Մուլթանէն պահանջեց Վենետիկցւոց վերադարձնել իւր նոր առած երկիրներն, և երբ իւր պահանջումը մերժուեցաւ, երկու տէրութիւնք դարձեալ զէնք առին իրարու դէմ։ Օսմանեան զօրաց հրամանատար կարգուեցաւ Տամատ Աալի փաշտն՝ որ իւր վերջին յաղթութեամբք զինուորական մեծ համբաւ ստացած էր։ Խակ Աւատրիոյ կայսրն իւր բանակին հրամանատար անուանեց Եւգինէու՝ Սաւոյայի իշխանն, որ նոյն դարուն ամենէ երեւելի զօրավարն էր։ Երկու բանակներն իրարու ընդհարեցան Փեղերպարտայն բերդին առջեւ։ Օսմանեանք յաղթութիւնը կորուսին և թըշնամւոյն ձեռքը թողին 100 թնդանօթ և նոյնչափ դրօշակ։ Նպարքոսը՝ խառնուրդին ժամանակ՝ մեծ քաջութիւն ցուցուց և պատերազմի դաշտին վրայ փառօք մեռաւ։ Կայսերականք, այս յազդթութենէ յետոյ, Թմբշվարի բերդն առին և զՊէկրատ պաշտեցին և անոր օգնութեան համար զօրաբանակն ետ մլելով՝ գրաւեցին զայն (19 օգոստ 1717)։ Յաջորդ ասրույ յունիսին երկու տէրութիւնք հաշտութիւն կնքեցին ի Փաստարպիչ։ Կայսերականք՝ Թմբշվարի, Պէկրատի և Վալաքիոյ մէկ մասին մինչեւ Ալութա գետը տէր եղան։ Խակ Վենետիկցիք Ալպանիոյ քանի մը բերդերը պահեցին և Մորան միայն Օսմանեանց ձեռքը մնաց։

Հ. Օսմանեանք ի՞նչու համար արշակնացին ի Պարսկաստան . Սովորանք ի՞նչ կերպով գահընկց եղաւ .

Պ. Իպրահիմ փաշա եպարքուն ուղելով այս կորուստներուն տեղը ընուլ , քանի մը տարի յետոյ արշաւանք մ'ըրաւ ի Պարսկաստան , որ գահակալութեան կրիւներու պատճառաւ մեծ խոռվութեան մէջ ինկած էր : Քիչ ժամանակէն Համատան , Երեւան և Դաւրէժ իւր ձեռքն ինկան : Էշրէֆ Շահ՝ որ բռնութեամբ կորզած էր Պարսից արքայական գահն , յանձն առաւ Օսմանեանց գըրաւած երկիրներն իրենց թողուլ պայմանաւ որ զինքը թագաւոր ձանչեն Պարսից : Իւր այս առաջարկն ընդունուեցաւ և երկու պատերազմով հաշտութիւն կնքեցին : Սակայն Պարսից գահուն օրինաւոր ժառանդ Դահմազ Շահ՝ իւր նատըր Գուլի զօրավարին ձեռքով՝ յաղթեց Էշրէֆի , թագաւորական գահը գրաւեց և պատերազմ սպառնալով՝ պահանջեց Սուլթանէն ետքաշուիլ իւր առած երկիրներէն . միւս կողմէ Պարսկական բանակն , առանց սպասելու բանակցութեանց վախճանին , Օսմանեան հողը մտաւ : Ժողովուրդն և Եէնիչէրիք միաբերան պատերազմ պահանջեցին Պարսից գէմ , բայց Սուլթան Ահմէտ , տէրութեան գանձուն խընայելու համար , այնչափ յօժարութիւն ցոյց չէր տար այս պատերազմն սկսելու : Իսլահիմ փաշա , դրամ հայթայթելու համար , նոր տարք մը դրաւ ժողովրդեան վրայ : Այս տնօրինութիւն առաւել եւս զրգուց ոգիներն և Եէնիչէրիք՝ Իպրահիմին

գլխատումը պահանջեցին : Սուլթանն ստիպուեցաւ նոյա խնդիրը կատարել՝ աւելի մեծ չարեաց առաջն առնլու համար : Բայց այս բաւական չեղաւ . Եէնիչէրիք՝ Փաթրոնա Խալիլ անուամբ մէկու մ'առաջնորդութեամբ՝ արքունի սպալատը գնացին պաշարեցին և միաբերան սկսան աղաղակել . « Կեցցէ Սուլթան Մահմուտ » : Հարկ եղաւ Սուլթան Ահմէտի հրաժարիլ գահէն :



ԳԼՈՒԽ ՃԹ.

ՍՈՒԼԹԱՆ ՄԱՀՄՈՒՏ Ա . — ՍՈՒԼԹԱՆ
ՕՍՄԱՆ Դ .

(1730—1757)

Հ . Պարսկական պատերազմն ի՞նչպէս վերջացաւ .

Պ. Սուլթան Ահմէտի եղրօրդողին՝ Սուլթան Մահմուտ Ա . ապատահրաց կամօք՝ թագաւորական գահն ելաւ , և նախ անմիջապէս ձեռնարկեց մայրաքաղաքին խոռվութիւնն հանդարտելու : Ապա իւր զօրաբանները Պարսից գէմ զրկեց : Շահ Դահմազ՝ քանից յաղթուելով՝ ստիպուեցաւ խաղաղութիւն խնդրել . բայց այս հաշոռութիւն երկար չուեց : Նատըր Ապի զԴահմազ մերժեց գահէն , անոր որդին Ապահաս մանուկը թագաւոր դրաւ և

ինքն ալ՝ իրրեւ խնամակալ պետութեան՝ կառա-
վարութիւնն իւր ձեռքն առնլով՝ հաշտութեան
դաշինքն եղծեց, և եկաւ պաշարեց զՊալտատ:
Թօփալ Օսման փաշան 80,000 զօրօք յիշեալ քաղա-
քին օգնութեան հասաւ, Պարսից բանակը ցրուեց,
և այս կուռոյն մէջ Նասուը Ալի վիրաւորեցաւ:
Պարսիկը երկրորդ անգամ եւս յաղթուեցան, սա-
կայն ապա զօրանալով՝ Օսմանեան բանակը զար-
կին և խառնուրդին մէջ Օսման փաշան սպաննե-
ցին: Այս քաջ զօրավարին կորուստը մեծ վլաս-
տառոց Օսմանցւոց: դժբաղդութիւնք իրարու յա-
ջորդեցին և վերջապէս Բ. Դուռն ստիպուեցաւ
խաղաղութիւն խնդրել Նասուը Շահէն՝ որ Պար-
սից թագաւորութիւնն յափշտակած էր: Այս դա-
շամբք երկու տէրութեանց սահմաններն իրենց
առաջին պիճակին մէջ մնացին:

Հ. Ռուսական և Առարիական պատերազմին պատ-
ճառն ի՞ն էր.

Պ. Այն ինչ Ասիոյ կողմը պատերազմը վերջա-
ցած էր, հարկ եղաւ Օսմանեանց նոր պատերազմ
Մակարի: Ռուսք Խըրբմ և Ազով, Օրդափու և Պաղ-
չէսէրայ քաղաքներն առած էին: Աւստրիացիք,
դաշնակիցք Ռուսաց, միւս կողմէ գրաւած էին
զՍերվիա, Պունիս և Վալաքիա: Սուլթանին բա-
նակը նախ՝ Աւստրիացւոց վրայ քալեց և երկու
անգամ յաղթեց անոնց: Ռուսաց վրայ եւս քա-
նի մը յաղթութիւններ տարին Օսմանեանք և
անոնց նաւատորմն այրեցին: Պակայն յետոց Ռու-

սաց հրամանատարը Միւնիխ՝ բովանդակ Մոլու-
վիան գրաւեց: Յայնժամ Ֆրանսայի միջնորդու-
թեամբ երկու պատերազմող տէրութեանց միջեւ
հաշտութիւն կնքուեցաւ: Աւստրիացիք իրենց Սեր-
վիոյ մասը Պէլքրատին հետ, ինչպէս նաեւ Վալա-
քիան և Օրչովա քաղաքները Սուլթանին թողին.
իսկ Ռուսաք Ազովի բերդերը պիտի քանդէին և Սեւ
ծովու մէջ նաւատորմ չպիտի ունենային:

Հ. Սուլթան Մահմետին ո՞վ յաջորդեց ձև ո՞չափ
թագաւորեց.

Պ. Սուլթան Մահմուտ իւր թագաւորութեան
վերջին տարիները խաղաղութեամբ անցուց: Իւր
մահը մեծ տրամաւթիւն պատճառեց բոլոր ազգին,
զի իւր քաղցր բնաւորութեամբ և բարերարու-
թեամբն միլելի եղած էր ամենուն (13 դեկ. 1754):
Նմայաջորդեց իւր որդին Օսման Գ. որ միայն երեք
տարի թագաւորեց և անհաճոյ եղաւ իւր ժողո-
վորդեան: Իւր օրերը նշանաւոր գէպք մը չպա-
տահեցաւ և իրեն յաջորդեց իւր եղբայրը Մուս-
թափա Գ.:

ԳԼՈՒԽԻ Ի.

ՍՈՒԼԹԱՆ ՄՈՒՄԲԱՅԱ Փ.

(1757—1789)

Հ. Ի՞նչ բարեկարգութիւններ ըստ Սուլթան Մումբայա թափա .

Պ. Օսմանեան աէրութիւնը մեծ պէտք ունէր քանի մը ներքին բարենորոգմանց : Սուլթան Մուսթաֆա՝ գահն ենելուն պէս՝ ճանչեց այս պէտքն և սկսաւ ամենայն փութով ի դործ դնել հարկ եղած բարուքումները : Գլխաւորաբար տէրութեան ելմտական վիճակը բարուքեց՝ արքունիքն սկսեալ բոլոր աւելորդ ծախքերը ջնջելով : Զանայ նաեւ իւր զինուորական զօրութիւնն աւելցնել և զօրաց քաջութեան ողին արծարծել, վասն զի կը տեսնէր որ իւր սահմանակից տէրութեանց մէջ պատահած դէպքերը զինքն ի պատերազմ պիտի մղին : Ուուսք ժամանակէ մ'իվեր իրենց միջամտութեամբք և յարձակմամբ սկսած էին իրենց դրացի ազգաց վրաց բռնանալ . գլխաւորաբար Լեհաստան իրենց բռնութեանց ասպարէզն եղած և ընդէմ կարմաց ժողովրդեան՝ փոնեաթովսքի իշխանը թամաց գողովրդեան՝ գոնեաթովսքի իշխանը թամաց գումարած էր : Օսմանեանց և Ուուսաց միջեւ կաշինք կար թէ՝ Ուուսք բնաւ չպիտի խառնուէին դաշինքինք կար թէ՝ Ուուսք բնաւ չպիտի խառնուէին

Լեհաց թագաւորական ընտրութեան . այս պատճառաւ Սուլթան Մուսթաֆա բողոք բարձաւ և պատերազմ հրատարակեց Ուուսաց դէմ :

Հ. Ի՞նչ պատճառաւ եւ ի՞նչ կերպին սկսաւ Ռուսաց դէմ պատերազմ .

Պ. Առաջին թշնամութիւններն սկսաւ Թաթարաց լսանը՝ Քէրիմ Կիրայ, որ՝ Ուուսաց սահմանագըլուխն անցնելով՝ 25,000 հոգի գերի բռնեց և Պէնտեր բերաւ : Նոյն ժամանակ Կալիցին Ռուս զօրավարը Տնկեսթեր գետն անցած և Խոթումի բերդը պաշարած էր, սակայն բերդին հրամանատարին և Օսմանեան զօրաց քաջութիւնն ի գերեւ հանեց իւր բոլոր ջանքը, և հարկ եղաւ պաշարումը բառնալ : Քիչ ժամանակ ետքն Ուուսք նորէն եկան պաշարեցին զխոթում : Ալի փաշա եպարքուը Տընեսթեր գետն անցաւ և փորձեց յարձակմամբ առնուլ, բայց չկրնալով յաջողիլ, ալարգեց զխոթում և դէպի Դանուբը յետո նահանջեց : Կալլիցինի զօրքը Մոլտավիա և Վալաքիա մոտան : Միեւնոյն ժամանակ Ուուսական նաւատորմ մը միջերկրական ծով մտաւ և յոյներն ապստամբեցուց : Օսմանեանք չուտով զսպեցին այս ապստամբութիւնը, սակայն ծովացին պատերազմն աննպաստ եղաւ իրենց : Օսմանեան նաւատորմը Քիոսի մօտ չորս ժամ կրուեցաւ Ուուսաց նաւերուն հետ և երկու ծովապետաց նաւերն օդն ելան : Օսմանեանք՝ առանց ծովապետի մնալով՝ Զէշմէի նաւահանգիստը քաջուեցան : Հոն հասան Ուուսք իրենց նաւերով և նաւահանգիստը

պաշարելով՝ Օսմանեան նաւուց վրայ արձակեցին քանի մը կիզիչ նաւակներ, որք իրենց կրակը խիտ առ խիտ կեցող նաւուց հաղորդելով, հրդեհեցին զանոնք (7 յուլիս 1770): Ուռուք ապա դարձան պաշարեցին զԼէմնոս:

Հ. Էկմիածն կողին ի՞նչու ապատեցին Օսմանեանք. Դրաստամի մէջ ի՞նչ ըրբի.

Պ. Յամագի վրայ երկրորդ յազմթութիւն մ'ալ տարին Առուք՝ իրենց Ռումանցով զօրափարին հրամանատարութեամբ: Յաջորդ տարին Օսմանեանց զօրքն աւելի յաջողութիւն գտաւ: Հասան ալէյ մակոյիներով չորս հազար զօրք հանեց ի Էկմիածն Ուռուսաց զօրքը գարնելով՝ ստիպեց զանոնք բառնաւ զպաշարութեամբ: Նոյնպէս Տրապիզոնի առջեւ և Վրաստանի մէջ Օսմանեան զօրքն աւրեց Ուռուսաց զօրաբանակները: Միայն Տոփորուքի հշաման յաջողեցաւ տիրել Խրիմու՝ որ ինքնիշխան պետութիւն մը եղաւ Ուռուսաց պաշտպանութեան տակ: Յայնժամ Աւստրիոյ և Բրուսիոյ միջնորդութեամբ զինադադար մը կնքուեցաւ երկու պատերազմով կողմանց միջեւ, և տէրութեանց պատուիրակներն ի Ֆաքշան գումարուեցան խաղաղութեան վրայ բանակցելու համար, բայց Ուռուսաց տարապայմանն պահանջումներն ի դերեւ հանեցին տէրութեանց ջանքերն: Հարկ եղաւ դարձեալ ի զէն դիմել:

Հ. Օսմանեանք ի՞նչ հարռածներ տուին Ուռուսաց.
Պ. Արիասիրու Սուլթանն եւս առաւել աստկութեամբ յառաջ վարեց պատերազմն: Իւր զօրքը

մեծ հարուած մը տուին Ռուսաց՝ Ռուսանուգի առջեւ: Նոյնպէս Սիլիսդրէի քով մեծ յաղթութիւն մը տարին անոնց վրայ: Ուռուսք այս պարտութեանց վրէժն առին՝ Պաղարձըդի անզէն բնակիչներն սրէ անցունելով, առանց խնայելու ծերոց և աղայոց շանան վաշչա քաջ ձուապիտն՝ որ հեծելազօրաց գնդին կը հրամացէր, Գանուրին միւս կողմը վանեց Ուռուսաց բանակն և անոնց թնդանօթներն ու ապամամթերքն աւար առաւ:

Այսպիսի յաջողութեանց մէջ մեռաւ յանկարծ Սուլթան Սուլթափամ, երբ կը խորհէր անձամբ բանակն երթալ և զօրաց հրամանատարութիւնն ստանձնել:



ԳԼՈՒԽ ԻԱ.

ՍՈՒԼԹԱՆ ԱՊՏ-ԻԻԼ-ՀԱՄԻՏ Ա.

(1774—1789)

Հ. Ի՞նչ պատճառա Սուլթան Համիտ հաշտութիւն կնքեց Ուռուսաց հնաւ: Ի՞նչ էր հաշտութեան պայմանք:

Պ. Սուլթան Ապտ-իլ-Համիտ իւր եղբօր գահուն հետ ծանր բեռ մը ժառանգեց: Պաղտատ, Սուլթան և Ալպանիս կատարեալ ապստամբութեանց մէջ էին: Ուռուսք՝ իրենց վերջին պարտութեանց

ամօթը սրբելու համար՝ ահագին պատրաստութեամբ դարձեալ պատերազմի սկսան։ Առվարով և Ռումանցով զօրավարները վերստին Դանուբը անցան և Սամանեան բանակին ետեւն անցնելով՝ Վառնայի հետ անոնց հաղորդակցութիւնը կտրեցին։ Օսմանեան զօրքը զարհուրեցան, զի Վառնա իրենց բանակին զիսաւոր համբարանոցն էր, և սկսան ցրուիլ և փախչիլ։ Թէ միզ էֆ. փորձ փորձեց Եէնիչէրիները գումարել և թշնամույն դէմ տանիլ, սակայն անոնք զարկին սպաննեցին զինքն, Կարելի չէր այսպիսի ստահակ զօրքով պատերազմն յառաջ տանիլ և հարկ եղաւ հաշտութիւն խնդրել։ Երկու տէրութեանց պատուիրակները Պուլկարիոյ Քիւչիւք Գայնարձըդ քաղաքը գումարուեցան և անդ հաստատուեցաւ խաղաղութիւնն (21 յուլիս 1774)։ Սուլթանը՝ Խրիմու, Պուճագ Թաթարաց և Գուպանի անկախութիւնը ճանչեց, Կերչ, Եէնիդալէ և Սզով Ռուսաց տուաւ և Լեհաստանի բաժանման հաւանեցաւ։ Այս դաշնագրով Ռուսաց կայսրն արեւելեան քրիստոնէից վրայ պաշտպանութեան իրաւունք մ'ստացաւ, որ յետ ժամանակաց պատճառ եղաւ ահագին պատերազմի մը, ինչպէս յետոյ պիտի տեսնեմք։

Հ. Խըրըմ՝ Ի՞նչպէս բոլորովին Ռուսաց անցան։

Պ. Գայնարձըդի խաղաղութեան հետեւանքն շատ շուտ սկսաւ տեսնուիլ։ Ռուսաց գրգռութեամբ Խրիմու մէջ մեծամեծ խոռվութիւններ ծագեցան։ Տէօվէթ Կիրայ խանը գահնկէց եղաւ և նմայ յա-

ջորդեց Շահին-Կիրայ, որ ինքզինք Ռուսաց պաշտպանութեան ներքեւ դրաւ։ Թաթարաց աւագանին չուղեց ճանչել այս նոր խանը։ Շահին Ռուսաց օգնութեան դիմեց։ Խակոյն Փոթէմքին իշխանն 70,000 զօրքը Խըրըմ մտաւ, ապստամբաց գլխաւորները բռնելով մահուամբ պատժեց, և երկիրը բոլորովին նուածելով, ստիպեց զՇահին-Կիրայ՝ իւր իշխանութիւնը Ռուսաց Զարին թողլու։ Այսպէս Խըրըմ և Գուպան միացան Ռուսական պետութեան հետ։ Օսմանեան Սուլթանն ալ պարտաւորեցաւ հաւանիլ այս անիրաւ յափշտակութեան (1784)։

Հ. Ի՞նչ պատճառակ երկրորդ ամգամ պատերազմը բացունցաւ Ռուսաց դիմ։ Օսմաննաթը Ի՞նչ ըրիթ Արտարիացանց դիմ։

Պ. Երեք տարի յետոյ, Օսմանեանք՝ Անդիացւոց գրգռութեամբ՝ դարձեալ զէնք առին Ռուսաց դէմ (1787)։ Աւստրիա՝ որ Ռուսաց դաշնակից եղած էր ընդդէմ Թուրքիոյ, իւր բանակները զըրկեց և Պէլկատի բերդերը պաշարեց։ Սակայն Օսմանեան զօրքն անոնց յաղթեցին և բերդն ազատեցին։ Ասլա Դանուբին միւս կողմն անցնելով, մինչեւ Ղըմըշվար ասպատակեցին։ Այս յաղթութիւն մեծ օգուտ մը յառաջ չբերաւ, զի Ռուսք Խոթումի բերդն առին և Փոթէմքին՝ Օգզագովի տիրելով՝ բնակիչներէն 25 հոգի խժդժաբար ջարդեց։

Այս գժրաղղութեանց լուրը յոյժ տրտմեցուց զՄուլթան Համիտ և անոր մահուան պատճառ եղաւ (1789)։ Նմա յաջորդեց Եղբօրորդին Աէկիմ։

ԳԼՈՒԽ ԻԲ.

ՍՈՒԼՓԱՆ ԱԿՐԻՄ Պ.

(1789—1809)

Հ. Սովորան Սկիլմ ի՞նչպէս հաշտութիւնն ըրահ
Առարջացուց եռ Ռոռասց հնտ.

Պ. Յօմանեան պետութիւնը վտանգի մէջ էր
երբ Սուլթան Սէլիմ թագաւորական գահն ելաւ :
Տէր Տէրութեան գանձը բոլորովին՝ Խափուր էր : Եր-
կու հզօր թշնամիք՝ իւր սահմաններն անցած՝ օր-
բատօրէ յառաջ կուգային : Զկար բաւական զօրք
զանոնք կասեցնելով : Սակայն անակնկալ դէպք մը
զանոնք կասեցնելով : Յանկարծ փոխակը : Յովկէիք թ.
յանկարծ փոխեց իրաց փիճակը : Յովկէիք թ.
Աւստրիոյ կայսըր մեռնելով, իւր յաջորդը Լէորոլտ
Աւստրիոյ կայսութիւն կնքել Յօմանեանց հետ, որ-
փութաց հաշտութիւն կնքել Յօմանեանց կող-
պէս զի իւր բոլոր ուշադրութիւնը Ֆրանսայի կող-
մը գարձունէ, ուր զարհուրելի յեղափոխութիւն
մը մեծ վտանգ կսպառնար բովանդակ Ներոպիոյ :
Աւստրիական զօրագունդերուն գրաւած բոլոր եր-
կիրները Սուլթանին ետ տրուեցան և միայն կին
Օրշովան և Ռւեննա գետին եղերքը քանի մը տեղեր
Աւստրիացոց ձեռքը մնացին : 1790 օգոստ կին
Զիշթովի մէջ կնքուեցաւ խաղաղութեան դաշնա-
գերը : Թէեւ Ռոռաք այնուհետեւ եւս պատերազմը
շիշրունակեցին և Սուլարով զօրավարն առաւ իս-

մայիւ բերդն և Մաշինի քով ուրիշ յաղթութիւն
մ'ալ տարաւ Յօմանցւոց վրայ, սակայն Անդիկոյ և
Բրուսիոյ միջնորդութեամբ նոքա եւս հաշտութիւն
կնքեցին : Հաշտութեան գաշնագիրն 1792 յունվ.
9ին կնքուեցաւ Եազի մէջ, որոյ զօրութեամբ ըս-
տացան Ռոռաք՝ ամբողջ Խըրըմ, Թամանի թերա-
կըզին և Պետարապիոյ ու Գուպանի մէկ մասը :

Հ. Ի՞՞ն պատնառակ պատերազմ հրատարակեց Ֆը-
րանսայի դէմ եռ ի՞նչպէս հաշտութիւնն ըրահ .

Պ. Նոյն միջոցին Ֆրանսայի յեղափոխական կա-
ռավարութիւնն որոշեց արշաւանք մ'ընել յԵզիպ-
տոս : Պնմարարդ զօրավարն հզօր նաւատորմով մը
յանկարծ Աղէքսանդրիոյ առջեւ հասնելով՝ զօրք
հանեց ի ցամաք : Սուլթանն՝ այս լուրն առնելուն
պէս՝ պատերազմ հրատարակեց Ֆրանսայի գէմ և
Կ. Պօլայ Ֆրանսական գեսպանն Աէտիգուլէի մէջ
բանտարկեց : Աղպանից մէջ Ֆրանսացւոց ձեռքը
դտնուած Պութենթոյ և Բէրէկազ բերդերն, ինչ-
պէս նաեւ Յոնիական եօթը կղզիներն ետ առնուե-
ցան անոնց ձեռքէն : Թէեւ Պոնարարդ բովանդակի
վերին Եգիպտոսի աիրած և Յօմանեան զօրաբա-
նակ մը յրուելով՝ մինչեւ Աքեայի բերդին առջեւ
հասած էր, սակայն պահապան զօրաց հզօր ընդ-
դիմութիւնն և Անդիկական նաւատորմին թշնա-
մութիւնը ստիպեցին զայն ետ քաջութիւն : Պոնարարդ
Եգիպտոսէն վերադարձաւ ի Փարիզ : Իւր փոքրիկ
բանակն ալ չիրցաւ երկար ժամանակ Եգիպտոս
մաս և հարկագրուցաւ Ֆրանսա վերադառնալ : Ա-

միս մը յետոյ , Օսմաննեանք հաշտութիւն կնքեցին
ֆրանսական կառավարութեան հետ (1802) :

Հ . Ի՞նչ բարեկարգութիւններ ըրան Սովորած Սէջիւ .

Պ . Պատերազմի դադրելուն պէս , Սուլթան Սէ-
լիմ մեծ եռանդով ներքին բարեկարգութեան ձեռ-
նարկեց , և այս գործի մէջ իրեն մեծապէս օգնեց
իւր ժիր և խմաստուն եռաբրգուն՝ Քիւչիւք Հիւ-
սէյին փաշան : Տէրութեան բերդերը նորոգուե-
ցան , բազում պատերազմական նաւեր շինուեցան
և զինուրական վարժարանք առաւել եւս բարե-
կարգուեցան :

Սուլթանը մեծապէս կարօտ էր այս հաշտու-
թեան , զի իւր ըրած նոր կարգադրութիւնք ժո-
ղովրդեան մէկ մասին և գլխաւորաբար զօրաց մէջ
մեծ դժգոհութիւն պատճառած էին : Շատ կու-
սակալք պատճամբութեան դրօշ պարզած էին :
Թէ իէտէլէնլի Ալլի փաշան՝ Նանեայի մէջ բռնա-
ցած՝ դրամ կը կտրէր իւր անուամբ . Անդիմ՝ գէնք
առած՝ կը ջանար իւր անկախութիւնը վերստին
ձեռք բերել , Սակայն Սուլթան Սէլիմին ամենէ ա-
ւելի հոգ կը պատճառէր Նէնիչէրիններու ստահա-
կութիւնը , Վերջին պատերազմին մէջ յայտնի
երեւցած էր թէ՝ Օսմաննեան զինուց անցածողութեան
պատճառը գլխաւորաբար զօրաց անկրթութիւնն
ու անսաստութիւնն էր : Սուլթանն , այս պակա-
սութեան դարման տանելու համար , հրաման ըրաւ
նոր զօրագունդ . մը կազմելու Նիզամը ձհոյիտ ան-
ուամբ , որք Նւկուրական եղանակաւ պիտի կը թը-

ուէին : Այս անօրինութիւն մեծ դժգոհութիւն
պատճառեց Նէնիչէրիններուն , որք հետեւաբար
թէ՝ Կ . Պօլսոյ և թէ՝ գաւառաց մէջ անդադար
խռովութիւններ սկսան հանել :

Հ . Ի՞նչ պատճառակ Անջիական նաևստորմը կ .
Պօլս եկան եւ հօնչպէս վերադարձան .

Պ . Մինչ տէրութիւնն այս խռովութեանց հո-
գովն զրադած էր , Նարուկոն կայսրը դեսպան զըր-
կեց ի կ . Պօլս Սեպաստիանի զօրավարը՝ Ֆրան-
սայի և Թուրքիոյ մինեւ դաշնակցութիւն մը կըն-
քելու և զՍուլթանն Ռուսաց դէմ հանելու համար :
Սեպաստիանի յաջողութեամբ ի գլուխ հանեց իւր
պաշտօնն : Բ . Դուռն պատերազմ հրատարակեց
Ռուսաց դէմ : Անդիմ՝ որ Ռուսաց գլխաւոր դաշ-
նակիցն էր ընդդէմ Ֆրանսայի , ուզելով զՍուլթան
Սէլիմ ետ կեցնել այս պատերազմին , յանդուդն
գործի մը ձեռնարկեց : Իւր ծովալեալը՝ Լորտ
Տուրքորդ՝ պատերազմական ինն նաւերով անցաւ
Զանագ - Գալէի նեղուցէն առանց մեծ ընդդիմու-
թեան և կ . Պօլսոյ նաւահանգիստը մտաւ (20
փետր . 1807) : Օսմաննեան պաշտօնեայք զարհու-
րեցան և ուղեցին Անդիմոյ պայմաններն ընդունիլ .
սակայն կ . Պօլսոյ ժողովրդեան արիութիւնն և
Սեպաստիանիի հաստատամութիւնը՝ մայրաքա-
զաքն և Օսմաննեան պատիւն ազատեցին : Ֆրան-
սական դեսպանն՝ Սուլթան Սէլիմի ներկայանալով
համոզեց զնա որպէսզի ընդ փոյթ պաշտպանողա-
կան վիճակի մէջ դնել ասյ դկ . Պօլս : Խակոյն Ու-

պաստիանիի առաջնորդութեամբ ամեն ուրեք
սկսան մարտկոցներ շինուիլ . Սուլթանն իւր ներ-
կայութեամբ կը քաջալերէլ աշխատողներն : Հինգ
աւուր մէջ ամեն պատրաստութիւնք աւարտեցան .
Ինն հարիւր թնդանօթներ իրենց բերաներն ուղ-
ղած էին թշնամուցն վրայ . տասն պատերազմա-
կան նաւեր Վոսիորի բերանը շարուած կը կենա-
յին : Անգլիացի ծովագետը չհամարձակելով այս
ահազին պատրաստութեանց դէմ յարձակիլ , և
վախնալով որ Զանագ-Գալէի նեղուցը բոլորովին
կը գոցուի իւր նաւուց , լաւագյն համարեցաւ ետ
քաշուիլ :

Բայց շատ գիւրին չեղաւ իրեն երկրորդ ան-
գամ անմնաս անցնիլ նեղուցէն : Բներդերէն ար-
ձակուած ուումբերն իւր նաւ երէն երկուքն ըն-
կըլմեցին և 600 հոգի սպաննեցին :

Հ . Սուլթան Սկիլմ ի՞նչ կերպով գահընկց եղան
են ի՞նչ ըրահ Արևոտայ Մուսիթաֆա փաշան .

Պ . Կ . Պոլիս մեծ վտանգէ մ'ազտոած և իւրա-
քանչիւր ոք սկսած էր իւր գործովն զբաղիլ , երբ
ահազին նոր խոռովութիւն մը վեր ի վայր ըրաւ
մայրաքաղաքը : Սուլթանն ուղելով կրթեալ զօրաց
գունդերն աւելցնել , հրաման դրկեց Վոսիորի և
Զանագ-Գալէի բերդասլահ զօրաց , որպէս զի նի-
զամն Ճկնիտի համազգեստն հագնին և զինուորա-
կան կրթութիւն ընեն : Զօրքն ընդհանուր ապա-
տամբութիւն մը հանեց : Գապագճը Մուսիթաֆա
անուն յանդուզն անձ մը վերին Վոսիորի բեր-

գապահ զօրաց գլուխն անցած՝ Կ . Պոլսոյ վրայ
քալեց : Ապատամբաց հետ համամիտ էին Եէյս-
իւլ-Խոլամը և Խպարքոսի տեղակալ վաշան : Ապրո-
տամբք էլժմէ յոտանի հրապարակին վրայ դրին ի-
բենց բանակն և սկսան մի առ մի բռնել և սպաննել
նոր տնօրինութեան գլխաւոր կուսակիցներն : Այս
կոտորածին ժամանակ , կառավարութիւնը բոլորովին
անգործ կեցած էր , որով ապստամբք առաւել
եւս յանդգնեցան և որոշեցին գահընկէց ընել
նաեւ զՍուլթան Սէլիմ և նորա տեղ թագաւոր
հռչակել զՍուլթան Մուսիթաֆա՝ Ապտիւլ-Ղամիտի
որդին : Եէյս-իւլ-Խոլամն ապստամբաց այս որո-
շումը Սուլթանին ծանոյց : Սէլիմ առանց ընդդի-
մութեան վանդակը քաշուեցաւ : Յայնժամ Նիզամը
Ճկնիտի նոր գունդը բոլորովին ցրուեցաւ : Այս
գնդին ջնջումն և Սուլթան Սէլիմի գահընկէցու-
թիւնը մեծ ուրախութիւն պատճառեցին Եէնիչէ-
րիներուն :

Սակայն Ուուսձուգի կառավարիչ Ալէմուար
(Դրօշակիր) Մուսիթաֆա փաշա երբ լսեց իւր թա-
գաւորին և բարերարին եղած նախատինքը , 16,000
զօրքով փութաց Կ . Պոլիս եկաւ և թագաւորական
պալատը պաշարելով՝ իմացուց Սուլթան Մուսիթա-
Փայի թէ՝ աղգը Սուլթան Սէլիմի նման թագաւորի
մը կարօտ է , ուստի պէտք է որ ինքն առայժմ
երթայ վանդակին մէջ հանգչի : Եւ մինչ պատաս-
խանի կսպասէր , արքունեաց մէջ եղած անսովոր
աղաղակ մը ծանոյց իրեն թէ , ներսը քստմելի ո-

Ճիր մը կը գործուէր : Անմիջապէս պալատան դըռ-
ները խորտակել տուաւ և ներս վազելով՝ պահան-
ջեց արքունեաց սպասաւորներէն որ իրեն բերեն
զՍուլթան Սէլիմ : Որչափ մեծ եղան իւր զարկու-
րանքն ու վիշտն, երբ ներքինիք գորդի մը մէջ
դրուած բերին և իւր առջեւ նետեցին դժբաղդ
Սուլթանին դիակն : Յայնժամ Ալէմտար փաշա հը-
րամայեց իւր զօրաց, որպէս զի զՍուլթան Մուս-
թաֆա առնլով տանին փակեն իւր վանդակին մէջ,
և անոր Եղբայրը Սուլթան Մահմուտ Բ. գահը նըս-
տեցուց (28 յունվար 1808) :

ԳԼՈՒԽԻ ԻԳ.

ՍՈՒԼԹԱՆ ՄԱՀՄՈՒՏ Բ.

(1808—1839)

Հ. Մուսլիմաֆա փաշա ի՞նչպէս զայեց ապատանի
Եկմիջերիները .

Պ. Սուլթան Մահմուտի առաջին գործն եղաւ
եպարքոս անուանել զՄուսթաֆա փաշա, որ այս
պաշտօնն ստանձնելուն պէս՝ Սուլթան Սէլիմի ըս-
պանիչներն և ասպատամբաց պարագլուխները չա-
րաշար մահուամբ պատժեց, տէրութեան մեծ պաշ-
տօններն իրեն համախոհ անձանց յանձնեց և ա-
նոնց աջակցութեամբ Եէնիչէրիները բարեկարգելու-
ձեռնարկեց : Իւր գլխաւոր աջակցներն էին ծո-
վապետ Բամիզ փաշա և Գալրամանի կուսակալ
Գատը փաշա : Եէնիչէրիներու և ժողովրդեան մէ-
ջն առոյգ երկտասարդներ ընարուեցան և Սէլիմի
անուամբ նոր գունդեր կազմուեցան, որք սկսան
Եւրոպական եղանակաւ կրթուիլ :

Սակայն քիչ ժամանակ յետոյ թէ՛ զօրքն և թէ՛
մեծամեծաց մէկ մասն ու կարդացողք (իւլէմայք)
սկսան իրենց տհաճութիւնն յայտնել և վերահա-
շիոթութեան մը նշաններն սկսան երեւիլ : Եպար-
քոսն իւր պաշտպանութեանն համար միայն 16,000

զօրք ունէր, զորս Ռուսակուգին բերած էր իւր հետ,
ինչէս նաեւ Գատը փաշայի 3000 կիրթ զօրքերը:
իւր բարեկամներու խորհրդոց հակառակ, Մուս-
թաֆա փաշա իւր զօրաց 12,000ը Կ. Պօլսէն հե-
ռացուցած էր՝ իւր թշնամեաց զօրութիւնն առ
ոչինչ համարելով:

Հ. Եկեղեցիք ի՞նչ ըրին իրեն դև.

Պ. Նոյեմբեր 14ին (1808) Ենիշէրիք՝ յանկարծ
գէնք առնլով՝ եպարքոսին սակաւաթիւ զօրաց
փրայ յարձակեցան, որք կարճ ընդդիմութենէ մը
յետոյ ցրուեցան: Խոռովարաք յայնժամ եպարքո-
սին բնակարանը պաշարեցին և կրակի տուշին: Ա-
րքասիրտ փաշան տեսնելով որ այլ եւս ազատու-
թեան յոյս չկայ, ուզեց քաջութեամբ մեռնիլ: Իւր
պարտէզին ծայրը քարաշէն փոքրիկ աշտարակ մը
կար: Քանի մը հաւատարիմ մարդոց հետ հոն քաշ-
ուելով, ապստամբաց բազմութիւնն հրաւիրեց անոնց
ծանուցանելու համար որ կուզէ անձնատուր լինիլ,
և անդ գտնուած վառօդի տակառներուն յանկարծ
կրակ տալով, իւր թշնամեաց բազմութեան հետ
աշտարակին աւերակաց տակ թալուեցաւ: Մինչ
այս դէպքերն Եպարքոսին ապարանին մէջ տեղի
կունենային, ծովագետ Բամիզ և Գատը փաշաներն
ալ ապստամբաց հետ կը կուռէին և մեծ ջարդ
կուտային անոնց: Ենիշէրիք, այս կոտորածէն
ազատելու համար, քաղաքին շատ կողմերը կրակի
տուփին: Հրդեհը քիչ ժամանակի մէջ տարածուելով,
երկու կողմն ալ պարտաւորեցան կոիւը դադրեցնել:

Հ. Սովորամ Մանուս ի՞նչպէս վարուեցան Եկեղ-
էինաց նևս: Ռուսաց նև Ամպիլացոց նևս ի՞նչ էս
հաշտուեցան.

Պ. Ալէմտար Եպարքոսը, թշնամեաց յոյսը կըտ-
րելու համար, վանդակին մէջ սպաննել տուած էր
զԱռլիթան Մուսթաֆա, որով Սուլթան Մահմուտ
միակ ժառանդ մնացած էր Օսմանեան գահուն: Սուլթանն այս պարագայէն ոյժ առաւ առաւել
խստութեամբ վարուելու ապստամբաց հետ: Ի
սկզբան փորձ փորձեց քանի մ'անձինք զոհելով՝
խոռովութիւնները դադրեցնել և տէրութիւնը վը-
տանգէ ազատել: սակայն շուտով համոզուեցաւ որ
անկարելի է անսաստ զօրքն ի կարգ ածել: յայն-
ժամ միտքը դրաւ բոլորովին բնաջինջ ընել զանոնք:

Ցունվար 6ին (1809) Բ. Դրան և Անգլիոյ մի-
ջեւ հաշտութիւն կնքուեցաւ, բայց Ռուսաց հետ
խաղաղութիւն չկրցաւ կնքուիլ: Բագրատիոն իշ-
խանը մինչև Ալիխասորէ յառաջացած և նոյն բերդը
պաշարած էր: Բերդապահք քաջութեամբ դէմդը-
րին և պաշարումը բառնալու ստիպեցին զթշնա-
մին: Նոյն ժամանակները Ֆրանսայի կայսրը՝ Նա-
րուլիոն Պոնարարու՝ պատերազմ հրատարակեց Ռու-
սիոյ դէմ, որ այս պատճառաւ հարկադրեցաւ հաշ-
տութիւն կնքել Օսմանեանց հետ և խաղաղութեան
դանագիրն ստորագրեցաւ ի Պուքրէշ, 28 մայիս
(1812): Բրուդ գետն երկու տէրութեանց սահ-
մանագլուխ որոշուեցաւ: Մոլտավիա, Վալաքիա
և Սերվիա դարձեալ Օսմանեանց տրուեցան: Ռուսը

միայն Պետքարապիոյ մէկ մասն և Դանուբը գետին
բերանն իրենց ձեռքը սպահեցին :

Հ. Ասիոյ ապատամքը ճռ Վահապիթերն ի՞՞նչին
զապոնեցած .

Պ. Այս ժամանակս տէրութեան դաւառներէն
ոմանք ապստամբութեան մէջ էին . Զարան-օղու ,
Բազվան-օղու , և Գարա-Օսման օղլու ապստամբա-
պետները մէկմէկ կողմ բռնացած էին : Սուլթան
Մահմետ՝ արտաքին թշնամեաց հետ հաշութիւն
կնքելուն պէս՝ զէնքը ներքին թշնամեաց դէմ
դարձուց և մի առ մի նուաճեց զանոնք : Վահա-
պիներն Սրաբիոյ շատ տեղերը գրաւած և Մէքքէ
ու Մէտինէ քաղաքներուն տիրած էին : Սուլթանն
Եգիպտոսի Մէհմէտ Ալի փաշայի հրաման զըր-
կեց , որպէս զի երթայ ազատէ յիշեալ քաղաքներն :
Երիասիրտ փաշան՝ իւր որդւոց ձեռամբ՝ բոլորո-
վին յաղթեց Վահապիներուն և անոնց Շէյխը
բռնելով՝ Կ. Պոլիս զրկեց : Նոյնպէս Սերվիացիք՝
որ երկար ժամանակէ հետէ զէնք առած էին Օս-
մանեանց դէմ , հպատակեցան : Սուլթանը քանի
մ'ազատութիւններ շնորհեց անոնց և զՄիլը Օպ-
րէնովիչ Սերվիոյ իշխան անուանեց : Կը մնար մի-
այն Եանեացի Ալի փաշան , որ դեռ կը սպատե-
րազմէր տէրութեան դէմ : Սակայն իւր դէմ զրկե-
ուած զօրքը զինքը նուաճելու մօտ էին , երբ յան-
կարծ նոր փոթորիկ մը դարձեալ խսովութեան
մէջ ձգեց Սուլթանին տէրութիւնը :

Հ. Մորայի ապստամբութիւնն ի՞՞նչ կերպով սկսառ .

Պ. Ժամանակէ մը հետէ Մորայի Յոյնք իրենց
ազգը գիտութեամբ և ուսմամբ լուսաւորելու
պատրուակաւ զանազան ընկերութիւններ հաստա-
տած էին , որոց ներքին նպատակն էր ազգային
անկախութիւն ձեռք բերել : Բովանդակ Յոյն ազ-
գին թէ՛ եկեղեցական և թէ աշխարհական գրլ-
խաւոր անդամք մասնակից էին այս ընկերութեանց :
Եւրոպիոյ մէջ եւս շատ մարդիկ աջակից կը լինէին
յիշեալ ընկերութեանց ջանքերուն : Քիչ ժամանա-
կի մէջ Յունայ ազատութեան ոգին վառեցաւ և
ազգին գլխաւորք ասթի մը կ'սպասէին ազստամ-
բութեան դրօշը պարզեցւ : Այս առիթ շուտով
ներկայացաւ : Գունդ մը Նէնիչէրիք , որք Թէփէ-
տէլէնի Ալի փաշային դէմ կ'երթային , Պատրասի
մէջ աւարառութիւն և այլ անկարդութիւններ
գործելով , քաղաքացիք զէնք առին անոնց դէմ :
Այս եղաւ Յունական ապստամբութեան սկիզբն
(12 փետրվ. 1821) : Պատրասի արքեպիսկոպոսն
Նէրմանոս՝ 10,000 հոգւոց գլուխն անցած՝ սկսաւ
Օսմանեանց հետ զարնուիլ . սակայն Յուսուֆ փա-
շայի զօրքն շատ դիւրաւ ցրուեց այդ խառնիճա-
զանձ բազմութիւնը : Բայց ապստամբութիւնը քիչ
ժամանակի մէջ Մորայի ամեն կողմը տարածու-
ցաւ . նաեւ Մոլտավիա և Վալաքիա Յունայ օրինա-
կին հետեւեցան և տէրութեան դէմ զէնք առին :
Բ. Դուռը բուռն միջոցներ ձեռք առած էր՝ այս
ապստամբութիւնը զապելու համար . ամենուրեք
Յոյներն նէնիչէրիներու սուրին զոհ կ'երթային :

Կ. Պօլսոյ Պատրիարքն՝ իբրեւ մասնակից ապա-
տամութեան՝ ի կախաղան հանուեցաւ :

Պատրիարքին սպանութիւնն ի գործ դրուեցաւ
իբրեւ վրէմինդրութիւն այն խժդժութեան, զոր
ի գործ դրին Յոյնք Մէքքէի Նէրփին վրայ : Երբ
սա Կ. Պօլս կուգար իւր ընտանեօք, Յունաց ձեռ-
քըն ինկաւ, որ զինքն ու ընտանիքը չարաչար տան-
ջանօք սպաննեցին : Օսմանեանք ո՛չ միայն Պատ-
րիարքն, այլեւ ութսուն Եսլիսկուպոս և այլ Եկե-
ղեցականներ ի մահ դատապարտեցին : Եւրոպա-
կան և Ասիական դաւառաց մէջ շատ սպատամբ
Յոյնք ջարդուեցան :

Ս.յս ամեն խստութիւն չկրցաւ չիջուցանել ա-
պատամբաց վերին հրամանատարն՝ Ալէքսանտր
Խփոխանթի, Գոլովոթրոնի և Մավրոմիխալի և ու-
րիշ մի քանի պարագլուխք՝ Օսմանեանց դէմյա-
ջողութիւններ ունեցան, մինչդեռ այս վերջնոց
բանակին ընտիր մասն ապատամբ Ալի փաշայի
դէմ կը պատերազմէր : Սակայն երբ այս սպատամբ՝
Խուրիտ փաշային յաղթուելով՝ սպաննուեցաւ,
Օսմանեանք իրենց բոլոր զօրութիւնն Յունաց դէմ
դարձուցին, անոնց զօրագլուխները միառմի զար-
կին և ապստամբաց խումբերը ցիրուցան ըրին:
Յետ այս յաղթութեանց, Կորնթոսի տիրեցին և
Յունաց առժամեայ կառավարութիւնն, որ նոյն
քաղաքին մէջ էր, ստիլեցին նաւերու մէջ սպա-
տակիլ : Յամաքի վրայ թէեւ այսակէս կը շարունա-

կէին կոխւներն և յաղթութիւնն երբեմն մէկ և եր-
բեմն միւս կողմը կը միտէր, սակայն ծովու վրայ-
քանի մը քաջ Յոյն նաւապետներ և մանաւանդ
Թումպածիս, իրենց յանդուդն յարձակումներով
միշտ առաւելութիւն ունեցան Օսմանեանց վրայ,
անոնց քանի մը նաւերն այրեցին Միտիլիի առ-
ջեւ և Պատրաստի առջեւ ալ Օսմանեան նաւա-
տորմը ցրուեցին : Ս.յս կերպով պատերազմը շա-
րունակեց մինչեւ 1824: Եւրոպական ազգերը մե-
ծապէս կ'օգնէին Յունաց . շատ քաղաքաց մէջ կա-
մաւոր գունդեր կազմուեցան և գիտնական ու
զինուորական անձանց հրամանին տակ եկան պաշտ-
պանել Հելլենական խնդիրը :

Հ. Եղիպատիս զօրքն ի՞՞ծ ըրահ Մորայի միջ .

Պ. Սուլթան Մահմուտ տեսմելով որ իւր զօրքն
այս երկար և տաժանելի պատերազմէն կսկսի
ձանձրանալ, Եղիպատիսի կուսակալ Մէհմէտ Ասլի
փաշայի որդին՝ Խալիլի փաշան Հրովարտակաւ
Կրէտէի և Մորայի կառավարիչ անուանեց, նմա
յանձնելով Յոյները նուածելու գործն : Խոկյոն
15,000 հոգւոյ Եղիպատիս զօրաբանակ մը՝ Խա-
լիլի փաշայի հրամանատարութեամբ՝ Յունաստան
մտաւ, Կրէտէն հնազանդեցուց, ապատամբաց հը-
րամանատարները մի առ մի զարկաւ և Մորայի
շատ կողմերը գրաւեց : Եղիպատիս զօրաց յաղ-
թութիւններն՝ Օսմանեան բանակին հրամանատար
Ռէշիտ փաշայի ժամանակ տուին նորէն պաշարելու
Միտունկիի բերդն, զոր միանգամ պաշարած էր,

բայց չէր կրցած առնուլ։ Բերդապահք մեծ քաղաքամբ գէմ գրին, սակայն ի վերջոյ ստիպուեցան անձնատուր լինիլ։ Միսոլոնկիէն յետոյ Աթէնք եւս Օսմանեանց ձեռքն ինկաւ։ Ապստամբաց գլխաւորները, փոխանակ միաբանութեամբ գէմ դնելու թշնամւոյն, իրարու հետ կը կուռէին վերին իշխանութիւնը կորցելու համար։

Հ. Ագներմանի խաղաղութիւնն ի՞նչպէս հապտատունցան։

Պ. Յունական ապստամբութիւնը բոլորովին նըուածուելու վրայ էր, երբ երեք մեծ տէրութիւնք՝ Սնդիիա, Ֆրանսա և Ռուսիա՝ պատերազմողաց առաջարկեցին դադրեցնել թշնամութիւններն և խնդրոյն որոշումն իրենց թողուլ։ Եթու երկար բանակցութեանց, Սուլթան Մահմուտ ընդունեց Ադրեբանի դաշնադրութիւնն, որով Մոլոտիա և Վալաքիա իրենց առաջին աղատութիւնները վերըստացան Ռուսիոյ պաշտպանութեան տակ և Սերբակատու իշխանութիւն մ'եղաւ։ Օսմանվիա հարկատու իշխանութիւն մ'եղաւ։ Օսմանքանք Պէլկրատի և ուրիշ երկու բերդերու մէջ պահապան զօրք դնելու միայն իրաւունք պիտի ունենային։ Իսկ Յունական խնդրոյն կարգադրութեանն համար որոշուեցաւ որ Անդլիա և Ռուսիա բանակցին Բ. Դրան հետ։

Հ. Եկեղեցիք ի՞նչպէս չէլունցան։

Պ. Սուլթան Մահմուտ բարեպատեհ առիթն եկած համարեց իւր ի վաղուց ունեցած խորհուրդն ի գործ դնելու, այն է՝ իւր զօրաց մէջ Եւրոպ-

կան կրթութիւն մտցնել։ Սակայն սորա յաջողութիւնն անկարելի էր առանց Եէնիչէրիներուն ոյժը բեկանելու, ինչոքս փորձը քանիցս հաստատած էր։ Եէնիչէրիներն՝ որք երբեմն տէրութեան գըլխաւոր ոյժը կը կազմէին, ժամանակէ մը հետէ իրենց ապստամբութեամբք և անսաստութեամբ թէ՛ թագաւորական գահուն և թէ՛ ժողովրդեան վուանդ մ'եղած էին։ ո՛չ պաշտօնեայք և ո՛չ աղթագաւորն ինք զերծ էին անոնց բոնութենէն։ Սուլթանն որոշեց նախ Եէնիչէրիներու զօրագունդը բոլորովին ջնջել և ապա գործի ձեռնարկել, Պետաթեան աւագանին ի ժողով հրամարելով, իւր խորհուրդնիմացուց անոնց Ամենքը ճանշեցին Սուլթանին խորհրդին կարեւորութիւնն և միաբան տուին իրենց հաւանութիւնն, Յայնժամ Սուլթան Մահմուտ հրաման ըրաւ որ նոր զօրագունդեր կազմուին և Եւրոպական եղանակաւ կրթուին։ Եէնիչէրիք գործեալ այս նորութեանց դէմ ելան և ընդհանրապէս զէնք առնլով՝ եկան ժողովրեցան յէթմէյտան, ուր կը գտնուէր իրենց բուն զօրանոցն, և սկսան պահանջել որ այս նորութեանց հեղինակներն իրենց յանձնուին։ Սուլթանին համբերութեան չափը լցուած էր։ Անմիջապէս հրաման ըրաւ որ նորիրական գրօշը պարզուի, ժողովուրդն և իւրէմայք անոր քով հաւաքուին և միաբան երթան բնակչնջ ընեն այս ապստամբ զօրագունդը։ Զօրաց հաւատարիմ մասն և ժողովուրդը մեծ փութով ի գործ դրին իրենց Սուլթանին հրամանն, և

թնդանօթներն ու հրացաններն սկսան ամեն կողմէ կրակ տեղալ Ենիշէրեաց վրայ, որոց զօրանոցը բռնկեցաւ և սկսաւ այրիլ: Ապստամբները զարհուրեցան և տկար ընդդիմութենէ մը յետոյ սկսան առևասարակ փախչիլ: սակայն իրենց շըրջանակը բոլորովին փակուած էր, և նոյն տեղն ամենքն ալ իրենց արժանի մակը գտան: Յետ այնորիկ տէրութեան ամեն կողմն հրովարտակներ զրկուեցան, և ուր որ թագաւորին կամաց անսատողներ կային, մահուամբ պատժուեցան:

Հ. Յունական ինչիքն ի՞նչպէս առարտեցան.

Պ. Մինչեւ յայնժամ Յունաստանի խնդիրը դեռ չէր կարգադրուած. Անդլիա առաջարկեց որ մեծ տէրութիւնք միջնորդ լինին և խնդիրը կարգադրեն: Բ. Դուռը մերժեց զայս առաջարկ: Յայնժամ Անդլիա, Ֆրանսա և Ռուսիա վերջնագիր մը մատուցին: Բ. Դրան, և երբ այն ալ չընդունուեցաւ, երեք տէրութեանց նաւատորմերը Նաւարինի ծոռերեք տէրութեանց նաւատորմերը Եին Օսմանցը մտան, ուր խարիսխ նետած կեցած էին Օսմանցը եան և Եգիպտական մարտանաւերը: Դաշնակից նաւատորմն այս նաւերուն մեծ մասն այրեց ոըրբակոծութեամբ: Սուլթան Մահմուտ անմիջապէս բակոծութեամբ: Սուլթան Մահմուտ անմիջապէս բակոծութեանց դէմ պատերազմ հրատարակեք տէրութեանց կեց և բոլոր ազգն ի զէն կոչեց: Ռուսք նրութեց և բոլոր ազգն ի զէն կոչեց: Ռուսք նրութետն անցան և սկսան յառաջ խաղալ: Ֆրանսագետն անցան և սկսան յառաջ խաղալ: Անդլիկան զօրարանակ մը Յունաստան մտաւ և Անդլիկան ու Ռուսական նաւատորմերն ալ Զանսպակի նեղուցին բերանը պաշարեցին: Արիասիրու

Սուլթանը բնաւ չփատեցաւ այսչափ թշնամեաց բազմութենէն. սակայն տեսաւ որ իւր թերակիւրթ զօրքը կարող չէր Եւրոպական վարժ զօրաց և զօրավարաց դէմ մաքառիլ: Մորայի նուաճեալ քաղաքները դարձեալ թշնամեաց ձեռքն անցան և Խարտհիմ փաշա հարկադրեցաւ յԵրիպտոս վերադառնալ: Թէեւ Օսմաննեան զօրքը Սիկիստրէի առջեւ և Շումայի քով չարաչար զարկած էին Ռուսաց բանակները, բայց վերջապէս Ռուսաց վերին հրատանատարը, Տեպիչ կրցաւ Եպարքոսին բանակն ետ մլել, և Պալքաններն անցնելով՝ եկաւ գրաւեց վերտիանուալովիս, և իւր յառաջապահ գունդերը մինչեւ կ. Պօլսոյ շրջակայքն յառաջացան: Ասիոյ կողմն ալ Անարա և Բոթի՛ Ռուսաց ձեռքն անցած էին և Փասքեվիչ Կարնոյ ու Բարերդի տիրած էր, Սուլթանը տեսնելով որ այլեւս անհնար էր պատերազմը շարունակել, զինադադար խընդրեց, որպէս զի հաշտութեան պայմաններուն վրայ բանակցութիւն լինի: Բրուսիոյ տէրութիւնը՝ պատերազմողաց միջեւ միջնորդ եղաւ և 1829 սեպտ. 14ին հաշտութիւն կնքուեցաւ: Քանի մ'ամիս յետոց, Բ. Դուռը ճանչեց Յունաստանի անկախութիւնը (1830):

Հ. Օսմաննեանք ի՞նչպէս կորսացուցին զՃկայիր.

Պ. Նոյն տարին ձէզայիրն ալ կորուսին Օսմաննեանք: Այս երկիրն երկար ժամանակէ հետէ անուամբ միայն կը հապատակէր Սուլթանին: ձէզայիրցիք՝ ծովահենութիւն ընելով՝ սարսափ մ'եղած

էին միջերկրական ծովու վաճառականաց : Ամեն տարի բազմաթիւ նաևեր և հազարաւոր գերիներ իրենց ձեռքը կլինային : Գաղղիական կառավարութիւնն այս ծովասպատակաց բոյնը ջնջելու և միանգամացն անոնց Տայիէն (պէշ) իւր հիւպատուին կրտծ նախատանաց վրէժն առնլու համար, ձեզայիրի վրայ նաւատորմ մը զրկեց, ցամաք զօրք հանեց և ամրող երկիրը դրաւեց :

Հ . Եղիպատու Ի՞նչպէս ապստամինեցաւ եռ Ի՞նչ ըրտա .

Պ . Հազիւ տարի մ'անցած էր յորմէ հետէ Օսմանեանք՝ պատերազմներէ ազգատած՝ իրենց ներքին բարեկարգութեանց կ'զբաղէին, երբ նոր փոթորկ մը դարձեալ տակն ի վերայ ըրաւ պետութիւնն և Սուլթանին գահը մեծ վոտանդի մէջ ձըգեց : Եղիստոսի կուսակալ Մէհմէտ Յալի փաշա ժամանակէ մը հետէ կը խորհէր Օսմանեան հպատակութենէն ելնել՝ ինքնագլուխ պետութիւն մը կազմելու համար : Իւր զօրքն Եւրոպացի հրահանգիներու ձեռամբ քաջ կրթել տալէն և զնդիպտոս ամեն տեսակ բարեկարգութեամբք ի ներքուստ զօրացնելէ յետոյ, առթի մը կ'սպասէր իւր խորհուրդն ի գործ դնելու : Իւր և Աքեայի կառավարիչ փաշային միջեւ ծագած գժտութիւն մը այս առիթն ընծայեց իրեն : 50,000 հոգւոյ զօրաբանակ մը՝ իւր Խալիֆա արքիամբ՝ Սուրբի արշաւեց, և Նավա ու Գաղաքաղաքները գրաւելէ յետոյ եկաւ պաշարեց զԱքեա : Սուլթան Մահմուտ՝ սոյն արշաւանաց լուրն եա :

առնլուն պէս՝ հրաման զրկեց Մէհմէտ Ալի փաշային որպէս զի անմիջապէս ետ կոչէ իւր բանակն և խնդրոյն որոշումն յանձնէ պետական առենին : Սակայն փաշան չուղեց հնազանդիլ այս հրամանին . յայնժամ Սուլթանն ապստամբ հրամարակեց զայն և Հիւսէյին փաշա բանակաւ մը նորա վրայ զրկուեցաւ : Եղիստոսի բանակին հրամանատար Խալիֆա ամրակիմ փաշա զարկաւ Օսմանեան բանակն . նոյն պէս Հալէպի փաշային յաղթեց և Գամանսկոսի տիրեց : Բէշիա փաշայի հրամանատարութեամբ Օսմանեան նոր զօրաբանակ մը զրկուեցաւ Եղիստուցոյ գէմ : Այս զօրավարն արիութեան հետունէր նաեւ զինուորական բաւական հմտութիւն, սակայն իւր թերակիրթ զօրքովը չկրցաւ մաքառիլ Եղիստոսի քաջակիրթ զօրաց հետ : Գոնեայի քով Խալիֆա փաշայի զօրաբանակին հետ ընդհարած միջոցին, իւր զօրաց ցրուիլն ու փախչիլ տեսնելով, սուր ի ձեռին թշնամեաց բազմութեան վրայ յարձակեցաւ և ամէն կողմէ պաշարուելով գերի բռնուեցաւ : Խալիֆա փաշա այս յաղթութենէն յետոյ մինչեւ Գոնեա յառաջացաւ : Յայնժամ Ռուսիա իւր աջակցութիւնն առաջարկեց Օսմանեանց և այս երկու տէրութեանց միջեւ Հիւնքեար Խոկէէսիի գաշնագրութիւնը կնքուեցաւ : 15,000 Ռուսական զօրք Կ . Պօլիս եկան՝ Եղիստուցոյ գէմ պաշտպանելու համար զայն :

Հ . Ի՞նչպէս եղաւ Մծբեի պատերազմք .

Պ . Անդիւս և Ջրանսոն՝ այս միջամառութենէն

վախնալով, իրենք միջնորդ եղան և երկու կողմն իրարու հետ հաշտեցուցին: Մէհմէտ Սալի իւր զօրքն ետ առաւ Փոքր-Ասիային: Աքեայի, Հալէպի, Դարավլլուսի և Դամասկոսի կուսակալութիւններն իրեն տրուեցան և իւր որդին Յտանայի կուսակալ անուանեցաւ: Այս հաշտութիւն երկար չտեսէր: Պաղեստինի մէջ ծագած խռովութիւնք և այս: Պաղեստինի մէջ ծագած խռովութիւնք և Առւրիոյ մահմետական բնակչաց դժգոհութիւնք դարձեալ պատճառ տուին թշնամութեանց: Անդիս և Ռուսիա ալ միւս կողմէ կը յօրդորէին զվութանն որպէս զի պատերազմ հրատարակէ Եգիպտոսի գէմ, մինչ Ֆրանսա յայտնապէս Եգիպտոսի կողմը կը բռնէր: Օսմաննեան բանակ մը դէպի ի Սուրբիա յառաջ քալեց: Իսլամիմ փաշա Եփրատայ միւս կողմը կեցած կը դիմէր իւր հակառակորդին միու կողմանց միջնէ բանակցութիւն մը տեղի ունեցաւ: Մէհմէտ Սալի կը պահանջէր որ ձեռքը սկսած, երշարժումը: Տակաւին թշնամութիւնք չսկսած, երկու կողմանց միջնէ բանակցութիւն մը տեղի ունեցաւ: Մէհմէտ Սալի կը պահանջէր որ ձեռքը սկսած, երկիրներուն կառավարութիւնը ծառանդութեամբ իւր գեղին մնայ: Բ. Դուռն Աքեայի և գութեամբ իւր ցեղին մնայ: Բ. Դուռն Աքեայի և Տրիպոլոյ դաւառաց համար միայն կը հաւատնէր այս առաջարկութեան, և կը պահանջէր որ Մէհմէտ Սալի փաշա իւր զօրքերն ետ կոչէ Առւրիոյ միւս առաջարկութեան: Մէհմէտ Սալի յանձն չսառաւ այս գաւառներին: Մէհմէտ Սալի յանձն չսառաւ այս առաջարկն և ինքինք Օսմաննեան տէրութենէն առաջարկն և ինքինք Օսմաննեան տէրութենէն անկախ հրատարակելով, տուրք տալը դադրեցուց: Յայնժամ երկու զօրքանակներն սկսան յառաջ Յայնժամ երկու ընդհարութեան Մծրին քաղաքին իւրաղալ և իրարու ընդհարեցան Մծրին քաղաքին

Քով: Օսմաննեան զօրքը ցրուեցաւ՝ իւր թնդանօթները թշնամոյն ձեռքը թողլով (29 յունիս 1839): Սուլթան Մահմէտը՝ դեռ այս պարտութեան լուրը չէր առած՝ երբ մահն զինքն յափշտակելով՝ իւր գործունեայ կենաց վերջ տուաւ:

ԳԼՈՒԽ իգ.

ՍՈՒԼԹԱՆ ԱԳՏ-ԻՒԼ-ՄԷՋԻԾ

(1839—1861)

Հ. Ի՞՞շպէս ապատահնեցաւ Օսմաննեան նահատարմ: Երս մնօ տէրութեանք ի՞նչ կերպով միջանուցին Սուլթանին և Եղիպտոսի փաշայի ինդրոյն:

Պ. Սուլթան Մահմէտին երէց որդին՝ Ապտիւլ-Մէճիս՝ Օսմաննեան գահն ելնելով՝ եպարքոս անուանեց զինիւրէվ փաշա, և անոր աջակցութեամբ սկսաւ մեծ պատերազմի մը պատրաստութիւն տեսնել: Բայց մեծ արտմութիւն պատճառեց իրեն՝ իւր նաւատորմին ապատամբութիւնն, զի ծովակալ Ահմէտ փաշա՝ եպարքոսին անհաջող թշնամին լինելով՝ բոլոր նաւերն առաւ և Եգիպտոս տարաւ Մէհմէտ Սալի փաշային յանձնելու համար: Բէկե պատերազմական պատրաստութիւնք ամենայն փութով կը շարունակուէին, սակայն Բ. Դուռը կը խորհէր Եգիպտոսի փաշային պահանջ-

մանց զիջանիլ։ Զորս մեծ տէրութիւնք՝ Աւըստ-
րիա, Անգլիա, Իռուսիա և Բրուսիա՝ իրենց մի-
ջեւ դաշնակցութիւն մը կազմելով, համոզեցին
զՍուլթան Սպոտ-իւլ Մէծիտ, որպէս զի բան մը չընէ
առանց իրենց գործակցութեան և իրենց խորհըր-
դով առաջարկուեցաւ Մէկմէտ Ա.ալիի որ գոհ ինի
Եղիպտոսի փոխարքայութեամբ, որք ժառանգու-
թեամբ իրեն և իւր որդւոց պիտի տրուէր, իսկ
Սուրբոյ երկրին մէկ մասը միայն իւր կենդանու-
թեան ատեն իւր ձեռքը սիտի մնար և ապա Օս-
մանեանց պիտի յանձնուէր։ Միայն թէ ինքն ան-
միջալէս իւր զօրքն ետ պիտի կոչէր այն ամեն
երկիրներէ զորս գրաւած էր։ Փաշան Ֆրանսայի
օգնութեան ապաւինելով՝ չընդունեց այս առա-
ջարկն։

Հ. Անգլիա և Առարիա ի՞նչ ըրիմ Եղիպտոսի դեմ։
Պ. Յայնժամ Անդլիական նաւատորմ մ'եւ 8000
հոգւոյ Աւստրիական զօրաբանակ մը Սուրբոյ ծո-
վեցին երեւեցան։ Եգիպտոսկան նաւատորմն այ-
լվեցին երեւեցաւ և Աւստրիական զօրքը ցամաք ելնելով, ծո-
րեցաւ և վեցերեայ քաղաքները մի առ մի առին և Եգիպ-
տական զօրքը վանեցին։ Ա.քեայի բերդն, ուր հա-
տական զօրքը վանեցին։ Ա.քեայի բերդն, ուր հա-
տական նաւատորմէն ումբակոծուելով աւերակ
Անգլիական նաւատորմէն կարգութիւնն առաջաւ։ Անգլիացի ծովապետը՝ Նարիէ անտի Ա-
դարձաւ։ Անգլիացի ծովապետը՝ Նարիէ անտի Ա-
դարձան որպանորիոյ առջեւ գնաց և վերջնագիր մը լըր-
իկեց ապաւամբ փաշային (27 նոյեմ. 1840), որպէ-
ս Եգիպտոս միայն յորդւոց յորդի ժառանգութեամբ

իրեն կը թողուէր՝ Օսմանեան Սուլթանին գերիշ-
խանութեան ներքեւ։ Եթէ այս առաջարկը չըն-
դունէր, իւր իշխանութեանէն բոլորովին պիտի
զրկուէր։ Մէկմէտ Ա.ալի փաշա, սոյն սպառնալ-
եաց առջեւ պարտաւորեցաւ ընդունիլ այս պայ-
մանն և հաշտութիւնն կնքել։ Տէրութիւնք ապա
յուլիս 15ի (1841) գաշնալբութիւնն ստորագրե-
ցին, որ Օսմանեան պետութեան համար յոյժ շա-
հաւոր եղաւ, զի նախ Մէկմէտ Ա.ալի փաշայի պա-
հանջումները նուազեցաւ և երկրորդ՝ Վասիրի և
Զանագ-Գալի նեղուցները փակեց ամեն ազգաց
մարտանաւերուն դէմ։

Հ. Ռուսական պատերազմին պատնառն ի՞նչ էր։

Պ. Սուլթանը մի կողմէ պատերազմական գործո-
ղութեամբ զբաղած ժամանակ, միւս կողմէ չմոռ-
ցաւ երջանիկ ընել իւր հպատակներն։ 1839 նոյ.
3ին կայսերական նոր կարգադրութիւն մը (թան-
գիմաթ) հրատարակուեցաւ ի Կիւլչանէ ի ներկա-
յութեան գեսպանաց և տէրութեան բարձրաս-
տիճան պաշտօնէից, որով Սուլթանը կենաց և ըն-
չից ապահովութիւն կուտար իւր ամեն ազգի հը-
պատակաց, տուրքերը ըստ կարողութեան կը սահ-
մանէր, և ամեն զօք օրինաց առջեւ հաւասար կը
հռչակէր առանց կրօնի և աստիճանի խորութեան։
Այսպիսի իմաստուն կարգադրութեամբ պետու-
թիւնն օրըստօքէ յառաջդիմելու վրայ էր, երբ յան-
կարծ փոքր խնդիր մը մեծ պատերազմի մ'առիթ
եղաւ։ Երուսաղէմի նուիրական տեղեաց պատճա-

ուռ ի վաղուց հետէ Լատինաց և Յունաց միջեւ գժութիւնք անպակաս էին : Օսմանեան Սուլթաններն առանձին հրովարտակներով Լատինաց տուած էին այս տեղերն ընդ պաշտպանութեամբ Ֆրանսայի , թէեւ միւս Քրիստոնեայ ազգերն ալ ազատ էին իրենց ուխտերը նոյն նուիրական տեղեաց մէջ կատարելու : Ֆրանսայի վերջին յեղափոխութենէն յետոյ , Յոյնք Ռուսաց տէրութեան օգնութեամբ այս տեղերն հետզհետէ առին Լատինաց ձեռքէն : Ֆրանսական կառավարութիւնն 1851 ին ծանուցագիր մը տուաւ Բ . Դրան , որով կը պահանջէր որ Երուսաղիմայ մէջ Լատինաց ձեռքէն առնուած նուիրական վայրերն իրենց ետ տրուին : Ռուսիոյ կառավարութիւնն ասոր ընդդիմացաւ և առիթէն օգուտ քաղելով՝ ուղից իւր գարաւոր խորհուրդն իգործ դնել , այն է՝ Օսմանեան պետութեան մէջ իւր ազգեցութիւնն աւելցնել և այսպէս տակաւ առ տակաւ դիւրացնել նոյն երկրին գրաւումք : Կը կարծէր թէ Եւրոպական տէրութիւնք՝ վերջին յեղափոխութիւններէն տկարացեալ չէին կարող իրեն արգելք լինել :

Մայիս 5 ին (1853) Մէջնչիքոփ իշխանը Կ . Պոլիս եկաւ և Ռուսաց կայսեր կողմէ Բ . Դրան մատոյց ծանուցագիր մը , յորում կայսրը կը պահանջէր որ ինք Օսմանեան պետութեան բոլոր Յունացաւան ազգաց և Երուսաղիմայ նուիրական տեղեաց պաշտպան ճանչուի : Հինգ օր միայն պայմանաժամ կը տրուէր այս ծանուցագրոյն պատաս-

լսանելու : Բ . Դրուք մերժեց այս յանդուգն պահանջումն իրրեւ բոլորովին վնասակար իւր անկախութեան : Յայնժամ Ռուսաք դեսպանական յարաբերութիւնները խզեցին և իրենց բանակները Մոլոավիա և Վալաքիա մտնելով գրաւեցին : Սուլթանն անմիջապէս իւր պատերազմական յայտարարութիւնն հանեց և սպարապետ Էօմէր փաշայի հրամաններ տրուեցու թշնամութիւններն սկըսելու :

Հ . Օլթէնիցայի մէջ ի՞նչ ըրին Օսմաննեանք . Ռուսք ի՞նչպէս այրեցին Օսմաննեան նահատորնն .

Պ . Ռուսաց ծրագիրն էր Վիտինի վրայ յարձակիլ և անտի Նիշի և Սոֆիայի ճանապարհաւ Պալգան լերանց միւս կողմն անցնիլ . Օսմաննեան սպարապետն անոնց միտքն հասկնալով , աճապարեց Վիտինի դիմացն անցաւ և զՊալաֆաթ գըրաւելով սկսաւ ամրացնել , և Օլթէնիցայի քով եղեք օր թշնամոյն հետ կրուելով մեծ ջարդ տուաւ անոր : Երբ Գալաֆաթի ամրութեանց ըլնութիւնն աւարտեցաւ , իւր բանակաւը գարձեալ Դանուրի աջ եղերքն անցաւ , զի Վիտին այնուհետեւ կրնար թշնամոյն յարձակմանց դէմ դնել : Պատերազմական գործողութիւնք սկսած էին նաեւ Ասիոյ կողմն , ուր Ռուսք քանի մը փոքր յաջողութիւններ ունեցան : Նախիմով ծովակալը նոյ . 30 ին յանկարծ յարձակեցաւ Օսմաննեան նաւատորմին վրայ , որ Ախնուլի նաւահանգստին մէջ խարիսխ նետած էր , և տասներկու նաւեր այրեց : Յայ-

Ժամ Սուլթան Ապտ-իւլ-Մէհմիտ Անգլիոյ և Ֆրանսայի աջակցութիւնը խնդրեց :

Հ. Դաշնակից տէրութիւնը հ՞նձ ըրփէ Ռուսաց դէմ.

Պ. Այս երկու տէրութիւնք, որոց նաւատորմէրը Պէշիբայի ծոցին մէջ խարիսխ նետած՝ պատերազմին ընթացքը կը դիտէին, սեպտեմ. 27 ին (1854) վերջնագիր մը տուին Ռուսաց պահանջելով որ Մալտավիայէն և Վալաքիայէն դուրս ելնեն. Եթէ իրենց առաջարկը մերժուէր, անմիջապէս պատերազմ պիտի հրատարակէին : Միեւնոյն ժամանակ այս երկու տէրութիւնք Բ. Դրան հետ պաշտպանողական և յարձակողական դաշնակցութիւն մը կնքեցին, որով Սուլթանին իրաւանց պաշտպանութիւնը կ'ստանձնէին :

Դանուբի վրայ պատերազմական գործողութիւնք կը շարունակէին, և մերթ մին, մերթ միւս կողմն յաջողութիւն կը գտնէր : Որուսք իրենց յատակագիծը փոխելով՝ Կալացի քովին դետն անցան և զջոպրոճա գրաւելէ յետոյ Արիխարէի բերդը պաշարեցին : Իերդապահք մեծ քաջութեամբ դէմ դնելով, թշնամոյն բոլոր յարձակութիւնն ետ մըղեցին : Սակայն ի վերջոյ տկարանալով՝ կը խորհէին անձնատուր լինիլ, երբ Անգլիական և Ֆրանսական նաւատորմերուն մերձենալն և Աւստրիական գօրաց շարժումն ստիպեցին Ռուսները բառնալ զալաշարումն և փութով Դանուբեան իշխանութիւններէն դուրս ելնել, զորս Աւստրիացիք եկան գրաւեցին հաւանութեամբ Բ. Դրան (20 սեպտ. 1854) :

Հ. Ի՞՞նչ կերպով զալուեցան Ցունաց ապառաժռութիւնները .

Պ. Որուսք նուիրական կերպարանք մը տուածէին այս պատերազմին, այնպէս ցոյց տալով թէ Յունական կրօնքը բարձրացնելու համար զէնք առած են : Այս ակնկալը թեամբ Նալիրոպի, Թեսալիոյ և ուրիշ գաւառաց Ցոյներն սկսան ապատամբական շարժումներ ընել : Հելլեն կառավարութիւնն եւս սկսաւ մեծ պատրաստութիւն տեսնել և կամաւոր զօրաց գունդեր պատրաստեց : Սակայն Ֆրանսական զօրաբանակ մը՝ Պիրէոն և Աթէնք քաղաքները գրաւելով և զրովանդակ Ցունաստան պաշարման վիճակի մէջ հրատարակելով, Հելլենացիք ստիպուեցան հանդարտ մնալ : Ապատամբարութիւնք շատ շուտ զալուեցան :

Հ. Խրիմն արշականքն ի՞նչ ելք ունեցան .

Պ. Ֆրանսական և Անգլիական բանակաց լնդհանուր հրամանատարներն որոշեցին Խրիմն վրայ երթալ, Սեփաստափոլ պաշարել և Ռուսաց նաւատորմը ջնջել : Այս բերդաքաղաքն, յետ միամեայ պաշարման, Մալաքովի ամրոցին գրաւմարն դաշնակցաց ձեռքն ինկաւ (8 սեպտեմ. 1855) : Նոյն տարւոյ մէջ Ռուսք՝ Ալբայի, Պալագլավայի, Խնքերմանի և Դրաքթերի ճակատամարտները կորուսած էին : Եւփաթորիայի քով Օսմանեան սպարապետ Խօմէր փաշա մեծ յալթութիւն մը տարածէր անոնց վրայ : Աէվաստափոլի ամրոցները քանդուած էին դաշնակցաց թնդանօթներէն, և Որուսք

իրենց ձեռամբ իրենց նաւերուն մէկ մասն այրած
և մէկ մասն ալ ընկղզած էին։ Այս ամեն կորուստ-
ներու փոխարէն Ռուսք միացն Կարս քաղաքը կըր-
ցին առնուլ։

Հ. Ի՞՞ հպէս հաշտուեցան պատերազմող տէրութիւննը .

Պ. Բեդրապուրկի կառավարութիւնը տեսնելով
որ այլ եւս անհնար էր իրեն պատերազմը չարու-
նակել, հաշտութիւն խնդրեց, որ 1856 մայիս 30-ին
կնքուեցաւ ի Փարիզ, Աւստրիա և Բրուսիա խա-
զաղութեան դաշնագիրն երաշխաւորեցին, յորում
մեծ տէրութիւնք՝ Օսմանեան տէրութեան ամրող-
ջութիւնը կ'ատահովէին և նեղուցները դարձեալ
կը փակէին բոլոր տէրութեանց մարտանաւերուն
առջեւ։ Ռուսաց և Օսմանցւոց արգիլուեցաւ զին-
որական նաւարաններ շինելի Սեւ ծով, և Մոլ-
տովիոյ, Վալաքիոյ և Սերվիոյ վրայ Ռուսաց ու-
նեցած պաշտպանութեան իրաւունքը ջնջուեցաւ :

Փարիզի դաշնագրէն մինչեւ Սուլթան Ապտ-
իւլ-Մէծիտի մահը (26 յունիս 1861) տէրութեան
մէջ նշանաւոր դէպք մը չպատահեցաւ ի բայ առ-
եալ լիբանանու խոռվութիւնն և Գարատաղի պա-
տերազմն, որք հետեւանք մը չունեցան :



Սուլբան Ապտ - իւղ Մէջիտի մահուանեն յետոյ,
մինչեւ մեր ժամանակները պատահած այլ եւ այլ
դեպքերն արդեն ժամանակակից լինելով, հարկ զի
համարեցինք զրել այս մատենիկիս մէջ, բողով
բաներորդ դարու պատմագրաց սովոր պատմու-
թեան շարունակութիւնը :

Ստորագրութիւնս չի կրող օրինակներն անկառնք են:

6232

Թ 5825

0002088

12013

ՀՀ Ազգային գրադարան



NL0002088

